



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

**ՇԱՐ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐԱՑ.**

**ԹՈՎՆԱ**

**ՄԵԾՈԲԵՑԻ**

**1860 ՓԱՐԻԶ ՈՒԹ.**

## AVIS

Thoma, supérieur du couvent de Metzobe dans la Grande-Arménie, vécut au xv<sup>e</sup> siècle et composa nombre d'ouvrages utiles, entre autres le récit des excursions et des ravages commis en Arménie et dans les pays environnans par Tamerlan, ce monstre sanguinaire; l'auteur, tombé plus d'une fois au pouvoir des lieutenants du farouche Tartare, et ayant éprouvé lui-même fréquemment les horreurs de la captivité, des persécutions et du fanatisme mahométan, a tracé l'histoire des malheurs de l'Arménie chrétienne avec les larmes plutôt qu'avec l'encre. Thoma est le septième dans l'ordre des auteurs de notre Galerie historique arménienne, que nous venons de mettre sous presse.

Nous n'avions en notre possession, en le publiant, qu'un seul manuscrit, d'ailleurs fort correct et complet; un autre manuscrit ayant les mêmes qualités, se trouvait à la bibliothèque impériale de Paris; nous nous en sommes servi en le comparant avec le nôtre, pour expliquer quelques obscurités et signaler, dans les notes, les variations des deux ouvrages.


C'est dans ces conditions que nous offrons au monde savant le septième volume de la galerie historique arménienne si féconde et si utile à la connaissance de l'*histoire générale* universelle de l'Asie tout entière.

G. V. CHAHNAZARIAN,

Paris, le 1<sup>er</sup> Juin 1860.  
Rue de l'Ouest, 86.

---

Paris. — Imprimé par E. THUOT ET C<sup>°</sup>, rue Racine, 28.



# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց

ԱՐԱՐԵԱԼ

ԹՈՎՄԱ. ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԵԾՈԲԵՑԻՈՅ

Ի լոյս ընծայեաց հանդերձ ժահօթոքեամք

Կարապետ Վարդապետ Շահնազարեան՝ միաբան  
աղբոյ Հրմիամնի եւ Անդամ Տեսարց Լազարեանց կայսե-  
րական ձեմարանին որ ի Մուկվայ :



Ի ԳՈՐԾԱՏԱՆ Կ. Վ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Bayerische  
Staatsbibliothek  
München

# ԹՈՎՄԱՎԱՐԴԱԳԵՏ ՄԵԾՈՒԹԵՑԻ

ԵՒ ՊԱՏՄԱԳԻՐՔ Ի Ի Ր .

Յեւ ՃՇ դարուն ծաղկեցան ի մեծն Հայս, մանաւանդ, շուրջ զծովական Ա անայ այլ եւ այլ կուսաստանը ուր ժողովեալ հոգեսէր և գրասէր վանականաց կրթէին զանձինս յառաքինութիւնս հոգեւոր եւ ի մտաւոր : Մի ի սրբարանաց աստի էր վանքն Մեծորայ ի սահմանս Արճէ քաղաքի նուիրեալ սուրբ կուսին Ա ստուածածնի : Թովմա էր յԱղիովիտ գաւառէ եւ ի Քաջրերունեաց գեղջէ, որ միաբանեալ Մեծորայ վանից՝ ձեռնադրեցաւ վարդապետ . եւ երեւելի հանդիսացաւ յուսումնասիրութեան եւ ի մշակութեան Ա ւետարանին և գործակից եզեւ փոխադրութեան հայրապետական աթոռոյն մերոյ ի Սայ ի Սուրբ Էջմիածին : Գտաւ ի ժողովն Վաղարշապատու յամի 1441 ուր Կիրակոս Վիրապեցի ընտրեցաւ Լաթողիկոս նորոգեալ աթոռոյն : Ա ստղադարի եւ թել պատմութեան տառապանաց Հայաստանի, զոր սկսեալ էր արձանագրել հեղինակ մեր ի յիսներորդ ամի կենաց իւրոց . որ եւ եօթն ամօք

զկնի հանգեաւ ինքնին ի Քրիստոս՝ յոյսն հաւատացելոց, այսինքն է ի 1448 ամի Տեառն :

Թովմա թէեւ կարդայ զգիրս իւր պատմութիւն Լանկ-Թամուրայ. այլ առ համեմատութեամբ գրելոցն ի Շերեֆ-Խղինայ այլաղդւոյ, կարի համառօտ է իւրն : Վասն զի այլազգի պատմագիրն գրեաց մանրամասնարար զծագմանէ բռնաւորին Լանկ-Թամուրայ, զսոսկալի կոտորածոց նորա ի Պարս, ի Հնդիկս, ի Բաղդատ, ի Դամասկոս, ի Ռուսիա, ի Հայաստան, ի Վիրս, ի Թուրքաստան, և յերկիրս Ղպչաղաց առ Վոլգայիւ և Դօնիւ. իսկ Թովմա զայն ամենայն հարեւանցի յիշեալ Ընդարձակագոյնս խօսի զաւերմանց, զգերութեանց, զսպանութեանց վիրագին այնմիկ յաշխարհի մերում, զորովք զանց արարեալ էին մեծաւ մասամբ օտար գրիչք. յայս սակս կարեւոր է յոյժ մատենիկս առ ուսումն տոհմային սպատմութեան մերոյ :

Տպագրութիւն մատենիս եղեւ երկուց օրինակաց համեմատութեամբ, յորոց զմին զգուշաւոր խնամօք օրինակեալ էի ես ինքնին ի մատենաղարանի Արբոյ Աջմիածնի, զմիւսն ետ ինձ կայսերական գրատումն Գաղղիոյ զոր ստացեալ էր ինքնին յՈւխտէն ալատուեալ Հարց Միսիթարեանց Վենետիկոյ արարեալ համեմատութեամբ չորից օրինակաց : Տարբերութիւնն, իբրեւ գրչութիւն, դոյզն իմն էին ընդ եր-

կուս օրինակս. այլ Թովմա, իրրեւ պատմագիր,  
տարածայնի ոչ սակառ ի վէպս իւր, յայլազգի պատ-  
մագրաց, յորոց զկարեւորսն նշանակեցի ի ծանօ-  
թութիւնս ի վերջ կուսէ գրոցս :

Թովմա Մեծորեցի որ ի 400 ամաց հետէ սլահուր  
ի խորշ գրատանց, ծանօթացաւ Եւրոպիոյ զատա-  
ջինն ի ձեռն Պարոն Նեվի ( զոր չեղեւ ինձ տեսա-  
նել երբէք ): Ես եւս ընծայեմ արդ ի լոյս զրնադիրն  
նորին ունելուլ ի մտի, եթէ Տէր յաջողեացէ, թարգ-  
մանել զայն ի բարբառ գաղղիական :

Զերկայն խորագիրն « պատմութիւն համառօտա-  
րար վասն արեւելեան թագաւորացն՝ պղծոյն եւ  
շար գազանին Լանկ-Թամուրայ եւ այլոցն, զոր  
արարեալ է քաջ վարժապետն Թովմա վարդապետո  
համառօտեցի « ի պատմութիւն Լանկ-Թամուրայ և  
յաջորդաց իւրոց արարեալ Թովմա վարդապետի  
Մեծորեցւոյ » : Զայլազգի բառս վարեալ յայս  
մատեան բացատրեցի հայկականօքն :

Կարապետ Ա. Շահնազարեան :

1 Յունիսի 1860 :

Պարիս :



# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՆԿ-ԹԱՄՈՒՐԱՅ(1)

ԵՒ ՑԱԶՈՐԴԱՑ ԻՒՐՈՑ

Պա՛րտ է գիտել ուսումնասիրաց և բանասիրաց  
անձանց զի ժամանակն բաժանի յերեք՝ յանցեալն,  
ի ներկայն և յապառնին : Եւ վարդապետաց եկե-  
ղեցւոյ պիտոյ է վասն երիցն գիտելոյ. վասն անցե-  
լոյն պատմել վասն ներկային խօսիլ վասն ապագային  
իմանալ և զգուշացուցանել : Նմանապէս և մեզ  
պա՛րտ է սակաւ մի համառօտարար վասն ներկայիս,  
զոր ի մերում ժամանակիս եղեւ, պատմել զոր չար  
թագաւորքն անհաւատք Արեւելից կորուստ բերին  
Հայկաղեան սեռիս ի վերջին ժամանակիս, և ամե-  
նայն օտարացեղ ազգաց ցուցանել :

Արդ՝ այր մի Թամուր-լանկ անուն, դաւանու-  
թեամբ և օրինօք պղծոյն Մահմետի՝ նեռին կարա-  
պետի, յայտնեալ երեւեցաւ ի յարեւելս և ի Ամըր-  
ղանդ քաղաքի, անողորմ, անգութ, անագորոյն,  
լցեալ ամենայն չարութեամբ, պղծութեամբ և հնար-  
իւք բանսարկուին սատանայի : Զոր ոմանք ի Արրա-

փու (2) ասեն գոլ զնա, որ ի գաւառն կոդովիտ՝ մերձի  
լեառն Մասիս ուր տապանն է ։ Նոյի և մերձի յԱր-  
տաղ գաւառ : Որ գնացեալ ի Թաւրէղ . և Ղանո-  
րէիցն (3) յղեալ զնա առ ի քէշիկս (պահակ) պահել  
զթշնամիս ի ճանապարհին Խորասանու : Եւ նորա  
ելեալ անտի գնաց ի Խորասան . և անտի անցեալ  
զգետն Զահուն . և ընթացեալ ի Ամրդանդ քաղաքն  
Արեւելից . և տեսեալ անտերունչ զաշխարհն ամե-  
նայն, եղեւ աւազակապետ և գլուխ մարդասպանից :  
Եւ ժողովեցան առ նա ոգիք հինդ հարիւր հնգետա-  
սան (4) աւելի՛ կամ պակաս՝ չար և նման ինքեան :  
Եւ երթեալ դաղտագողի ի յանդաստան քաղաքին  
եւ յափշտակեալ զերամակ նոցին՝ առեալ գնացին :  
Եւ իշխանք քաղաքին ելեալ զհետ նոցա պատերազ-  
մել . եւ նոցա յետս . դարձեալ սլատերազմեցան .  
հարին զնոսա և սպանին . և մտեալ ի քաղաքն՝ առին  
զտէրութիւն քաղաքին , եւ զկին նորա Խանում  
անուն տիկին նորին . և սակաւ սակաւ զօրացեալ  
էառ զբուխարոյ քաղաք . եւ անցեալ յայնկոյս  
Զահուն գետոյն և մտեալ յերկիրն Խորասանու՝  
առնոյր զբազում քաղաքս նոցա և կոտորէր սրով  
զամենեսին : Եւ ահ և երկիւլ անկեալ ի վերայ նո-  
ցա՝ ետուն զաշխարհն ի ձեռու նորին :

Եւ նա զոմանս խարէր սուստ կաշառօք, ոմանց  
երդնոյր, զոմանս որդեգիրս առնոյր, ոմանց զջըս .

տերս իւր ի կնութիւն տայր, և դատերօքն սպանա, նէր զվեսայսն : Որ և (էառ) զՀրէ քաղաքն թագաւորանիստ. ետ զդուստր իւր իշխանի նոցա, եւ կացեալ զաւուրս ինչ առ նա՛ սպան զայր իւր սրով. և յղեաց առ հայրն գալ առնուլ զբաղաքն. և նորա գնացեալ էառ և արար քաղաք թագաւորական :

Իսկ իշխան ոմն Շահ-Մանսուր (5) անուն ընդում կացեալ նմա աւելի քան զութն ամ. և ոչ տայր ի նա զՇիրազ, զՔիրման և զԱստրահան : Եւ ալիղծն Թամուր խաղաղութիւն արարեալ ընդ նմա, եւ հնարիւք յետս դարձեալ ընդ Արեւելս. և Շահ-Մանսուրն դեսպան և աղերս առաքեալ նմա բազում յոյժ : Եւ նորա տեսեալ զեկեալ դեսպանն՝ սուտ հիւանդ անկեալ, ետ բերել գառն մի, և զենին զնա, և էարբ զարիւն գառինն : Եւ հրամայեաց կոչել ըզ դեսպանն ի մէջ բազմութեանն, և եցոյց զդէմս կերպարանաց իւրոց իրրեւ զմեռելուի : Եւ ետ բերել զանօթ սպնձի և դարձոյց յետս զարիւն գառին առաջի ամենայն բաղմութեանն : Եւ եկեալ դեսպանին տեսեալ՝ յոյժ ուրախ լինէր ի միտս իւր, եւ ասէ. այսօր և վաղիւն սատակի : Եւ ի զիշերին այն միկ ելեալ ի ձի (6). և հասեալ առ Շահ-Մանսուր իշխանն և ամենայն աշխարհին ետ աւետիս ուրախութեան. և արայիշ մեծ արարին այսինքն է հանդէս : Եւ ամենայն մարդիկ աշխարհին, որ կային ի նեղու-

թեան, ի քաղց, ի ծարւաւ և ի վտանգ տադնապին՝ ելեալ յրուեցան յիւրաքանչիւր բնակութիւնս ու տի եկեալ էին :

Իսկ չարահնարն Թամուր պատրաստեաց զզօրս իւր. և զերից և զչորից աւուրց երթեալ ճանապարհն ի միում աւուր՝ եկեալ հասանէր ի դուռն քաղաքին։ Եւ ի պատերազմ ելեալ ի վերայ նոցա՝ ի սակաւ աւուրս կոտորեցին եւ յառնուշ թերին զամուրս նոցին։ Իսկ արին Շահ-Մանառուր սրտապնդեալ սպառագինեաց զզօրս իւր 800 (7) ոգի։ Յանկար ծակի բացեալ զդուռն քաղաքին, և մտեալ ի մէջ անթիւ և անհամար գնդին մինչ զի հասին ի նոյն տեղին, ուստի Թամուր ժողովեալ էր զամենայն գունդ Արեաց հեծելին։ Եւ վերացուցեալ զսուրն իւր ի վերայ զիխոյ սատանայի զաւակին. և զօրացն սպարապիւակ արարեալ՝ ոչ կարացին սպանանել զպիղծ վիշապն անդնդային։ Այլ շրջապատեալ զօրաց նորին՝ զամենեսեան առ հասարակ կոտորեցին սրով. և այսալիս առին զամենայն աշխարհն Խորասանու՛ գիւահը քաղաք, զԽորասան, զՇիրազ, զՔիրման, զԱսպահան, զՆիւշապուհ, զԿուսան, ըզ Մակուրան, զԹառա, զԹանջան, զԹամզան, զՄազանդարան, զՌիէ, զՂազուին, և հասին մինչ ի Սութանիա ի սահմանս Ատրալատականին Թաւրիզու։ Եւ Եղիլ անուն Սուլթանիոյ իշխանին գնաց.

եալ ընդ առաջ նորա գանձուք և թագաւորական ազերսիւք՝ հաշտութիւն արար ընդ նմա :

Եւ ղանն Թաւրիզու սուլդան Ահմատն ելեալ գնաց փախստական ճանապարհաւն Ռշտունեաց Ռստանու, առաջնորդութեամբ ամիրային Մարաց Եզդնայ ի Բարիլոն քաղաք, որ այժմ Պաղտատ կոչի, առ ազգականս և զօրս իւր. զի ի նոյն ժամանակին և նոյսա տիրէին : Իսկ Եզդիլն ասացեալ առաջնորդեալ Թամուրին ի Թաւրէզ քաղաք՝ ետ ի ձեռս նորին : Եւ գաղտագողի խորհուրդ արարեալ ընդ զօրս իւր կամէր սպանանել զլանկն և զկաղն (8) Թամուր ի բաղանիս քաղաքին : Եւ մի ոմն իմացեալ զխորհուրդն՝ ծածուկ եկեալ առ նա ասէ զդաւ նենգութեան Եզդի աղային : Եւ նորա գիտացեալ յլեալ կոչեաց զնա. և հուր ետ վառել. և եղին կենդանուոյն ի պղնձի սան եւ եփեցին առաջի նորա եւ ամենայն բազմութեանն. և այնպէս կորուսին զնա :

Դարձեալ և այս գիտելիքէ. զի նախ քան զգալ Թամուրին ի յաշխարհս մեր, ի 835 թուականին թագաւորն հիւսիսոյ Թօխթամիշ անուն՝ տէրն Ռուսաց և Աղախի, որ նստէր ի Մարայ մերձ ի Ղրիմ, առաքեաց գեսպան առ զանն Թաւրիզու սուլդան Ահմատ անուն՝ որդի Օսիսին, վասն սիրոյ և խաղաղութեան. իսկ նա չար և. պիղծ գործովք խայտառակեաց զնա : Եւ դեսպանն գնացեալ առ նա՝

պատառեաց զօձիսն իւր առաջի նորա : Եւ նա բար-  
կութեամբ լցեալ առ ինքն կոչեաց զիշխան մի  
Ճանիրէկ անուն, և ետ բաղում զօրս ի ճեռա նորա :  
Եւ նա դրամբն Ալանաց եւ Դարբանդի եկեալ ի  
վերայ նորա : Եւ նա խոյս ետ ի նմանէ և եկն յՈւ-  
տան. և անտի գնացեալ ի Պաղտատ : Եւ զրքն  
կիւսիսյ պաշարեցին զԹաւրէզ, և առուրս եօթն  
պատերազմեալ առին զԹաւրէզ. զբաղումս սպանին,  
զբաղումս կողոպտեցին և յաւարի առին զամենայն  
գաւառս նորին : Եւ անտի չուեալ ի Նախմուան  
քաղաք և յամենայն երկիրն Ախմեաց՝ երկոտասան  
գաւառս աւերեցին. զբաղումս սպանին և գերեցին :  
Եւ էին յաւուրս ձմերայնոյ : Իսկ ի հրամանէն Աս-  
տուծոյ յանկարծակի ձիւն սաստիկ եկն ի վերայ  
նոցա յաւուր Յայտնութեան Տեառն մերոյ. եւ բա-  
զումք զերծան ի զերութենէ նոցին : Եւ զբաղում  
մասն աւարին ի բաց ընկեցեալ՝ գնացին յաշխարհն  
իւրեանց նոյն ձանապարհաւն, ուստի եկեսլ էին  
անասնաբարոյ աղգն Թաթարաց որ Տօղտօղան (9)  
կոչէին՝ խաղաղութիւն արարեալ երկրին Շամախուոյ  
վասն զի բացին զբուռն Ալանաց խաղաղութեամբ  
ընդդէմ նոցին :

Իսկ ի սոյն ժամանակի էր երջանիկ և երանելի  
վարդապետն Հայոց Յովհաննէս՝ մականուն կախիկ  
կախեալ ի սէրն Աստուծոյ՝ գոյով ի գաւառէն Որոտ-

նոյ ի գեղջէն Վաղանդնու՝ որդի մեծի իշխանին  
Խվանի, որ էր ի զարմէ առաջին իշխանացն Ակւ-  
նեաց, յորմէ Վասակն էր, զոր չարախօսեցին առաջի  
Պարսից թագաւորին Յաղկերտի թէ՝ զհօրեղբայրն  
մեր Վաղինակ սպանեալ է, յոյժ իմաստուն և գիտ-  
նական հին և նոր կտակարանաց, լուծիչ Աստ-  
ուածաշնչոյ նրբից եւ արտաքնոց, յաշակերտուց  
մեծին Եսայեայ և Տիրատրոյ վարդապետուց մերոց։  
Որ (10) ժողովեաց առ ինքն զբազում աշխակերտու-  
յամենայն գաւառաց և լուսազարդեալ պայծառա-  
ցոյց զազգս Հայոց վարդապետօք և քահանայիւք,  
գեղեցիկ կարգաւորութեամբ եւ ուղղափառ դա-  
ւանութեամբ։ Մանաւանդ տիւ և գիշեր մաքառե-  
լով ընդդէմ քրիստոսատեաց աղթ արմայիցն գաւա-  
ռին Երնջակու։ Եւ ի սոյն աւուրս հանգեաւ ի  
Քրիստոս, և խաւարումն եզեւ աշխարհիս Հայոց։  
Եւ բարձեալ աշխակերտուց իւրոց՝ տարեալ եղին  
յԵրնջակայ վանսն մերձ սուրբ ճգնաւորին Մաղա-  
քիա՝ աշխակերտին իւրոց, որ էր նա ի ծովահայեաց  
քաղաքէն Նրիմայ՝ յոյժ մեծատան որդի։ Եւ թո-  
ղեալ էր զժառանգութիւնն և եկեալ առ մեծ վարդա-  
պետն Յովհաննէս։ Եւ առեալ ի նմանէ զվարդա-  
պետական իշխանութիւն՝ եկն ի Նախանուան գաւառ,  
շինեաց ղվանորայս Հայոց և բազում հակառակու-  
թիւնս կրեաց յաղթարմայից սուստ քրիստոնէից։ Եւ

յետոյ դեղակուր եղեալ ի սանամօրէն իւրմէ յաղ-  
թարմայէ՝ սուգ մեծ եթող աղգիս մերոյ : Վ ասն զի  
զերկուց վարդապետաց դասատունսն՝ զՅովհաննու  
և զԱյարգսին նա պահէր ի շինութեան զԱպրակուն-  
եացն և զԱստապատին . և զամենայն ժամանակս  
կենաց իւրոց միս ոչ եկեր և գինի ոչ էարբ : Եւ  
երկու քուրծ զգեցեալ էր՝ զմին հանէր ի յանձնէն եւ  
ի հուր անցուցանէր, և միւսն ոչ ելաւ յանձնէ նորաւ  
Եւ երկաթ զանձամբն ունէր չորս մատամբ լսյն, եւ  
քրով աւազակաց պատեալ էր զանդամն իւր մինչեւ  
ի ծունկսն : Եւ ի ժամ մահուն տեսին զնա հոգեւոր  
հարբն մեր վարդապետն Յովհաննէս և Մատթէոս  
կրօնաւոր որ պատեալ էին զնա . և յայտնեցին ամե-  
նեցուն : Եւ հիացեալ զարմացեալ՝ փառս ետուն  
Աստուծոյ . և կամեցան խաշ ձեւացուցանել : Եւ  
մեծ վարդապետն Յովհաննէս ոչ ետ թոյլ այլ ընդ  
ինքեան եղին ի գերեզմանի : Եւ ասէին տեսողքն.  
ի մեծ նահատակի սուրբ Սարգսի տօնէն մինչ ի տօն  
Վ արդավառին ջուր ոչ էարբ . և ի մեծի պահոցն  
կիւրակէէ ի կիւրակէ միայն փոշեջուր ճաշակէր :  
Անդ եղին զմեծ վարդապետն Յովհաննէս ի ալատիւ  
և ի փառս սուրբ եկեղեցւոյ՝ զերկուին ամոլսն հսւա-  
տոյ ի միասին : Որ էր ծնեալ սա ի Նաւասարդի 30,  
և ի նոյն օր հանգեաւ ի Քրիստոս ըստ նմանութեան  
մեծին Սահսկայ հայրապետին : Զի այս է օրինաւոր

մահ մաքուր քրիստոնէից ազգի, որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի, և աղօթք նոցա ի վերայ աշխարհի : Եւ մաղթանօք սորա Տէր Աստուած ամենայն ազգիս մեր ողորմեսցի : Եւ մահ սորա երեք ամաւ յետոյ է քան զճգնաւորին Մաղարիայ :

Եւ յաջորդեաց յաթոռ սորա քրիստոսածաւալ աղյօթիւրն և անմուտ արեգակն՝ երկրորդ լուսաւորիչն Գրիգորիոս վարդապետն Տաթեւացի հաւանութեամբ և կամօք մեծ վարդապետին Ասրգսի սուրբ ուխտին Խառարաստայ և համշիրակ եղբարց իւրոց Յակոբայ Սաղմոսավանիցն Արարատեան գաւառին և Գէորգայ Երզնկացւոյ և ամենայն աշակերտաց գնդին՝ Յովհաննէս վարդապետին Մեծորայ, Յակոբայ եւ Միսիթարայ Ռշտունեաց : Այսքան առ այս :

Դարձեալ գարձցուք յառաջիկայ պատմութիւնս պիղծ թագաւորին Արեւելից : Յ836 թուականին մեր առեալ էր զաշխարհն Խորասանու ութամեայ պատերազմաւ . և անտի չուեալ եկն էառ զԳանձակ շահաստանի քաղաքն Թաւրէզ : Եւ անտի չուեալ եկն յերկիրն Արմեաց ի վերայ դղեկին Երնջակու . եւ ապս ի վերայ երկրին Ճակատուց՝ էառ զքաղաքն սուրբ Մարի ի հիմանց տապալեալ զամուրն մեր զոր էր ամրափակեալ պատուական ազգին Բագրատունեաց . եւ գերեաց զքաղաքն եւ զամենայն շըր-

Չակայ գեղորայսն : Իսկ բարեպաշտ տանուտէր մի  
Մարտիրոս անուն՝ յոյժ զօրեղ զօրական , ողորմած  
և աղքատասէր ի գեղջէն կողբայ , ելեալ ի լեառն  
Բարդող , որ կոչի յայլոց ազգաց Թակալթու , յոյժ  
արի և քաջ մանկամբք գեղջն ապրեցոյց զամենայն  
հաւատացեալսն մեծաւ պատերազմաւ և սրտապինդ  
զօրութեամբ օգնութեամբ հզօրին Աստուծոյ Յիառու-  
սի Քրիստոսի Փրկչին մերոյ : Եւ թէպէտ բազում  
անդամ՝ պատերազմեալ՝ ոչ կարացին առնուլ ըզ  
լեառն զայն : Որ յետոյ այրն այն նահատակեցաւ ի  
պիղծ Թուրքմանէն Ասհաթ անուն , հեղձուցեալ  
ի ջուրն Արազու անտես ի մարդկանէ : Ի սոյն ժա-  
մանակի կորեաւ սուրբ նշանն Գետարգել , որ էր ի  
փայտէն կենաց տուեալ պարգեւ ոտւրբ Լուսաւորչին  
Գրիգորի ձեռամբ սրբոյն Աեղքեստրոսի : Զի երկու  
կրօնաւորք ի սուրբ ուխտէն Կաղզվանայ սուրբ հօրն  
Վարդիկ տարեալ պահեցին գաղտնի : Եւ Զաղա-  
թայն ի վերայ հասեալ՝ զերկոսեանն այլ սպանին . եւ  
այլ ոչ զիտաց զտեղին : Եւ զի բազում անդամ  
յետոյ որոնեալ զտեղին եպիսկոպոսք նոյին՝ ոչ  
կարացին գտանել . եւ սուգ մեծ եղեւ ամենայն  
Հայոց :

Եւ անտի չուեալ եկն յերկիրն Արարատեան եւ  
Կարրու և յերկիրն կոտայից . և խստեալ ( պաշար-  
եալ ) զամուրն Բջնոյ՝ էառ զնա և սպան զեպիսկո-

պոս աշխարհին կԾէր Վանական, որ էր այր իմաստուն և գիտնական, ողորմած և գթած ամենայն աղքատաց : Եւ զայլ ամենայն բաղմութիւն հաւատացելոց չարչարէին տանջանօք, սովով, սրով, գերութեամբ, անտանելի չարչարանօք և անազորոյն բարուք անմարդաձայն արարին զամենալից գաւառն Հայոց : Եւ բազումք նահատակութեան հասին և պսակոց արժանացան, զորս հանդիսադրին Փրիստոսի Աստուծոյ մերոյ միայն է գիտելի, որ պսակէ զնոսայաւուրն հատուցման արդարոցն զընգից ամէն :

Եւ առեալ զառ և զաւար և գգերին անթիւ, զոք ոչ որ կարէ ճառել զաղէտս և զդառնութիւն մերոյ ազգին : Եւ ընթացեալ բազում զօրօք ի Փայտակարան Տիղիս քաղաք՝ էառ զնա և գերեաց անթիւ և անհամար : Եւ կարծիք է թէ ստանեալն յոլով էր քան թէ ապրեալն .որե անդ սկատահեալ վարդապետն Ստեփաննոս, որ մականուն Փիր, մաղապուրծ եղեալ ի սպանմանէ : Իսկ թագաւորն Վրաց Բագարանուն յազգէ Հրէից, որք գերեցան յաւուրս թագաւորացն Բարելացւոց, և բերեալ յազգս մեր՝ իձեռն Լուսաւորչին ի Փրիստոս հաւատացին և թուեցան ընդ իշխանս մեր : Եւ թագաւորք եղեն յետ ցեղին Արշակունեաց Անւոյ և ամենայն Հայոց : Եւ նեղութենէ անօրինաց փախուցեալ ի տունն Վրաց՝

եզեն ուրացողք ճշմարտութեան եւ հաւատով քաղ-  
կեդոնիկը :

Եկն սա բազում ընծայիւք ի հնագանդութիւն  
պիղծ թագաւորին. և նա լցեալ չարութեամբ սա-  
տանայի ուրացոյց զնա, եւ առեալ զնաց ի Ղարա-  
բաղ՝ ի ձմերոցն առաջին թագաւորաց մերոց : Իսկ  
թագաւորն Վրաց, լցեալ իմաստութեամբ Հոգւոյն  
սրբոյ՝ խարեաց զնա և ասէ առու ւր ինձ զօրս բազում  
զի երթայց ի տուն Վրաց, առից զաշխարհն ամե-  
նայն և զարձուցից ի կրօնս ձեր զի ութն լեզու է  
ազգն. զամենեսեան ի հնագանդութիւն և յօրէնս քո  
բերից»: Որ են այսոքիկ Դրալ, Օսէդ, Իմերէլ Մէկ-  
րէլ Ափիսազ, Սօնք, Վրացի, Մեսխ(11): Եւ նա  
ուրախացեալ խարեաց (12) զնա բաղում պատուով  
եւ ետ ի նա զօրս բազումն : Եւ նա յարուցեալ ան-  
թիւ զօրօք՝ եկն ի տունն Վրաց :

Իսկ Բագարատն այն յղեաց գաղտարար առ  
որդիսն իւր Գորդի, Կոստանտին և Դաւիթ գալ  
ծածուկ ընդ առաջ նորա օգնել ծնովին զի կարասցէ  
փախչիլ ի ձեռաց նորա : Եւ իւր առեալ զօրու Զա-  
ղաթային բերեալ ի նեղսագոյն և ի կածան տեղիա.  
և որդիք թագաւորին առեալ զմանապարհ ընթա-  
ցիցն՝ սուր հանեալ կոտորեցին զբազումն ի նոցանէ  
աւելի քան զ12,000, որպէս ասեն. և առեալ դհայրն  
իւրեանց զնացին ի բնակութիւնս իւրեանց : Իսկ

ավիղծ բռնաւորն Թամուր ի գարնանային եղանակին  
առեալ զզօրս իւր՝ գաղտարար եկն ի վերայ Թուրք-  
մանին Ղարայ Մահմատին : Եւ նորա գիտացեալ՝  
միախեաւ ի նմանէ : Եւ նա արագընթաց առշաւ-  
մամբ, իրրև զայծեամն զրազում աւուրց ճանապարհն  
ի սակաւ աւուրս (հատեալ)՝ եհաս ի վերայ նորա  
ի գաւառն Ճապաղջոյ : Եւ նա յետս դարձեալ՝  
մտին ի սլատերազմ . և զարմանալի գործ գործե-  
ցաւ. զի հարեալ վանեցին զսիղծ բռնաւորն, եւ ըզ  
գլխաւորն զօրաց նորա Լողմաղան անուն սպանին և  
այլքազում զօրս ընդ նմա :

Եւ նա յետս դարձեալ եկն յերկիրն Տարօնոյ Մուշ  
կոչեցեալ. իսկ երկիրն Փաջբերունեաց Արձէշ եւ  
Աղիովիտ, տունն Խորխոռունեաց հնագահն եւ քա-  
ղաքն Մանագկերտ, Հարքնիս խոյս տուեալ ի Զա-  
ղաթայէն եկեալ հասին յերկիրն Պալունեաց ի  
գաւառն Տարօնոյ՝ ի քնարան սուրբ Կարապետին  
Յովհաննու և Աթանագինեայ ի մեծահանդէս մայ-  
րաքաղաքն ի վանսն Գլակայ Ասորւոյ Զենորայ  
վարդապետին : Եւ. գրոհ տուեալ խումբ առեալ  
եկեալ ամենայն բազմութիւն Քրիստոնէիցն յերկըր-  
պագութիւն սուրբ տեղեացն Կարապետին Յով-  
հաննու և Աթանագինեայ հայրապետին և սուրբ  
ճգնաւորացն Անտոնի եւ Կրօնիղեայ և եօթն խո-  
տաճարակացն : Եւ վարդապետ ոմն Ատեփաննու և

Եալիսկոպոս ոմն անուն Ներաէս ի գաւառէն Արճշոյ,  
ի սուրբ ուխտէն Մեծորայ, և ճգնաւոր վարդապետն  
Յակոբ, և Արգար եալիսկոպոս սուրբ ուխտին  
վառեալ յորդորեցին զամենեսին ի սէրն Աստուծոյ  
և ի պատիւ սուրբ Կարապետին խոստովանիլ զմեղա  
խրեանց և հաղորդիլ փրկական մարմնոյ և արեան  
Տեառն, և տօն մեծ կատարել, և ողորմութեամբ  
և ընծայիւք պատարագօք զբազմութիւն կրօնաւ-  
որաց սուրբ ուխտին միսիթարել :

Իսկ եալիսկոպոսն Տէր Արգար և վարդապետն  
Յակոբ աւելի սիրով ընկալան զուխտաւորսն մեր. և  
աղօթս արարեալ բազում աւուրա բարեխօսութեամբ  
սրբոյն Յովհաննու և ամենայն սրբոց օգնական լի-  
նելնոցա և աղատել ի գերութենէ չար բռնաւորին.  
Իսկ զօրք Թուրքմանին կողոպտեցին զամենայն  
քրիստոնեայս մեր հրամանաւ Յուսփայ բռնաւորին.  
և զմնացեալն ի յընչիցն և զամենայն բազմութիւն  
ետուն յերաշխի յամիրայն Խութայ չէս Շարաֆ  
անուն : Եւ նա առեալ բռնութեամբ անցոյց ի գետն  
Եփրատ, և բերեալ մերձ ի զիւղն Հասգեղ : Եւ  
քրիստոնէիցն ասլստամբեալ ոչ կամէին ելանել ի  
լեառն Խութայ եւ Աասնոյ. այլ խոյս տուեալ կամէ-  
ին գնալ յաշխարհն իւրեանց : Իսկ նա բռնութեամբ  
և հարկանելով՝ ի խնամոց ողորմութեանն Աս-  
տուծոյ եհան զմեղ զառ ի վեր լերինն Խութայ : Եւ

Նոյն օր հասին զօրք Զաղաթային ի վերայ մեր և  
խսկ ողորմածն Աստուած, որ գլամս երկիւղածաց  
իւրոց առնէ և աղօթից նոցա լսէ՝ բարեխօսութեամբ  
սուրբ Կարապետին և ամենայն սրբոց եհաս մեզ ի  
յօդնականութիւն. զի Թուրքմանն Փիր Հասան  
անուն որոշեալ ի Ղարայ Մահմատին այն, որ յետ  
ժամանակի սպան զնա և զորդին Բայրամ անուն  
ի լեռնէն ի վայր իջանէին, և մեր ի լեռառն ելանէաք:

Եւ նոյնժամայն յանկարծակի գոյժ դառնութեան  
և բօթ մահարեր եկն եհաս առ մեղ եթէ՝ զօրք  
Թուրքմանին էառ զվերջ Հիզանքուրանին : Ասա  
էր տեսանել զաղէտս տարակուսանաց ամենայն  
գընդին. զի հայրն զորդին ուրացաւ, և որդին՝ ըզ  
հայրն. մայր՝ զդուստրն, և դուստր՝ զմայրն. եղբայր՝  
զեղբայրն, և սիրելին՝ զսիրելին. և գոչումն ազաղա-  
կի նոցա ելանէր յերկինս : Որ և ես ի ներս կայի :  
Եւ սկսան լալով աղաչել զԱստուած բարեխօս կար-  
գալով զսուրբ Կարապետն Յովհաննէս եւ զսուրբ  
Առաքեալսն հրեշտակաբնակ ուխտին Ղաղարու, և  
զսուրբ նշանն Յակորայ Տեառնեղբօրն որ կայր ի  
վանքին : Եւ եհաս մաղթանք նոցա առաջի Աս-  
տուծոյ. վասն զի Թուրքմանն Փիր Հասան կամէր  
ելանելի ժողովարան (13) եւ գնալ ի լեռառն Մարա-  
թու : Յանկարծակի եկեալ դիպեցան զօրացն Զա-  
ղաթային. եւ նոցա ապաւինեալ յԱստուած եւ ի

սուրբ ուխտարանն Ղազարու՝ բերեալ եզն մի դէմ  
յանդիման պատարագ մատուցին յանուն սուրբ  
Առաքելոցն, որ կայ անդ ի մասանց սուրբ Աւետա-  
րանչին Ղուկասու եւ Անդրէի առաքելոցն : Եւ  
երկու աջ առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի, զորս  
Սեղբեստրոս հայրապետն եւ թագաւորն կոստան-  
տիանոս ետուն Լուսաւորչին. անդ կայ ամիոսիեալ:  
Եւ այս աւանդութիւն առ մեզ հասեալ կայ թէ ի  
Ղազարու վանքն եղաւ :

Աստ էր տեսանել զքաջութիւն արանց մենամար-  
տից. զի քաջասիրտքն գոչէին և թուշասիրտքն փախ-  
չէին, անարիքն տկարաննային, սաղավարտքն փայ-  
էին, սուսելիքն չողային, նիզակըն բեկանէին, քաջք  
ընդ քաջաց ի մարտ մտանէին. եւ գոչումն ազա-  
ղակին սրտաքեկ առնէր զտեսողս պատերազմին :  
Աստ էր տեսանել զողորմութիւնն Աստուծոյ եւ ըզ  
պտուղ ազօթից եւ յուսոյ հաւատացելոց. զի առա-  
քեաց Աստուած զօրս հրեշտակաց յօդնականութիւն  
նոցա. զի երեք սպիտակափայլ արք հեծեալ ի սպի-  
տակ ձի, գային ի վերայ օդոյս, եւ իջեալ խառնեցան  
ի զօրս Թուրքմանին, զոր պատմեաց մեզ հոգեւոր  
եղբայրն մեր Լարապետ կրօնաւորն, որ էր տեսեալ  
զտեսողսն : Եւ նոյն ժամայն բեկեալ խորտակեցաւ  
զօրութիւն Զաղաթային զի մին մարդ ի Թուրքմա-  
նէն 100 ոգի սպան՝ Մարտփ անուն : Եւ զօրացն

արեւելից ի վախուստ դարձեալ զահի հարեալ ի  
բազմութենէ սատակմանց իւրեանց եւ ի շփոթմանէ  
վրդովմանց մեծ պատերազմին յանթիւ և յանհամար  
վախից ի վայր մղեալ գահավէժ եղեալ սատակեցան  
ի կորուստ. զոր եւ ասէին աւելի քան 2,000 ոգի : Եւ  
մեր զերծեալը ի նոցանէ որդովք եւ դստերօք,  
սկսար ուրախութեամբ եւ ցնծութեամբ ի ձայն մեծ  
օրհնել զԱստուած՝ զթագաւորն թագաւորաց, ըզ  
Յիսուս Քրիստոս զողորմածն քրիստոնէից, որ ազա-  
տեացն ի գաղանաց արեւելից. եւ զոհութեան եւ  
օրհնութեան սլատարագ Աստուծոյ ի բարձունս  
մատուցար :

Բայց զարմանալի գործ մի գործեցաւ ի սմին  
աւուր զի կին Մի ԵրկիրՂԱԾ ԵՒ ՀԱԻԱՏԱՐԻՄ  
իՄուշգաւառէ, ունելով զորդի մի յոյժ պատուական  
եւ բազճալի, եւ դէմք կերպարանացն իրրեւ զերեսս  
հրեշտակի, գոլով ամաց իրրեւ եօթանց կամ ութից.  
զի յելանել զօրացն արեւելից ի լեաւն Խութայ,  
բազումք ի քրիստոնէից աստ եւ անդ վախուցեալ  
կային ի պրակս մայրիցն գաղտազողի : Եւ տեսեալ  
զնոսա անօրինացն՝ արշաւեալ ի վերայ նոցա կամէին  
գերել զնոսա : Խակ ողորմելի ՄԱՅՐՆ ՍՐԲԱՍէՐ ԵՒ  
ԵՐԿԻՒՂԱԾ յետս դարձեալ տեսանէր զի գային ըզ-  
կնի, եւ մերձենային առնուլ զմանուկն : ԱՌԵԱԼ  
ՍՈՒՐ Ի ԶԵՐԻՆ ԻՒՐՈՒՄ ԶԵՆԵԱՅ ԶՈՐԴԻՆ ՑԱՆ-

ԿԱԼԻ Եւ իբրեւ զգառն անմեղ պատարագեաց ի  
սէր գառին Յիսուսի Քրիստոսի փոխադարձ առնե-  
լով Հօրն երկնաւորի, որ զԱստուածորդին, զանա-  
րատ գառն իւր պատարագեաց զենեալ եւ խոցեալ  
ի վերայ քառաթեւ խաչին բարձրացեալ ի վերայ  
սրբոյն Գողգոթային Եւ հինքն ՄԱՅՐ ՄԱՆԿԱՆ ՍԱ-  
ԿԱԻ ՄԻ ՑԱՌԱՋ ԸՆԹԱՅԵԱԼ՝ ԵԼ Ի ՎԵՐԱՑ ԲԱՐՁ-  
ՐԱՒԱՆԴԱԿ ՎԻՄԻ, Ի ՎԱՅՐ ԸՆԿԵՑ ԶԻՆՔՆ ԵՒ  
ԵՀԱՆ ԶՈԳԻ ԳՈՀՈՒԹԵԱՄԲ ՓԱՌԱՒՈՐԵԼՈՎ, ԶԱ-  
ՆՈՒՆ ՑԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ (14) : Եւ զայս վասն  
այնորիկ արար. զի մի երկու բն զրկեսցին ի Քրիս-  
տոսէ եւ սատանայի բաժին լինիցին. այլ Աստուծոյ  
լինիցին բաժին եւ հաճոյական պատարագ առաւել  
քան զօրն հաւատոյ մեծին Արրահամու եւ քան ըզ  
մայրն Շամունեայ, որ զեօթն որդիսն պատարագ  
մատոյց Աստուծոյ յորդորելով զնոսա յօժար կամօք  
մեռանել վասն Աստուծոյն մերոյ Մեսիայի. որոց  
անուանին էին Անդրանիկ, Ակար, Մակար, Խորէն,  
Խորաէն, Ամինադար, Գաղիէ : Եւ զայս վասն  
այնորիկ ետ թոյլ Աստուծ զաղիս իւր սպանա-  
նել եւ Աստուծոյ պատարագել զի մի միայն  
Աստուծն Արրահամու վառաւորեսցի եւ մի  
տամբ հնոյն Խարայէլի : Եւ մի հինն Խարայէլ ա-  
ռաւել պարծեսցի քան զնորս Խարայէլ՝ զշաւատոյ  
որդիս մեծին Արրահամու եւ Լուսաւորչին Գրի-

գորի, որ էր ի մարմնաւոր թոռանց հօրն հաւատոյ :

Եւ զայս մի ոք երկրայութեամբ եւ կարծեօք դիտեսցէ զի մեր իսկ վարդապետօք եւ աշակերտօք գնացաք ի սուրբ Կարապետն, եւ դարձեալ եկաք ի Մուշ եւ բերաք զտեսողն եւ զլողն՝ զճնաւոր հայրն զԴաւիթ կրօնաւորն զհոգեւոր հարազատ սուրբ ճճնաւորին Բարդողիմէոսի սուրբ Առաքելոցն Ղազարու վանացն. եւ ի նոցանէ զճմարիտն ստուգեցաք, եւ ձեզ յիշատակ օրհնութեան Աստուծոյ թողաք :

Բայց արք գաւառին Սասնոյ եւ Խութայ հաւատացեալք եւ անհաւատք յազգէն Մարաց, քաջալերեալք ի միմեանց՝ դիմեցին ամեներեան ի կողոպտել գաւար Զաղաթային, եւ լցան աւարօք եւ գանձիւք նոցին :

Իսկ յերկրորդում աւուր եկն Թամուրն ի Մուշ քաղաք, եւ կոչեաց առ ինքն զամիրայն նոցին : Եւ նա գնաց առ նա մեծագոյն ընծայիւք եւ պատսրագօք : Եւ նորա ասացեալ «Ե՛կ տա՛ր զմեղ ի Թուրքմանն» : Եւ նա առեալ տարաւ ի նոյն տեղի պատերազմին, եւ եցոյց զբաղմութիւն կոտորելոցն : Եւ զահի հարեալ պշուցեալ հայէր եթէ զի՞նչ իցէ եւ ո՛րբան որք սրով խոյեւալ էին. եւ դարձեալ՝ ետես զնոյն արսն որք առանց սրոյ մեռեալ էին. եւ ասէ ի լսելիս ամենեցուն «ոյս ոչ է զործ մարդոյ. ոյզ

գործ է Այրարշին Աստուծոյ» : Եւ յետս դարձոյց ըզ  
զօրս իւր եւ ասէ « տա՛ր զմեզ ի վերայ նորա զի  
կարացից առնուլ զվրէժ իմ » : Ասէ « ոչ է կարողու-  
թիւն մարդոյ ընթանալ զհետ նորա զի ելեալ է ի  
լեառն Մարաթու. եւ եթէ երթայցես՝ մեծ եւ ան-  
պատմելի վնաս գործէ քեզ » : Եւ հաւանեալ անօրի-  
նին՝ դարձաւ ի Բաղէշ քաղաք : Եւ ամիրայն Ամիր  
Շարաֆ գնաց առ նա, եւ սիրով ընկալաւ զնա, եւ  
խաղաղութեան նամակ ետ նմա, եւ խաղաղութիւն  
եղեւ ամենայն աշխարհին :

Եւ անտի չուեալ եկն ի յԱրծկէ. եւ ի հասանելն  
ի դուռն քաղաքին ըմբռնեցին արեղայ մի Կարապետ  
անուն ի գեղջէն Ջուզայու, որ գայր Յերուսաղէմայ.  
եւ կապեցին զնա եւ տարան կապանօք : Եւ գերեալ  
քրիստոնէիցն հաստատութիւն եղեւ հաւատոյ ի  
Սմրդանդ քաղաքի : Եւ եղեւ եափսկոպոս յետ ժա-  
մանակի, եւ ոչ հասաւ յաշխարհն յայն. այլ մեռաւ  
ի Սուլթանիա. եւ քրիստոնէութիւնն կորեաւ անդ.  
զի յաւուրս որդւոյ Թամուրին Շահ-Ռուֆ (15) ա-  
նուն յորժամ թագաւորեաց ի Հրէ քաղաք՝ զորդի  
իւր Ռւլուխ պէկ եղ ի Սմրդանդ թագաւոր նոցա : Եւ  
Ասորի դաշայ մի նեստորական գայ, մտանէ ի տուն  
իշխանի միոջ, եւ կեցեալ աւուրս ինչ առ նա վասն  
սպասաւորութեան, եւ անկեալ ընդ կնոջ նորա. եւ  
թողեալ զսպասաւորութիւնն՝ գնաց ի հեռաւոր տե-

դի. եւ գրով գրէ անդ եւ ասէ. սուտ է օրէնքն ձեր  
եւ առաջնորդն ձեր. զի ես եկի ի ձերում միջի, եւ  
զստութիւն օրինաց ձերոց ճանաչեցի, եւ զկանայս  
ձեր խայտառակեցի :

Եւ իշխանին առեալ զնամակն՝ տարաւ առ Ուզուխ  
պէկ Ամիր զայն. եւ նորա հարցեալ թէ յորմէ աղգէ  
եւ ի դաւանութենէ էր այրն այն : Եւ նորա ասեն.  
Յիսէի էր այրն այն : Եւ նա բարկութեամբ  
ցեալ հրամայեաց զամենայն քրիստոնեայսն հանել  
ի հաւատոց եւ կամ մեռանել : Ոմանք զմահ յանձն  
առին սակաւումք, եւ բազումք ի հաւատոցն ելին :  
Եւ գնացեալ եսլիսկոսկոս մեր Յովհաննէս մակա-  
նուն Զանկի վասն գերելոց՝ գրեաց եւ զայս բօթ-  
դառնութեան երեր մեղ. վայ ինձ (16) :

Դարձեալ դարձցուք յառաջիկայ բանս մեր : Եկաւ  
չար գաղանն այն ի դուռն քաղաքին Արծկոյ. եւ  
իշխան քաղաքին Սահանդ անուն գնաց առ նա միջ-  
նորդութեամբ Հեր եւ Զարեւանդ գաւառին Օրդու-  
թուղայ անուն : Եւ յոյժ սիրեցեալ եղեւ ի նմանէ .  
եւ աղատեցաւ ի նմանէ երկիրն ամենայն եւ մնաց  
ի խազաղութեան : Եւ ետ զԱրձէշ նմա. եւ վազ-  
վաղակի ի սակաւ աւուրս եկին ամենայն երկիրն  
Արձիշու ի Խլաթ քաղաք, եւ հասեալ ի Ծղակք.  
յերեկոյէ մինչեւ ցառաւօտ Վրուրդն կողոսպտեաց ըզ  
տառասպեալ երկիրն : Եւ եկեալ ի դօրաց Սահան-

դին՝ բերին ի յԱլքծկէ քաղաք. ապա նոր սկիզբն եղին շինութեան զի աւերեալ էր աշխարհն ամենայն ի զօրաց սիղծ եւ անօրէն Զաղաթային : Եւ անտի չուեալ գնաց ի գաւառն Տոսպսց ի վերայ ամրոցին Վանայ Հայոց . եւ առ ժամայն ամիրայն Եզղին յազգէն Սենեքերիմեանց ոչ եկն առ նա. այլ ապատամբեալի նմանէ մնաց ի յամրոցին հանդերձ ամենայն զօրօքն եւ բազմութեամբ քրիստոնէից : Եւ յետոյ իջեալ ի յամրոցէն՝ գնաց առ նա. եւ նորա կալեալ կասկեաց զնա. եւ եկեալ ի վերայ ամրոցին՝ քառասուն օր ի նեղութեան արկին եւ դրազումն սպանին ի զօրաց անօրէն Զաղաթային : Եւ նոցա նեղեալ ի հացէ եւ ի ջրոյ՝ ոչ կարացին կալ ի խարին, եւ ետուն զբերդն ի ձեռս նոցա : Աւա՛լ աղէտիս եւ դառն կսկծիս : Աստ էր տեսանել զահ եւ զերկիւզ աւորն զահ դատաստանի, զլալումն և զողբումն ամենայն բերդին զի հրաման եղեւ ի չար բռնաւորէն զկանայս եւ զմանկունս առնուլ ի դերութիւն, եւ զհաւատացեալս եւ զանհաւատոս ի բերդէն ի վայր ընկենուլ : Խոկ նոքա առժամայն կատարեցին զչար հրաման նորա . սկսան առհսաւարակ զամենեսեան ի վայր ընկենուլ. եւ այնքան բարձրացաւ մեռեալն, մինչ զի վերջին անկեալբն ոչ մեռանէին, զոր տեսար աչօք եւ լուար ականճօք մերովք ի սուրբ հօրէն՝ սրբազն արքեպիսկոպոսէն Տէր Զաքարիայէ եւ ի

Հօրէն վարդապետ Տէր Պօղոս կոչեցեալ որ եւ նոքա  
ազատեցան լինելով ի բերդին. զի իշխան մի Զաղա-  
թայ զիւր տուեալ բաժին գերիսն ազատ արար . եւ  
սակաւ մնացելոցն նա եղեւ պատճառ : Եւ լցաւ  
անմեղ արեամբ քրիստոնէից եւ այլազգեաց աշ-  
խարհն ամենայն շուրջ զգզեկաւն : Իսկ Մուղրի մի  
յոյժ բարձրաձայն՝ ելեալ ի մինարայն քաղաքին  
Բերկրոյ զղիամարի սարայն (իման կոչ վերջին աւուր)՝  
(ձայնեաց). Աստ օր դատաստանին հասաւ :

Եւ ալղծոյն անողորմի միտ եղեալ ասէ « զի՞նչ է  
ձայնն այն ». ասեն մերձակայքն « օր դատաստանին  
հասեալ է որ Յիսէն առնելոց է . եւ զայն դու արարեր  
այսօր » . զի ըստ նմանութեան փողոյ ձայն լալական  
գոչեաց Մուղրին : Ասէ « բերանն այն բեկե՛ալ  
միցի , սակաւ մի այլ թէ յառաջ գոչեալ էր՝ բնաւ  
երրէք մարդ ոչ սսլանանէի » : Եւ նոյնժամայն հրա-  
ման տուեալ այլ մի արկանել ի վայր զմնացեալսն.  
այլ աղատել զամենեսեան : Բայց ո՞վ կարէ պատ-  
մել զթիւ գերեայն եւ զսլանումն անմեղացն. այլ  
Աստուած միսայն որ ատեղծ զամենայն եւ թուէ զսմե-  
նեսեան, զի լցաւ աշխարհ ամենայն գերութեամբ  
Հայոց (17). մեռան քահսնայր եւ աշխարհականք,  
հաւատացեալը եւ անհաւատք :

Եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց  
մերոց, մանաւանդ ի ծուլութենէ կարգաւորաց եւ

կարգաթող խաբերայից : Եւ երթեալ դարձեալ  
ուստի եկեալ էր գերութեամբ եւ աւարաւ : Եւ յե-  
տոյ եկեալ սիրելեաց կոտորելոցն, եւ տեսեալ զան-  
քժշկելի վէրս Հայոց՝ ողբ ի բերան առեալ աշխար-  
էին. մին գոչէր. վայ ո՛րդեակ իմ՝ մին ասէր. վայ  
հայրիկ իմ՝ եւ լցաւ երկիր եւ աշխարհ լալով եւ  
եղուկ կարդալով բովանդակ ամենայն կողմանք  
Վասպուրական գաւառին. զի չիք ոք որոյ ոչ գոյր  
սիրելի կամ՝ բարեկամ անհետ եւ անդտանելի եղեալ  
ի սիրելեաց : Աւա՛ղ եւ եղո՛ւկ ամենայն Հայոցս զի  
աւերեցաւ ամենայն երկիրս. զի յԱրծոյ մինչեւ ի  
տունն Վրաց եւ մինչ ի Կուր գետն Աղվանից շա-  
ղախեցաւ արեամբ անմեղաց երկիր ամենայն չար-  
չարանօք, սպանմամբ եւ գերութեամբ : Եւ յետ  
գնալոյ նորա յաշխարհէս մերմէ եկն սով սաստիկ  
յաշխարհս մեր եւ տարածեցաւ յամենայն տեղիս  
զի կերան զշունս եւ զկատուս, խորովէին զուատերա  
եւ դստերա. այր՝ զկինն, եւ կին՝ զայրն սպանանէին  
զմիմեանս եւ ուտէին եւ ոչ յագենային. եւ յետոյ  
ինքեանք մեռանէին : Զի ոչ կարեմ սպատմել ըզ  
դառնութիւնս մեր զոր տեսար աչօք եւ լուար ական-  
ճօք . զի ջնջեցաւ մարդկութիւնս, մանաւանդ  
Հայկազեան գաւառիս : Եւ կատարեցաւ տեսիլ եւ  
հրաման մեծին Ներսիսի (18) որ ասէ « յազգէն Նե-  
տողաց ջնջեսցի՛ տունն Արամայն : Այսքան առ այս :

Եւ աստ գիտելի է զի ոչ միայն սով մարմնական  
տռւաւ մեզ. այլ եւ սով հոգեւորական ոչ լսելովը ըզ  
բանն տէրունական. զի երկու դասատումք կային  
յաշխարհին Ախնեաց, մին ի սուրբ ուխտն Ապրա-  
կունեաց մեծ վարժապետին Գրիգորի՝ աշակերտի  
մեծին Յովհաննու Որոտնեցայ, որում 28 ամ  
աշակերտեալ էր. եւ երկու ամէր որ նստեալ էր յա-  
թոռ վարդապետովթեան ուսուցանելոյ. զի համ-  
շիրակ եղբարքն իւր գնացին ի նմանէ. մեծն Յակոբ  
գնաց յերկիրն Արարատեան, եւ բնակութիւն իւր  
արարեալ զսուրբ ուխտն Սաղմոսավանից, որ 20 ամ  
աշակերտեալ էր Յովհաննու Որոտնեցայ: Եւ վար-  
դապետն Գրիգոր գնաց աշակերտօք իւրովք ի գա-  
ւառն Եկեղեաց յԵրզնկայն. եւ այլք աստ եւ անդ  
ցրուեալ եղեն: Իսկ մեծն Գրիգոր սակաւ աշակեր-  
տօք իւրովք գնաց ի յԱպրակունեացն հնձան յաւուրս  
ձմերայնոյ. եւ ի գարնան եղանակին գնացեալ ի  
սուրբ ուխտն եւ ի շնորհալից (19) յաթոռ Ստաթէի  
առաքելոյն, եւ ի տունն Օրբէլեանց առ իշխանն  
Սմբատ՝ որդի Իւանէի՝ թոռն Բուռթէլի: Եւ յետ  
ժամանակի ժողովեաց զբաղում աշակերտս եւ ողոր-  
մութեամբն Աստուծոյ լուսաւորէր զազգս մեր ճշշ-  
մարիտ եւ ուղղափառ դաւանութեամբ և հաւատով:  
Արարեալհարցմունս՝ գրեաց պատասխանիս ընդդէմ  
ամենայն ազգաց, եւ երկու հատոր քարողգիրս. մինն՝

ամարան, միւսն՝ ձմերան, եւ քաղուածոյս Հնոց եւ  
Նորոց եւ լուծմունս արտօքին գրոց, ոչ ելեալ անոփի  
մինչ ց867 ամ մերս թուականի : Բայց պատճառաւ  
ինչ եկեալ յերկիրս Քաջքերունի զի մեք երկոտա-  
սան եղասրք՝ աշակերտք մեծին Սարգսի եւ երկու  
ամ առ նա գնացեալ կացաք. եւ ոչ գոյր անդորրու-  
թիւն եւ ոչ հանդիստ խաղաղութեան վասն անօ-  
րինաց չարութեան : Եւ նա խոստացաւ մեղ ամե-  
նեցուն գնալ յԵրուարէմ եւ առանձնացեալ ի  
զրադշանոց աշխարհին՝ դաս ասել նոցա : Եւ դար-  
ձեալ վասն կապանաց անհնազանդ աթոռոյն Աղ-  
թամարայ քարոզեաց դառնալ ի հնազանդութիւն :

Դարձեալ՝ բռնաւորն Յուսուփի, տէրն Թաւրիզու,  
է առ զՈրուսն ի Սմբատայ իշխանէ. վասն բարեխօ-  
սութեան նոցա եկն. եւ նա ոչ լուաւ աղաչսնաց  
վարդսապետին : Եւ ամ մի լման բնակեցաւ ի սուրբ  
ուխտն Մեծորայ. եւ ժողովեցան առ նա 10 վար-  
դապետք եւ 80 արեղայք. եւ ճշմարիտ վարդապե-  
տութեամբ եւ դասիւ միսիթարեաց զնոսա . եւ ի  
միւս ամին եկեալ գնաց : Եւ ի նոյն ամին օրհաս  
մահուն եկն կոչեաց զնա յերկնային քաղաքն : Եւ  
էր սա առատ եւ ճոխ բանիւ՝ ոչ գոլով նման նմա  
յազգս ամենայն ոչ ի հինան, ոչ ի նորա, երկրորդ  
Աստուածաբան, Յովհան Ռակերերան. մինչ զի ի յու-  
սուցանելն եւ ի կափուցամելն զաչս իւր տեսանէաք

այր ծերունի առ նա նատեալ : Եւ դարձեալ՝ երբեմն  
հաց եւ երբեմն խնձոր բաժանէր . եւ երանի էր  
տեսողացն եւ լսողացն, որք զնա տեսանէին, զի  
դէմք կերպարանացն զարհուրելի էր, եւ բաղրմ  
անգամ լսէաք ի մարդկանէ թէ Քրիստոս այսպիսի  
ձեւով լինի եկեալ յաշխարհ : Եւ սա ազատեաց  
զերկիրն Այճոյ ի կապանացն Աղթամարայ վասն  
տեսլեան գիշերոյ : Այսքան առ այս՝ ելեալ ի կար-  
գէ վասն պիտոյից վարդապետաց եկեղեցւոյ :

Դարձեալ դարձցո՛ւք ի յառաջին կարգ շարագրու-  
թեան սպատմութեանս : Մեծ վարդապետն Սար-  
դիս, որ ոմէր զսուրը ուխտն Աստուպատայ : Եւ նա  
ելեալ անտի՝ եկին ի Հեր քաղաք սակառ աշակերտօք  
ի նոյն ամի դառնութեան. եւ անդ անցոյց դաւուրս  
սովոյն դառնութեան նեղութեանն : Եւ ապա առա-  
քեաց զմի յաշակերտաց խրոյ Յովհաննէս անուն,  
մականուն ասդադ կոչեցեալ՝ այր սուրբ եւ մաքուր  
հոգւով գնալ յերկիրն Քաջքերունեաց ստանալ  
ինքեանց տեղի բնակութեան : Եւ նա եկեալ յաստ-  
ուածաբնակ եւ ի հրաշագործ ուխտն Տիրամօր  
Աստուածածնին ի մայրաբազար վանսն Սուխա-  
րայ, որ այժմ Խառարաստայ վանք կոչի, առ երջա-  
նիկ եւ հեղահոգի այրն ցանկալի Տէր Զաքէոս՝ եպիս-  
կոպոս գաւառոյն, տաղ նոցա տեղի բնակութեան :  
Իսկ ի նոյն գիշերին զարմանալի տեսիլ ետես հոգե-

լից արեղայն վարդապետն Յովհաննէս, թէպէտ եւ վասն խոնարհութեան ոչ էր առեալ գաւազան վարդապետութեան, այլ ամենեցուն խրատիչ եւ ուսուցիչ էր բանիւ եւ գործով և առաջինութեամբ։ Զի տաճարն սուրբ Աստուածածնին կանթեղօք լցաւ, եւ ամենայն կանթեղբն փայլէին նման արեգական. եւ ժամատունն լուսով լապտերաց մոմեղինօք սլայծառացաւ։ Եւ նա զարթուցեալ ի քնոյն օրհնեաց զԱստուած եւ գոհութիւն ետ նմա, եւ ասէ ի միտս իւր. աստ հաճեցաւ Աստուած գալ ընակիլ մեծ վարդապետին Սարգսի, որ ունէր հոգի մարդարէութեան, եւ տեսլեամբ աշաց եւ դիմօք ճանաչէր զամենայն մարդ, եւ հեղութեամբ եւ խոնարհութեամբ ոչ գոլով նման նմայորդիս Աղամայ։ Ոչ եկեր զմիս եւ ոչ ըմպեաց գինի զամենայն ժամանակս կենաց իւրոց մինչեւ ցօր մահուան իւրոյ։ Եւ դէմք կերպարանաց իւրոց ահաբեկէր եւ զարմացուցանէր (20) զամենայն մարդ, մանաւանդ զազգս այլազգեաց մինչդի ազգ Զաղաթային յերկըրպատութիւն գային նմա։ Եւ ամետարանիչ և ուսուցիչ եղեւ աւետարանին քարոզութեան։

Եւ եկեալ վարդապետն Սարգիս բնակեցաւ յաստուածաբնակ ուխտն սուրբ Աստուածածնին։ Եւ նատաւ յաթոռ վարդապետութեան։ Եւ ժողովեցան առ նա բաղումբ ի գրոց աշակերտաց եւ ի կրօ-

նաւորաց եւ յուսումնասիրաց աւելի քան 60 կարգա-  
տորք եւ ուսումնականք : Եւ ուսոյց զամենայն  
ծովեղերս Վասպուրական գաւառիս ուսմամբ եւ  
գիտութեամբ, ժամօք եւ պատարագօք : Եւ տեսա-  
նէին զսուրբ ուխտն իբրև զվերինն Երուսաղէմ յ838  
ամէ թուականիս մեր մինչեւ յ851 ամն : Եւ ապա-  
բարւոք մահուամբ հանգեաւ ի Փրիստոս եւ եղաւ  
ի շիրիմ տապանի մերձ առ եպիսկոպոսացն սրբազա-  
նից Խաչատրոյ եւ Զաքէսոսի ի փառս Աստուծոյ  
մերոյ :

Բայց գիտելի է զի բազում վիշտս կրեաց եւ դառ-  
նութիւնս վարդապետն Սարդիսյաշակերտաց իւրոց.  
զի յորժամ էր յերկրին Այրուեաց՝ կարապետ անուն  
վարդապետ մի՛ մականուն ճագարակեր, դաս եղեալ  
զգիրս առաքինութեանց իւրեանց, եկն առ նա աղ-  
թարմայ արեղայ մի եւ ասէ ցնա « ես երբեմն արե-  
ղայ ի ձէնջ եղեալ եմ ». բայց սատանայ կորոյս զիս  
եւ արար քաղվեղոնական, եւ սիրո իմ հանապազ  
խոցի ի դէմս ձեր անարգութեան եւ հայհոյութեան.  
բայց գիտութիւն լիցի քեզ զի կարապետն այն դաս  
եղիր զգիրս առաքինութեանց, և կամին գալ ի քէն  
բան հարցանել : Ահա քեզ գիրք առաքինութեանց.  
զի պատասխանի տացես նոցա » :

Եւ նորայոյժ ուրախացեալ փառս ետ Աստուծոյ  
մեծաւ գոհութեամբ : Եւ յետ երկուց աւուրց եկին

Երկու արեղայք աղթարմայ առ վարդսպետն եւ  
հարցին. զի՞նչ է առարինութիւնն եւ զի՞նչ է սահման  
նորին : Եւ նորա պատասխանեալ զուղիղն՝ գնացին  
առ վարդապետն իւրեանց : Եւ դարձեալ գան  
միւսանգամ և ասեն. զի՞նչ է սահման հաւատոյս :  
Եւ նա ասէ զայն պատասխանի զոր ուսեալ էր ի  
վարդապետաց : Եւ նոքա ամօթազից դարձան ի  
վանսն ՚բւնոյ : Իսկ աշակերտք մեծին Արգսի  
տոփեն զնա աղաշանօք դաս ասել զգիրս նոցին  
առարինութեանց . եւ նորա հեզահոգի եւ մի-  
ամիտ գոլով՝ ապաւինեալ ի հոգին Աստուած սկսա-  
նի գասիւ վարդապետութեան ուսուցանել զնոսա :  
Իսկ աշակերտք նորին տգէտ գոլով՝ ոչ էին առեալ  
զնաշակ դաւանութեան սուրբ եկեղեցւոյ՝ զմեծի  
Լուսաւորչին Գրիգորի, զԱստուածարանին Գրիգո-  
րի, զԱթանասի եւ զԿիւրղին և զմերոց աստուածա-  
րանիցն զԱտեւիաննոսին Աիւնեաց, զԱնոսիայի  
Շիրակացւոյն, զՊօղոսի Տարօնացւոյն, զՅովհաննու,  
զԱւարզսի Հաղպատացւոյն, զԴաւիթի փիլոսոփիային,  
զՄովսիսի քերթողահօրն, զԱսողիկ թարգմանչի եւ  
զայլոց վարդապետաց սրբոց :

Եւ որոյ ոչ է առեալ զնաշակ ճշմարիտ վարդա-  
պետութեան՝ դիւրաւ սխալեալ մեռանի հոգւով,  
որպէս գառն, որ ոչ առնու զխախաց մօրն եւ զդալ՝  
վաղվաղակի մեռանի. սոյնալիս եւ աշակերտք նորա

վաղվաղակի տկարացան ի հաւատոց և կամէին աղթարմայ լինել ոչ գիտելով վարդապետին : Եւ տեսանէ ոմն ի քահանայից սուրբ ուխտին՝ սպասաւոր եւ փակակալ սուրբ ուխտին Ասլրակունեաց զազդումն սուրբ Հոգւոյն տեսլեամբ գիշերոյ յանուրջս երազոյ զի գետն Երասխայ բարձրացեալ՝ եկն, տարաւ զաշակերտան առ հասարակ եւ կորոյս զամենեսին : Իսկ վարդապետն Ասրգիս եւ փակակալն Ատեփաննոս մազապուրծ եղեալ՝ զձեռս ի ձեռս արկեալ՝ ապրեցան ի հեղձուցանելոյ գետոյն : Եւ զարթուցեալ ի քնոյն և երթեալ առ վարդապետն և առ ճգնաւորն Մաղաքիա ալատմեաց զերազն և զամենայն խորհուրդն սուտ և թերահաւատ և խարերայ աշակերտաց նորա :

Իսկ նորա հարեալ զերեսս և զմօրուս ճողէին, ըդ գլուխսն հարկանէին, ողբս ի բերան առեալ իրը ի վերայ մեռելոց անմիխթար սգով լային զհոգեւոր մեռելութիւն և զկորուատ նոցին : Եւ ասկա խորհուրդ ի մէջ առեալ մեծ վարդապետին՝ յուղարկէ ղճգնաւորն Մաղաքիա առ մեծահսմբաւ և հռչակաւոր վարդապետն Յովհաննէս մականուն կախիկ հսանել յօդնականութիւն հեղահողի առն Աստուծոյ մինչ ոչ է տարածեալ գայթակղութեանն չարութիւն տգէտ աշակերտացն իւրոց առ աղթարմայ ուրացողբն ճշմարտութեան. եւ ոչ նորա փախուցեալք եղեն :

Իսկ երջանիկ և երանելի վարդապետն Յովհաննէն  
ելեալ աշակերտօքն և բազում քահանայիւք յերկրէն  
Որոտան, իշնորհալից աթոռոյն Ատաթէի առաքելոյն՝  
եկն յերկիրն Եղնջակու ի սուրբ ուխտն Ապրակու-  
նեաց. և կոչեաց զամենայն կարգաւոր և աշխարհա-  
կան և ստուգեաց ի նոցանէ զամենայն չարութիւն  
տգէտ աշակերտացն. և հրամայեաց բերել զաշտ-  
կերտսն, և դէմ յանդիման եղեն առաջի հրապարա-  
կին (21), և պարտաւորեցան : Եւ տարեալ եղին ի  
բանտի, և զոմանս յերկաթի հարեալ, և զոմանս բը-  
րածեծ արարին :

Եւ վարդապետն Արդիս բան տրտնջման ասաց  
նոցա. և յետոյ ամենեքեան պատժեցան յԱստուծոյ,  
ոմանք գետակուր եղեն, ոմանք խսյտառակեալ  
մերկս շրջէին, կէսք ի նոցանէ փախուցեալ գնացին  
յաշխարհն Ֆռանկաց, և ի նոցա միջի չարախօսու-  
թիւն արարեալ՝ ի սղնձի եղեալ եփեցին. կէսք ի  
նոցանէ զղջացեալք ապաշխարեցին, որպէս Ատոմն  
Արկացին, զի զղջացաւ և գնաց յԵրուսաղէմ և դար-  
ձեալ եկն ի գաւառ իւր և զմարմնաւոր պատիժն  
կրեաց. զի սիրտն ծակեցաւ. և տարի մի շումն ելա-  
նէր ի սրտէն. և ապա զղջմամբ աւանդեաց զնոգին :

Յետ մահուն սորա յաջորդեաց զաթոռ վարդա-  
պետութեան երջանիկ եւ աստուածամերձ այրն  
ցանկալի հրեշտակաց և մարդկան՝ սլատկառելի քաջ

•

վարդապետն Վարդան՝ գոլով ի սուրբ ուխտէն Հոգոց վանաց, գեր ի վերոյ գոլով իմաստութեամբ և խրատուք և առաքինութեամբ քան զամենայն վարդապետս Հայոց (22). մինչ զի ասէին մարդիկ թէ հարկէ զի մեռեալքն յառնեն և թողութիւն մեղացի սմանէ գուանեն, ի սեպհական աշակերտաց իւրոց : Եւ չորս ամ լուսաւորեաց ճշմարիտ վարդապետութեամբ և դասիւ զսուրբ ուխտն և զամենայն երկիրս Քաջրերունեաց : Որ և աղօթիւք սորին և եղրօր իւրոյ Եղիա ճգնաւորին, որ առեալ էր զաստիճան սարկաւագութեան, որ զամենայն ժամանակս կենաց իւրոց կանգուն կայր յաղօթս առուջի Աստուծոյ, աղբերացաւ մարմնական ընչիւք և ողորմութեամբ մայրաքաղաք վանքն Աստուծածածնի և ամենայն երկիրս Արձիոյ : Եւ ի հալածմանէ անօրինաց ելեալ գնաց աշակերտօքն իւրովիք յերկիրն Տոսակ. եւ անդհանգեաւ ի Փրիստոս ի սուրբ ուխտն Ավանապատին յ855 թուականիս մերում . որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի :

Եւ յաջորդեաց զաթոռ նորա մեծ վարդապետն և նահատակն և ողորմածն ամենայնի Գրիգոր՝ որդի հաւատարիմ առն Աստուծոյ ծերի, գոլով ի քաղաքէն Խլաթայ, յաշակերտացն մեծին Աարգսի՝ հրգեւոր հարազատ և համշիրակ իւր. բայց ոչ ի նոյն Աստուծու ուխտն Աստուծածածնի այլ ի յերկիրն

Բղնումեաց ի քաղաքն Արծկէ, ի սուրբ ուխտն  
Ստեփաննասի վկային Ցիպնայ կոչեցեալ : Այլ ոչ  
պարապեալ վարդապետական դասի վասն սառնա-  
ցեալ բարուց ուսումնականաց մերում ազգի : Այ-  
տիւ և գիշեր գիրս գրէր, և զամենայն աղքատա կե-  
րակրէր, եւ սիրէր զողորմածութիւն, և զամենայն  
վարդապետս և կարգաւորս ի նոյն յորդորէր : Ոչ  
գոլով նման նմա ողորմած և մարդասէր և սպառա-  
ւոր աղքատաց և տնանկաց : Եւ ետ նմա Աստուած  
իմաստութիւն առաւել քան ամենայն վարդապե-  
տաց. վասն զի զերից ժամանակաց պատմութիւնսի  
լոյս ածէր ի հարցանելն և ի պատասխանատու-  
ութիւնս, և զգիրս սրբոց մարտիրոսաց և վկայիցն որ  
կոչի Յայսմաւուրց՝ սակաւարան և անվթար (23)  
շարադրեալ ի սրբոց հնոց և նորոց վարդապետացն  
ի լոյս էած, զիսաւարեալ դրունս եկեղեցւոյ մերոյ  
լուսաւորեաց . և ոչ ոք կարէ գիտել զիմաստու-  
թիւնն, որ ի նմա ծածկեալ կայ. այլ Աստուծոյ մի-  
այն է գիտելի : Եւ 50 ամ գիրս գրեաց տիւ և գիշեր  
անհանգիստ տբնութեամբ, որպէս գիտակ է գաղտ-  
նեաց գիտակն : Եւ բազում երգս գանձուց և տաղից  
յիշատակ թողեալ ինքեան՝ յոյժ տօնասէր եւ սպա-  
ռուող սրբոց մինչ զի ոչ եղեալ է և ոչ լինելոց է :

Եւ հասեալ ի բարւոք ծերութիւն աւելի քան զ75  
ամ . և յ87է ամի թուսկանիս մերում եկն սիդ

ազգն Մարտաց ի յԱրծկէ քաղաք Հայոց, և գնաց  
յանապատն Ցիանայ. և ըմբռնեալ զնա անօրինացն՝  
յոյժ տանջեալ չարչարեցին. և նա ճշմարիտ դաւա-  
նութեամբ գիրիստոս Աստուած և Տէր դաւանեալ  
խոսքովանեցաւ. և նոյնժամայն զենին զնա իրրեւ  
զգառն անմեղ և անարատ զերջանիկն և զերանելին  
Գրիգոր փոխանակ գառին Փրիստոսի : Եւ եհաս  
մարտիրոսական պսակի յոյժ մարտիրոսասէր գոլով.  
և եղին զնա ի սուրբ ուխտն Ցիանայ Նախավլային  
Ստեփաննոսի անուամբ կոչեցեալ : Եւ հոգեւոր հա-  
րազատն իւր վարդապետն Յակոբ ճգնաւոր՝ այրն  
ցանկալի, եկն ամփոփեաց զնա հանդերձ հարազատ  
որդւովք իւրովք Ստեփաննոս եպիսկոպոսաւ եւ  
աշակերտաւ. եւ նստաւ սպասաւոր նորա գերեզմա-  
նին ամ մի :

Եւ տկարացաւ, որպէս սահման է բնութեանս. և ի  
Համբարձմանն յաւուր վերացման ի բանն յայն զոր  
ասացին քահանայք «Համբարձաւ Տէրն մեր յերկինս»  
աւանդեաց զհողին ի փառս Փրիստոսի Աստուծոյ  
մերոյ : Եւ յետ այսորիկ յետ երկու ամի նոյն Փուր-  
ովն յազգէն Մարտաց ի Բաղիշու գնաց յերկիրն  
Ռշտունեաց, և զերջանիկ և զտօնասէր աղօթարար  
վարդապետն Յակոբ Ովսաննացի ի յԱնծղնապատի  
ուխտէն նահատակեալ եղին զնա մերձ գերեզմանին  
Գրիգորի Նարեկայ վանից : Եւ ի նոյն ամի վարդա-

պետն Բաղիշու Ղազար՝ յոյժ հռչակաւոր եւ բանի-  
բուն, աղօթարար և ճգնաւոր փախեաւ ի յանօրինաց  
և գնաց ի լեառն Սասնոյ : Եւ գտեալ զնա անօրէն  
ազգին Մարաց՝ ասեն « դու ասես թէ՝ Քրիստոս  
Աստուած է ». Եւ նա ասէ « ես ասեմ և ուսուցանեմ .  
Եւ այն որ ոչ ասէ եւ ուսուցանէ, գնայ ի կորուստն  
յաւիտենական » : Եւ նոքա Հարեալ սրով սպանին  
զնա. Եւ եհաս մարտիրոսական պսակաց : Եւ յառաջ  
քան զայս երից եւ չորից ամաց վարդապետ մի  
Թուվմա անուն՝ աշակերտ Ախմէօնի վարդապետին  
Ռշտունեաց, գիտակ մանր ուսմանց, սիրող սրբու-  
թեան եւ աղօթից՝ ի սուրբ ուխտէն Պուտղիկ վա-  
նաց, նետիւ Հարեալ սպանին : Եւ քրիստոսական  
պսակաց արժանի եղեն : Այս չորս վարդապետքս  
յաւուրս մեր անօրէնք սպանին, որոց յիշառտակն  
օրհնութեամբ եղիցի. Եւ աղօթիւք նոցա մեզ ողոր-  
մեացի Քրիստոս Աստուած : Այս էր ի յ874 թուա-  
կանին աւելի կամ պակաս. դու անմեղադի՞ր լեր զի  
ծեր էի եւ յետ 50 ամացս սկսայ. վասն այսորիկ յետ  
եւ յառաջ գրեցի :

Դարձեալ յ844 թուականին շարժեցաւ սլիղծ  
բռնաւորն Խորասանայ եւ եկն Պաղտառայ ճանա-  
պարհաւն. աւերեաց զՊաղտառ եւ զամենայն Աստ-  
րեստանեայս եւ զամենայն Միջազետս Տիարբակն  
(այժմ՝ Դիարբէքիր). Եկն յԱմիթ քաղաք. էաւ

զնա, եւ զմեծամեծան հրով եւ սրով անսասելի եւ անպատմելի չարչարանօք սպանին. եւ զփոքունան զայր եւ զկին գերեցին ղամենայն յաշխարհն իւրեանց : Եկն ի Անդրդին, աւերեաց զբաղաբն (24), և Հնգետասան գիւղ ուղղափառ եւ ճշմարիտ քրիստոնեայս գերեաց 3,000 տուն, եւ այլքն ամենայն 7,500 (25) ամեներեան գերեցան. եւ զչորս գեղարեւորդի կուապաշտից զՇօլ, զՇմրախ, զՄաֆարի, զՄարաշի իսպառ կործանեաց : Եւյետոյ դարձեալ սատանայի հնարիւք բազմացան ի Անդրդին եւ ի յԱմիթ :

Եւ եկն դարձեալ յաշխարհն արեւելից եւ գնաց ի վերայ Երզնկայ քաղաքին. սիրով էառ զնա, եւ ըզ մեծ կաթողիկէն ղաուրը Անդրդիսն ի կիմանէ քակեաց եւ զայլ եկեղեցիսն ղամենայն կործանեաց չարախօսութեամբ Թախուրաթան Պարոնին եւ այլ ամենայն Տաճկաց քաղաքին : Եւ վարդապետն մեր Գէորգ' աշակերտ Յովհաննու Որոտնեցւոյն, գնաց առ նա. եւ յահէ եւ յերկիւղէ սրբոյն շրթունքն պատառեցան, եւ արիւն իջանէր : Եւ լալով եւ արտասուօք յետս դարձաւ այրն Աստուծոյ վասն զի հրաման էր քակել ղամենայն եկեղեցիսն. եւ սուգ մեծ եղեւ : Եկն ի վերին կողմն աշխարհիս եւ նստաւ ի վերայ ամրոցին Բասենոյ Աւանիկ. կոչեցեալ. էառ զնա, եւ զիշխան նոցին Մահր անուն կապեաց, եւ 100 ոգի.

ի բերդէն ի վայր ընկէց անօրէնն, եւ մեռան : Եկն ի վերայ գաւառին Արարատեան, աւերեաց զաշխարհն ամենայն կողոպտելով յընչից, նատաւ ի վերայ բերդին Բագրատունոյ, էառ զնա եւ բոժանեաց 300 Տաճիկս եւ 300 Քրիստոնեայս ի միմեանց : Առէին. Շքրիստոնեայս սպանանեմք եւ գՏաճիկսն ազատեմք : Եւ էին երկու եղրարք եպիսկոպոսի քաղաքն Մշրտիչ անուն՝ երթեալ խառնեցան ի գունդա Տաճկացն : Եւ սուր եղին ի վերայ եւ սպանին ըզ Տաճիկսն եւ զհաւատացեալսն ազատեցին : Իսկ երկու քրիստոնեայքն աղաղակեցին եթէ մեք Քրիստոսի ծառայք եմք եւ հաւատացեալ եմք : Ասեն. դարիսոռ սուստ խօսեցայք. վասն այնորիկ ոչ ազատեմք զձեզ եւ զերկոքեանն սպանին. եւ սուգ մեծ եղեւ եպիսկոպոսին թէպէտեւ ճշմարիտ հաւատացեալք մեռան :

Եկին ի վերայ Ճակասուց երկրին Սուրմառու եւ կողրայ եւ ի վերայ Բառնակուտին եւ գաւառին Արճիշոյ : Այս երեք գաւառոս ցրուեալ էին, առհասարակ զամկնեսին կողոպտեցին, եւ ողորմութեամբն Աստուծոյ գերին ազատեցաւ ի ձեռաց նոցին : Եւ սով մեծ եղեւ ընդ ամենայն երկիր : Բայց ի նոյն օրն գիւղաքաղաքն կողրայ կողոպտեցաւ : Քսան եւ հինգ գոմէշ ի վերին կողրայ ի քարէն ի վայր զինքեանս արկին ի դաւառին Արճիշոյ :

Եւ Գրիատոնեայքն սուր ի վերայ եղեալ զենուին. Եւ բաժանեալ ի միմեանց պաշար առեալ յերկիրն Փաջրերունեաց հասին հանդերձ վարդապետօք եւ եպիսկոպոսօք եւ քահանայիւր եւ ժողովրդեամբ : Եւ եկեալ հասաք ի գաւառն Կոդովիս ի գիւղն Դա՞րա : Անդ հանգեաւ սուրբ վարդապետն Ստեփաննուն աշակերտ մեծին Յովհաննու Որոտնեցւոյն, յընկերաց սուրբ վարդապետին Յովհաննու Մեծութայ : Եւ եկեալ տեսաք զաշխարհս մեր աւերակ, Թափուր և դատարկյամենայն ընչից եւ պակասեալ ի հոդեւոր առաքինութեանց՝ ոչ ժամ եւ ոչ պատարագ : Եւ դարձեալ սկիզբն արարին շինութեանց : Զի տուեալ եղեւ երկիրո մեր սպարոնին Արձիշոյ Սահանդ տնուն : Եւ ի մի ս ամին եկն Յուսուփ Թուրքմանն եւ լերստին աւերեաց զաշխարհս մեր. էառ զԱրձէշ քաղաք, եւ զՀիմաթ անուն Պարոն եղեալ երեսուն եւ չորս մարդով սպան վասն զի սպանեալ էր զՍտեփիսաննոս քահանայն՝ ձեռնաւոր քաղաքին : Եւ զմեծազգի տանուտէր մի Մուսէֆիր անուն նահաւուակեցին չարախօսութեամբ եւ նենգութեամբ անսէր քրիստոնէիցն : Եւ զբաղաքն առենայն հրով այրեալ էր : Եւ ի նոյն աւուրս եկն տէրն Ոստանայ Ամիր Եղղին անուն Զաղաթայիւր ի վերայ Յուսուփին. և պատերազմեցան սակաւ աւուրս, եւ դարձեալ հաշտեցան : Եւ ի միւս օրն Զաղաթայ

Պարոն մի ի բերդէն Բասենու եկն 400 մարդով ի գիւղն Աղի յօդնութիւն ամիրային. եւ եհարց զիաւ-  
ղաղութենէ նոցին. եւ նոցա պատասխանեալ թէ ի  
հաշտութիւն եկին՝ գերեւաց զգիւղն Աղի ի մուտս  
արեւուն, եւ դարձաւ ի բնակութիւն իւր : Իսկ քրիս-  
տոնէիցն ի հետս մտեալ, հողմ եւ փոշի արարեալ,  
զգերի եւ զաւարն թողեալ փախեան : Իսկ աստուա-  
ծապաշտ այր մի՝ հարազատ մեր Յովհաննէս անուն  
կոչեցեալ որպէս այծեամն հասեալ ի դաշտն Ար-  
ճիշոյ՝ խարար արար(լուր ետ)(26)Յուսուփին և եղօր  
նորա Արալի անուն, (որք) հասեալ ի մէջ գիշերի՝  
ըմբռնեցին զԶազաթայն եւ զամենայն զօրս նորա  
կողոպտեցին, զոմանս սպանին, զիշխան նոցա Ա-  
թալմիշ անուն ձերբակալ արարին եւ ի Մար յու-  
ղարկեցին :

Եւ մինչդեռ յայս տառապանս կային յաշխարհն  
մեր՝ յանկարծակի թօթ մահու եւ գոյժ լալոյ եհաս  
եթէ զօրք Զաղաթային զերկիրս մեր լցին : Աստ էր  
տեսանել զաղէտս տարակուսանաց եւ զահ եւ զեր-  
կիւղ անօրինաց . զի 15,000 մարդ յԵրիշատ գեղ  
հասեալ մեր փախուցեալ՝ ի լեառն եւ ի ձորս դիմե-  
ցաք : Եւ գիտացեալ անօրինացն՝ 12 օր զլեառն  
շրջապատեալ իրրեւ զանասունս էրէոց որսացին եւ  
կալան զամենեսին. զոմանս սպանին, զոմանս գերե-  
ցին եւ զաշխարհս մեր հրոյ ճարակ ետուն : Եւ վար-

դապետն Յովհաննէս աշակերտօք իւրովք մազապուրծ եղեալ գնաց ի գաւառն Ռշտունեաց. զերկու ամ անդ դադարեաց, եւ պատիւ մեծ ընկալաւ ի հոււատացելոցն Վիրիստոսի :

Եւ անօրէնն Յուսուփի փախեաւ ի Զաղաթայէն յ844 թուականին մինչեւ յ855 այլ ոչ կարաց գալ յաշխարհս մեր : Իսկ յ846 թուականին առաքեաց Թամուրն զշեխ Ահմատ անուն Զաղաթայն յաշխարհս մեր . եւ նա եկեալ ի խնդրելոց վարդապետացն մերոց մեծին Սարգսի Սորբեցւոյ եւ Յովհաննէս վարդապետին՝ Մեծոբայ վանիցն առաջնորդի, շինեաց զաշխարհս մեր աստի եւ անոտի ժողովելով, եւ յոյք բարեբարոյ և քրիստոնեասէր գոլով : Եկին ամենայն ցրուեալքն եւ սկիզբն արարին շինութեան : Եւ ծաղկեցաւ ուսումնականօքն ի ձեռն խաղաղութեան ողորմութեամբն Աստուծոյ մետասան ամ ծովարոլորս :

Իսկ յ850 ամին հանգեաւ ի Վիրիստոս մեծ վարդապետն Սարգիս ալեւորեալ եւ լի աւուրբք : Եւ յաջորդեաց զաթոռ նորա սրանչելի այրն Աստուծոյ՝ աշակերտ նորին մեծ ճգնաւորն եւ վարդապետն Հայոց Վարդան զամն չորս. եւ լուսաւորեաց եւ պայծառացոյց զգաւառոս Արճիչոյ զվերջինն առսուել պայծառ քան զառաջինն : Եւ ժողովեցան առ նա բազում աշակերտք առաւել քան 60 կրօնաւորք ի

Աեծահանդէս ուխտին եւ ի մայրաբաղաք վանան  
Տիրամօր Աստուածածնին : Եւ լուսաւորեալ պայ-  
ծառացոյց զհոգիս ամենեցուն ժամօք եւ պատարա-  
գօք, ուսմամբ գրոց եւ սաղմոսերգութեամբ զամս  
չորս : Եւ փախուցեալ յանօրինաց եւ երթեալ ի  
սուրբ Աւանապատ՝ եհաս օր վախճանի նորա : Եւ  
անդ եղեալ կայ մարմին նորա. եւ հոգի նորա վերա-  
ցաւ ի կառս քրովբէից եւ սրովբէից եւ ի կարգս  
համասեռից աստուածարան վարդապետացն մերոց  
եւ լուսաւորչաց, որոց յիշատակն օրհնութեամբ  
եղիցի. եւ աղօթք նոցա ի վերսոյ սմենայն աշխար-  
հի. ամէն :

Եւ որբ մնացեալ աշստկերտուաց նորա՝ թողեալ  
գնացաք ի գաւառն Ախւնեաց առ մեծն Գրիգոր՝  
վարդապետն ամենայն Հայոց, երկրորդ լուսաւորիչն  
եւ աստուածարանն գեր ի վերոց գոլով ամենայն  
խմաստասիրաց եւ վարդապետաց հնոց եւ նորոց :  
Որ եւ նա ուրախացեալ յոյժ՝ սիրով ընկալաւ զմեզ  
իրբեւ զորդիս իւր սիրելի հոգեւոր եւ բաղձապի. զի  
հայր նորա էր ի գաւառէն Քաջրերունեաց ի քաղա-  
քէն Արձիշոյ : Եւ նորա ժողովեալ դրազումն յաշա-  
կերտուց իւրոց՝ զՄիսիթարն ի Տաթեւոյ, զՅովհան-  
նէսն ի յԵկեղեաց ի վանաց Հերմոնի, զԳալուստն  
ի Վաղանդնու Ախւնեաց սուրբ Կարապետէն, զՄի-  
մէօնն ի Ախւնեաց, զՅակովի, Բոստացի, զԳրիգորն

Արարատեան, զԳրիգորն եւ զՄատթէոսն Զուղա-  
յեցի, զԱւետիան ի յԱստապատէ, զԵղիայն ի  
յՈծոփայ, զՅովհաննէսն ի Վաղանդնու վանացն,  
զՈւման ի Շամախոյ, զՅովհաննէս կարմիրն ի Կա-  
պանայ : Եւ էին երեք յաշակերտացն յայլ տեղիս.  
Մատթէոս Ուխտեցի սուրբ ուխտին Գյոնձասարու,  
Մկրտիչն ի Փայտակարանէ, Ստեփաննոս ի Թաւ-  
րիզոյ : Եւ քահանայս բազում աւելի քան զ60 ոգի.  
Եւ սկսաւ ուսուցանել զգիրս արտօարին խմաստա-  
սիրացն :

Եւ աւշեցոյց ղամենեսին առաւել քան զիմաս-  
տունսն Հելենացւոց : Եւ ապա զջորերտասանն  
թուղթսն Պօլոսի առաքելոյն եւ զԱռ որս գիրս  
Աստուածաբանին Գրիգորի : Եւ էր սուրբ ուխտին  
առաջնորդ հեզահոգին եւ ընտրեալն յորովացնէ՝  
սուրբ եպիսկոպոսն Տէր Առաքել եւ մեծ խմաստա-  
սէրն քուերորդին մեծ վարժապետին, որ ունէր ըզ  
միտրն իրրեւ զմբեղինաց, եւ էր սիրող ամենայն  
առաքինութեանց : Եւ երկոտասան եղբարք, աշա-  
կերտք մեծին Ասրգսի, մեր էաք որ յետ մահուան  
նորա գնացաք յաշակերտութիւն նորա . առաջին՝  
Յակոբ, Մարդարէ, Յովհաննէս, Մկրտիչ, Կարա-  
պետ, Մելքիսէժ, Ասրգիա, Մատթէոս, Կարապետ  
եւ ես անսարժանս Թուվմա : Եւ երկու ամ զմեզ  
միտիթարեաց Աստուածաշունչ գրուիր : Եւ ի հալած-

մանէ անօրինաց շարժեցաւ ի գաւառէն Ախոնեաց առեալ զմեղ՝ եկն ի գաւառն Արճիշոյ : Եւ արարեալ խր բնսկութիւն զատուածահաճոյ ուխտն Մեծորայ առ հեղահողի եւ աստուածարան եւ երջանիկ այրն Աստուծոյ վարդապետն Յովհաննէս . եւ յոյժուրախացաւ վասն զի ի նոյն ամին 858 աւարտեալ էր զնորաշէն տաճարն սուրբ Աստուածածնին :

Եւ ժողովեցան առ նա բազումք ի վարդապետացն . Գրիգոր Նահատակն եւ սուրբ սոյրն Խլաթեցի , Յակոբ Ովսաննացի ի Ռշտունեաց , Մարգարէն ի Վարագայ , Յակոբ ի յԱսպիսնկու , Յովհաննէս ի Փափլինոյ , Ստեփաննոս ի Բերկրոյ , Մկոտիչն ի Հիղնայ , Յովհաննէսն ի Բաղիշոյ , Սարգիս վարդապետն ի Յարութենէն , Մելքիսէթն ի յԵրզնկու , եւ ի քահանայից և յաշակերտաց աւելիքան 80 արեղայ : Եւ զամ մի լման միսկթարեաց զամենայն եղբարսն անձառելի ցնծութեամբ . եւ զերիս գիրս մեկնեաց դասիւ՝ զԱւետարանն Յովհաննու աւետարանչին , զգիրս Յորայ նահատակին եւ զգիրս գրչութեան երկոքեան վարդապետացն Գէորգայ Լամբրոնացւոյն եւ Արխտակէսի :

Եւ ի սոյն ժամանակի ի խնդիր ելեալ վասն կապանաց Աղթամարսյ . եւ մեծահանդէս ժողովարարեալ արձակեաց զամենեսեան ( ի կատանաց ) Գույ կաթողիկոսացն մերոց : Եւ վերակացու եւ

Նախախնամող էր երջանիկ եւ երանելի ճգնաւոր  
վարդապետն Յովհաննէս Ամեծոբայ վանիցն, որ  
կայր ի վերայ բազմութեան եղբարցն եւ կերակրէր  
զամենեսեան հացիւ եւ հանդերձիւ. եւ կայր ի մեծի  
փառաւորութեան սքանչելի այրն Աստուծոյ Յովհաննէս  
վարդապետն մեր : Եւ այս էր ի թուականիտ  
մեր 868 ամի : Իսկ յետ ամի միոյ եկեալ աշակերտք  
նորա կացին ժամանակս ինչ և գազուագողի առեալ  
գնացին ի գաւառն Արարատեան առ մեծ վարդա-  
պետն Յակոբ Սաղմոսավանից՝ հոգեւոր հարազատն  
իւր : Եւ մեր ամեներին վարդապետք եւ աշակերտք  
գնացաք առ նա : Եւ եկեալ դարձեալ աշակերտք  
նորա ի Արմեաց ի սուրբ առաքելոցն Ատաթէոյ  
իմաստասէր եպիսկոպոսն և վարդապետն Տէր Առա-  
քել՝ տարաւ զնա : Եւ յետ ութն աւուր գնալոյ նորա  
հիւանդացաւ եւ փոխեցաւ յաստի կենացս ի հան-  
դերձեալն. որոյ յիշատակն եղիցի օրհնութեամբ, եւ  
ազօթիւք նորա Քրիստոս մեզ ամենեցուն ողորմես-  
ցի : Իսկ սքանչելի այրն Աստուծոյ Յովհաննէս՝  
վարդապետն մեր, ի սոյն աւուրս հանդեաւ ի Քրիս-  
տոս, և տարեալ եղաք ի մեծահանդէս ուխտն Հայոց  
թառ՝ գերեզմանակից նոր վկային Յովհաննէս՝  
վարդապետի նոցա : Եւ սուգ անբժշկելի մնաց ի  
վերայ երկրի մերում, մեզ եւ ամենայն բնակչաց  
անապատին եւ գաւառին, զի ոչ եղաք արժանի-

սուրբ նշխարաց նորա, թէպէտ աղօթք նորա եւ  
բարեխօսութիւն է ընդ ամենայն ծագս երկրի. ամէն :

Այս երջանիկ եւ աստուածահաճոյ վարդապետա  
Յովհաննէս եւ բարի օրինակս ամենայն առաքինու.  
Թեանց եւ եկեղեցւոյ վարդապետաց էր ի գաւառէն  
Քաջքերունեաց, ի գիւղաքաղաքէն Զարիչատու,  
բարեպաշտ եւ աստուածաէր ծնողաց զաւակ սրբ-  
բատէր քահանայի միոյ Ներսէս անուն : Եւ խնդրեաց  
յԱստուծոյ եւ խոստացաւ նմա եթէ լիցի զաւակ  
նմա՝ տայէ զնա Աստուծոյ փոխարէն անձին իւրոյ :  
Իսկ որ զկամն երկիւղածաց իւրոց առնէ բարերար  
եւ մարդասէրն Աստուած ետ նմա զաւակ բարի, եւ  
եղ զնա յուսումն Աստուածաշունչ գրոց յաստուա-  
ծաբնակ սուրբ ուխտն գեղեցկաղարդ անսապատն  
սուրբ Աստուածածնի Մեծորայ վանք վերածայ-  
նեալ, առ հրեշտակալրօն եւ ճգնաւոր այրն Աս-  
տուծոյ Նահապետ կրօնաւորն : Իսկ նորա վարժեալ  
եւ ուսեալ զԱպաղմոսն Դաւթի եւ զմանոր ուսումն  
եկեղեցւոյ : Եւ տեսեալ զնա հեզակոգի և սրբազն  
արհի եպիսկոպոսն Տէր Ներսէս՝ կոչեաց զնա յաս-  
տիման քահանայութեան. եւ նա ետ զանձն իւր  
յընծայ Աստուծոյ . եւ կրթէր ի վարս ճգնութեան՝  
մանաւանդ ի յերկս եւ յաշխատանս Աստուածային  
գրոց գեր ի վերոյ գոլով ամենայն ընկերաց իւրոց :  
Եւ շարժեալ ի Հոգւոյն սրբոյ կամէր եւ յանկացը

Հասանել վարդապետական իմաստութեան : Եւ  
ոչ գոյր վարդապետ ի ծովեզերս Վասպուրականին :

Ապա միարանեալ հետ սրբասէր եւ բարեբարոյ  
քահանայի միոյ Ստեփաննոս անուն, որ եւ նա աշա-  
կերտեալ էր վարդապետին Յովսիսի ի նոյն անա-  
պատէ : Եւ ելեալ գնացին առ մեծ վարժապետն  
Յովհաննէս մականուն կախիկ, յերկիրն Սիւնեաց  
ի յՈրոտն գաւառ, որ իրրեւ արեգակն փայլէր ընդ  
ամենայն ազգս Հայոց եւ լուսաւորէր զամենեսեան  
աստուածային գիտութեամբ . Եւ կայր ընդդէմ  
հերձուածողաց աղթարմանյից երկարնակաց : Եւ  
յոյժ սիրեցեալ եղեն ի նմանէ իրրեւ հրեշտակ Աս-  
տուծոյ և ընկերակից նորա Ստեփաննոս զերիս ամս  
աշակերտեալ՝ ետ նմա գաւագան իշխանութեան  
գալ միսիթարել զբազմութիւն քրիստոնէիցն եւ վա-  
նորէիցն անխրատից զի անտերունչ էր գաւառն  
այն : Իսկ երանելի սյրն Աստուծոյ Յովհան երկո-  
տասան ամ առ նա դադարեալ աշակերտակից ունե-  
լով զմեծ վարդապետն Գրիգոր եւ բազում վար-  
դապետս եւ աշակերտու. եւ նա ուխտ եղեալ էր  
անձին իւրում եթէ տացէ ինձ Աստուած իշխանու-  
թեան կարգ վարդապետութեան՝ վկայ ինձ Միա-  
ծին Որդին լիցի, որ մօր նորա Աստուածածնի կու-  
սին տաճար շինեմ յոյժ հրաշտի :

Իսկ մեծ վարդապետն Յովհաննէս յ835 թուակա-

Նին ետ նմա զգիրս ասացուածոց վարդապետական կարգի ի բերան առնուլ զի տացէ նմա հրաման իշխանութեան : Եւ ի նոյն ամի յանկարծակի տկարացեալ հիւանդացաւ, եւ կամ եղեւ Արտարչին գնալ առ նա . կոչեաց զմեծ վարդապետն եւ զընկերակիցն նորա, օրհնեաց զնոսա ամենայն հոգեւոր եւ աստուածային օրհնութեամբ, եւ եղ զԳրիգոր ամենեցուն գլուխ եւ ուսուցիչ, եւ յանձն արար նմա զվարդապետն Յովհաննէս տալ նմա ըստ վարդապետական իշխանութիւն եւ առաքել յաշխարհ իւր :

Իսկ նորա յետ մահուան մեծին Յովհաննու արար մեծահանդէս կոչումն, եւ ետ նմա վարդապետական գուաղան, եւ առաքեաց յերկիրն իւր վարդապետական ճոխութեամբ եւ աշակերտօք յետ աւերման վերին կողմանն ի չար բունաւորէն Թամուր Զաղաթայէն : Եւ եկեալ նորա ի սեպհական գաւառն իւր ուրախութեամբ եւ ցնծութեամբ : Եւ ելին ընդ առաջ նորա մեծ վարդապետն Արքիս ի մեծ ուխտէն Խառարաստայ աշակերտօք իւրովք եւ ամենայն բազմութեամբ հաւատացելոցն. եւ յետոյ եկն ի հայրենի տուն իւր ի սուրբ ուխտն Մեծորայ վանք յաւուր Նոր Վիւրակէին :

Աստ էր տեսանել զուրախութիւն անապատին սրբոյ եւ ամենայն ընկերաց իւրոց զի տեսանէին

զնա իրեւ զլուսաւորիչն Գրիգոր և կամ զլազար<sup>9</sup> սիրելին Քրիստոնի, յարուցեալ ի մեռելոց : Եւ յերկրորդ ամին սկիզբն արար շինութեան սուրբ եկեղեցւոյն վասն դաշանցն էւ ուխտին եղելոյ. եւ ոչ պատահեցաւ զի ոչ գոյր իմաստուն ճարտարապետ ի գառառ իւր : Իսկ նորա համբերեալ ժամանակ ինչ մինչ ի Տեառնէ լինիցի յաջողումն գործոյն. բայց ղարդարեաց զսուրբ ուխտն ժամօք, աղօթիւք եւ պատարագօք, ընթերցմամբ գրոց եւ ուսումնականօք եւ գեղեցիկ կարգաւորութեամբ, ծառօք եւ տնկօք իրեւ զդրախտն եղեմական : Եւ գային հաստացեալքն եւ շարժէին ի բարին, եւ ասէին. ահա տեսաք զԵրուսաղէմ : Քարոզութեամբ աւետարանին վարդապետութեամբ լուսաւորեաց զշրջակայսն Ալասպուրական գաւառիս, մանաւանդ ճգնաւորական վարուք եւ տքնութեամբ անցուցանէր զկեանս իւր մինչ զի յամենայն ժամանակս իւր զգլուխն իւր ոչ եղի սնարա. այլ գիրս ունելով ի ձեռին՝ այնու անցուցանէր զպանդխտութիւն կենցաղոյս դառնութեան : Եւ այնուհետեւ ետ նմա չնորհս թժկութեան Տէր Յիւսուս : Զի զցաւ եւ զհիւանդութիւնս փարատէր ի յախտաժետաց Աւետարանին ընթերցմամբ եւ ձեռն դնելով ի վերայ տկարաց ոչ միայն հաւատացելոց այլ եւ անհաւատից : Եւ կատարէր Քրիստոս զիսնդրուածս նորա վասն սերտ հաւատոյն, զոր ու-

նէր առ Քրիստոս, եւ յուսոյ հաւատացելոցն : Եւ վասն այսորիկ սիրելի լինէր ի յանհաւատիցն եւ ի հաւատացելոցն իբրեւ ծշմարիտ այր Աստուծոյ : Այլ և յոյժ տագնապէր հոգի իւր վասն շնութեան սուրբ եկեղեցւոյն :

Իսկ որ զիամն երկիւղածաց խրոց առնէ եւ աղօթից նոցա լսէ : Այր մի ի գերութենէ Թամուրին ազգաւ Հոռոմ Ֆարած անուն եկեալ էր ի Մերդին քաղաք՝ յոյժ իմաստուն եւ ճարտար շինող : Յղեաց եւ կոչեաց զնու, եւ սկիզբն արար շինութեան սուրբ եկեղեցւոյն յատկս Զաղաթային յորմէ ամենայն եկեղեցիք Հոյոց ի հիմանէ քամկեալ լինէին : Եւ թէպէտ բազումք յանհաւատիցն մախացեալ լինէին, եւ միանգամ կամեցան (քակել) անհաւատքն զառաջին հիմնարկութիւն ի քաղաքին Այճիշոյ . այլ Զաղաթայն դայըր եւ անձամբ առնոյր ի վերաց անձին իւր զբարինսն, եւ բերէր զնէր ի հիմն սուրբ եկեղեցւոյն . եւ զթշնամիսն սուրբ եկեղեցւոյն նկուն եւ ափ ի բերան առնէր Աստուած : Եւյեօթն ամի վճարեաց Աստուած աղօթիւք վարդապետին եւ աներկրայ յուսովն զոր ունէր առ Քրիստոս միաբանութեամբ սուրբ ուխտին որք զանձինս խրեանց ետուն Աստուծոյ եւ սուրբ եկեղեցւոյ Տիրածին կուսին : Յ851 ամին թուականին սկսաւ, եւ յ858 ամին աւարտեցաւ յեօթն ամին

ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ . ամէն :

Ի սոյն ամի եկին վարժապետն Գրիգոր վարդապետօք եւ աշակերտօք . եւ գնացեալ դէմ ընդ առաջ նորա հոգեւոր ծնողին իւրոյ, եւ բերեալ յանապատն իւր՝ հանգոյց զնա ի բազում աշխատութեանց իւրոց : Եւ ժողովեցան առ նա բազում վարդապետք և աշակերտք՝ մետասան վարդապետք եւ 80 կրօնաւորք, որպէս յառաջագոյն գրեցաւ . եւ պայծառացեալ լուսաւորեաց աստուծային վարդապետութեամբ զամենեսին իրրեւ Փրկիչն մեր Յիսուս, որ նստէր ի լերինն եւ ուսուցանէր զամենեսեան երանութեանցն (27) վարդապետութեամբ : Իսկ սուրբ վարդապետն Յովհաննէս անձառելի ուրախութեամբ զուարձանայր և ի սպասու կայր պիտոյիցն պակասութեան : Եւ ասէր առ Քրիստոս «Տէ՛ր Յիսուս՝ ես զՄայր քոյ պատուեցի, դու զիս պատուեցեր վարդապետօք և հոգեւոր հարրք իմովք եւ գրոց աշակերտօք եւ գրագրօք եւ ճզնաւորօք եւ ճշմարիտ ուսումնականօք, և ինաւակաստիս տաճարի Մօր քոյ առաքեցեր զնոսա : Զի՞նչ տաց քեզ փսխարէն և հատուցումն, զի ոչ ինչ ունիմ աղքատիկս, բայց միայն օրհնենիք և գովեմիք զամենասուրբ Երրորդութիւնդ և զմայր Միածնիդ զի արժանի արարեր զիս հասանել յաւարտ տաճարիս : Եւ այս ոչ է բառական միայն օրհնել զի դու ի հրեշտակաց և ի

Հրեշտակապետաց օրհնաբանիս. այլ զանձն իմ խակ եղից ի վերայ քո. այլ երթեալքարողեցից յականճա անհաւատիցն թէ սուտ է առաջնորդն ձեր, և գուք մոլորեալ էք ընդ նմա ի կորուստն անդիւտ : Դարձարուք ի Քրիստոսն իմ և տեսէ՞ք թէ ո՞րքան պարգեւստաց պարգեւստ :

Եւ ոչ թէ միայն ի ծերութեան ժամանակին քարողէր անհաւատիցն սուտ և խարերայ գոլ զնոսա. այլ զամենայն ժամանակս իւր անահ, աներկիւղ նախատէր զնոսա և զկորուսիչ առաջնորդն նոցա : Եւ ոչ ոք իշխնէր միսել ի նա ձեռն ոչ իշխան եւ ոչ որք ընդ իշխանութեամբ. այլ սարսէին ի պատկառելի դիմաց նորա զի կենդանի նահատակեալ էր ըզ մարմին իւր պահօք եւ աղօթիւք եւ ամենայն սրբութեամբ :

Իսկ մեծ վարդապետն Գրիգոր օրհնեաց զաշխարհս մեր, և առեալ զաշակերտս իւր՝ ելեալ գնաց ի գաւառոն Արարատեան : Եւ վարդապետն Յովհաննէս և ամենայն աշակերտը զհետ նորա ընթացաք : Եւ անտի ելեալ գնացաք ի շնորհալից աթոռն իւր սուրբ Առաքելոյն Ստաթէոսի : Եւ աւուրս ութառողջ մնացեալ. և ապա կոչեաց զնա առ ինքն վերին կոչողն տալ նմա ղաշխատութեան վարձնյաւր տօնի Նախավկային Ստեփանոսի մեծի առաքելոյ : Իսկ սքանչելի այրն Աստուծոյ Յովհաննէս

վարդապետն մնաց ի գաւառն Արարատեան, եւ  
հասեալ ի Զատկի յարութեան տօնն՝ ի նոյն յօրն  
որ ասի Անսկիզբն Աստուած, ի յարութեան օրն  
գնաց առ Քրիստոս : Վասն այնորիկ անդ եղեւ  
վախճան կենաց նորա, զի գնաց երկիր պատանել  
աստուածամուխ գեղարդեանն առաջի պատկերին  
Ամենափրկչին, որ և դրոշմեալ եղեւ աղօթիւք  
սուրբ Աւետարանչին Յովհաննու ի վերայ սրբոյն  
Գողգոթայի ի խնդրոյ տիրամօր Աստուածածնին :

Եւ յետոյ պարգեւօք տուաւ Աշոտոյ թագաւորին ի  
Հոռոմոց թագաւորէն . և բերեալ եղեւ ձեռամբ  
կիւրապաղատ իշխանին : Եւ անդ երկիր պաղեալ,  
հասեալ վախճան կենաց նորա վերափոխեալ եղեւ  
ի կեանս անպատումն առ Տէր Յիսուս, որում բաղ-  
ձացը հասանել : Եւ մեք աշակերտք գոլով նմա եւ  
հոգեւոր որդիք, Մկրտիչ և Թովմա և նահատակն  
մեծ վարդապետն Ռշտունեաց Յակոբ և վարդա-  
պետն Մկրտիչ ի Բերկրոյ, ժողովեցաք և բազում  
եղբարս, և եղաք զնա ի հանգստարանի նոր վկային  
Յովսեիայ և Եղիա վարդապետին ի մեծահանդէս  
ուխտն Հայոց թառ : Եւ բաղում բժշկութիւնք  
լինէին ի սուրբ ոսկերաց նորա ի փառս Քրիստոսի  
Աստուծոյ մերոյ : Որոյ յիշատակն օրհնութեամբ  
եղիցի, եւ աղօթիւք նորա Տէր Յիսուս ողորմես-  
ցի, ամէն :

Դարձեալ դարձցուք ի նոյն կարգ պատմոթեանս  
ուստի սկսեալ եղև։ Յ850(28)թուականին շարժեցառ  
վիշապն մահաշունչ Թամուր ի Ամրղանդայ և եկն  
ի վերայ աշխարհիա մեր, և գնաց ի տուն Շամայ.  
տերեաց զէալապ և գամենայն շրջակայս նորա :  
Եւ անտի գնացեալ ի Դամասկոս ի Դմշխ քաղաք՝  
աւերեաց գամենայն աշխարհն ներքին մինչ զի մերձ  
գնային վայրուց քաղաքին Երուսաղէմի : Եւ ձմեռն  
մի լման եկաց ի Դամասկոս : Եւ եկին առ նա կա-  
նայր առաջնորդաց նոցա որք էին ուսուցիչք Ղաղի,  
Մ'իւֆրի, Միւտափիս, Խմամ և Դամիշման : Եւ ասեն  
« դու փատիշահ ես ամենայն աշխարհիա, և ի հրամա-  
նէ Աստուծոյ եկեալ ես զի նոքա որք զհրամանն  
Աստուծոյ կոխեալ են՝ հարցանես, մինչ ոչ գոյ այս-  
պիսի հարցանող իրրեւ զբեղ, և զայնպիսիսն որք  
շարքն են՝ իջուցանես կենդանւոյն ի դժոխա. վասն  
զի յայս քաղաք ամենեքին չարագործք և արուա-  
գէտք են մանաւանդ սուտ և խարեբայ մոլէքն :  
Ասէ ցնոսա « մի գուցէ սուտ լինիցիք և դուք սատա-  
կիք ի ձեռաց իմոց » : Ասեն ցնա « մի լիցի սուտ ի  
գսառուց կանանց, դու կոչեալ զառաջնորդան մեր, և  
դէմ յանդիման վկայեմք նոցա :

Եւ հրաման արար բովանդակ ամենայն քաղաքին  
ստատիկ և ահեղ գոչմամբ զամենայն առաջնորդս  
շար ուամանն առ ինքն կոչել : Եւ վաղվաղտիքի ժու-

զովեցին գամենայն դատի և միւռառիս. և ասէ այս քաղաքա ո՞ւմ քաղաք է ». Եւ նոքա ասեն « փեղամ բէրին է փամտիշամ » : Եւ նա ասէ ցնոսա « փեղամբէրին գիրքն առ ձեզ ունիք թէ ոչ ». Եւ նոքա ասեն « մեր մահն և կեանքն նորա գրովն լինին, բայց ոչ ընթեռ նումք » : Ասէ ցնոսա « փեղամբէրն ձեր հրաման տուեալ է ձեզ չարագործութեան » — Ասեն ցնա « քաւ լիցի » — Ասէ « եթէ լինիցի այսպիսի մարդ՝ իրաւումք դատաստանի նորա զի՞նչ լինիցի » — Ասեն « ամենաչար տանջանօք պատժեալ տանջեսցին, և ամենայն ընտանեօք կործանեսցին » — Եւ ասէ ցնոսա « այն դուք էք » — Ասեն ցնա « լունդ քեար՝ այս քաղաքս Մուստաֆային է քաղաք. այս պիսի բան ոչ եղեւ և ոչ լինելոց է : Եւ կոչեաց ըզ կանայս առաջնորդացն. և նոքա եկեալ՝ դէմ յանդիման արանց վկայեցին զգործս անօրէնոթեանցն զոր գործեալ էին :

Եւ հրաման եղեւ ի նմանէ՝ (և ասէ) 700,000 մարդ կայր առ խ' 700,000 զլուխ այսօր և վաղիւն այսր բերջիք. և եօթն բերդ շինեսջիք. որ ոչ բերիցէ զգլուխ՝ հատցի գլուխ նորա : Եւ որ ասիցէ. Ցիսէի եմ՝ ի նա ոչ ոք մերձեսցի : Եւ բազում զօրացն սուր ի վերայ եղեալ՝ կոտորեցին զսմենայն քաղաքըն. և պակասեալ լինէին այր մարդ, և զլուխ գտանել ոչ կարէին. ապա կտրէին զգլուխս կանանցն

և դհրամանն ի տեղ բերելին ամենայն գորկն : Ասա  
էր տեսանել զօրինակն համօրէն դատաստանին և  
դգոչումն և դաղասլակն, զլաց և գհառաջումն : Եւ ով  
ոք որ ոչ կարէր սպասնանել զգլուխ մի՛ ի 100 բանկաց  
գնէր և տայր ի համարն : Եւ բազումք ի զօրացն ոչ  
սպասնանել կարէին և ոչ գնել զգլուխս նոցին հա-  
տանէին և ի շար մաէ բլուր գնէին : Եւ հոգեւոր որ-  
դեակն մեր Մխիթար ի քաղաքէն վանայ, պատմէր  
զանցս աղէտիցն և զմահ նոցին. որ և ինքն մազա-  
պուրծ եղեալ ապրեցաւ ի ձեռաց նոցին : Այս եզե  
ի Դամակոս : Դարձեալ առարեաց զզօրս իւր գնալ  
ի Պաղտատ քաղաք, և նոյն թուով համարան  
700,000 մարդ ի Պաղտատ մսաղէղ բերդ շինեցին :  
Եւ մէջիքն Ոստանայ և հոգեւոր որդեակն մեր Մխի-  
թար էին ընդ նոսա : Եւ վասն այն աշխն և երկիւղին  
Մխիթարն այն միակեաց եղեւ և առ մեզ բնակե-  
ցաւ երեք ամ . և տպա դնաց առ Քրիստոս : Եւ  
դարձեալ ի միւս ամին առեալ զզօրս իւր՝ եկն ի վե-  
րայ Սերաստիա քաղաքին, և քաղաքն այն Խմորում  
Խոնդքեար բռնաւորին էր կողմանցն Հոռոմին : Եւ  
նոքա զառաջինն ոչ ետուն զքաղաքն ի յանողորմ  
բռնաւորն . և խարեալ զնոսա ասէ ցնոսա ամի երկըն-  
ջիք զի ով զձեզ սրով սպասնանէ՝ սուր նոցա ի սիրտա  
նոցա մտանէ » . եւ նոցա բացեալ զքաղաքն՝ եղին  
քնդ առաջ նորին ուրախութեամբ և ցնծութեամբ

իրր ազատեալ ի բանտէ : Եւ առժամայն չար հրամանն եհաս ի վերայ զօրաց իւրոց դի զաղքատսն գերի առցեն և զմեծատունսն չարչարեացեն և ըզթագուն դանձն նոցա առցեն, և զկանայսն յագիա ձիոցն կասկել և արշաւել և զորդիս և զդստերս ժողովեալ ի դաշտավայրի միոջ անթիւ և անհամար՝ հրաման ետ իրրեւ զորայս կամնասայլից կոխել զնոսա անողորմութեամբ :

Աստ էր տեսանել զաղէտս տարակուսանաց անմեղ տղայոցն ի ձեռն չար բոնաւորին հաւատացելոցն և անհաւատիցն : Եւ այնքան զօրացն որ ելանէին ի բազարէն, և երդուսաւնոցառչսպանանել զնոսա, պատռել ետ զերկիր, և կասկել ետ ոտիւք և ձեռօք 4,000 ոգի, և կենդանի թաղեցին զնոսա, և ջրով և մոխրով ծածկեցին զնոսա : Եւ ազաղակ նոցայերկինս ելանէր :

Եւ ո՞վ կարէ ընդ գրով արկանել զայս դառն տան ջանս, զորս գործեաց կարապետ նեռին՝ անողորմ բոնաւորն : Բայց սակաւ մի ծանօթ առնեմ զեկեալսդ զկնի մերում ժամանսկաց, որ տեսար և լսեցաք ի քրիստոնէիցն, որ եկին առ մեզ զերկին և տեարք գերեացն :

Եւ անտի չուեալ գնաց զօրօք բազմօք ի վերայ Խոնդքեար Խլտրումի՝ որդւոյ Մուրատ Պէկին : Եւ նորա ժողովեալ զզօրս բազումս չորեքպատիկ, և յոլովքան զզօրս բազումս Թուամուրին՝ եկն ընդ առաջ

Նորա : Եւ նորա խարեալ զնա՝ խոյս ետ ի գիշերի  
և էառ զաշխարհ նորին, և յետո դարձաւ. և պատերազմեալ ըմբռնեաց զնա և զրաղումն ի զօրացն(29):  
Եւ արար աւար, և գերի էառ անթիւ քան զաւտեղա  
երկնից և քան զաւազ ծովու, մինչզի 60,000 տուն  
Ղարաթաթար անուն տամբ և որդովք ի Խորասան  
գերի գնաց. և այլ անպատմելի և անճառելի, զոր  
ոչ ոք կարէ ճառել : Եւ ի գնալն ի կողմանցն Հոռու-  
մոց իլորումին՝ եկն նախ ի վերոյ տանն Վրաց  
գերել և կորուսանել զնոսա : Իսկ թագաւորն  
Վրաց Գորգի եւ երկու եղբարք կոստանտին և  
Դաւիթ իմացեալ զչարութիւն նորա՝ վաղվաղակի  
զօրաժողով եղեն, և զամենայն ազգն Վրաց և  
Հոյոց յամրոցս արկեալ սլահէին. և ինքեանք զնեղ  
և զկածան տեղիսն ունէին : Եւ բանսարկուն սատա-  
նայ մտեալ յերեք չարազատ. որդիք անօրէնք եւ  
անաստուածք՝ գաղտագողի բաժանեալ ի թագա-  
ւորէն՝ գնացին առ չար բռնաւորն, և ցուցին ըզ  
ճանապարհս մտանելոյ ի մոյրիս նոցա : Եւ յղեաց  
զօրս բազումն ի վերին կողմանէ, և ըմբռնեալ առին  
զամենայն բազմութիւն քրիստոնէական գնդին. ըզ  
մեծամեծան սպանանէին և զփոքունսն գերի առեալ  
տանէին առելի քան զ60,000 ոգի :

Իսկ թագաւորն Գորգի մազապուրծ եղեալ՝ 100  
ոգի առեալ բնդ ինքեան և ի մէջ զօրացն մտեազ

յիշելով զանումն Յիսուսի Քրիստոսի դրազումն կոտորեցին, և ազատեալ դնացին ի տեղի ամրականին : Եւ նոքա սրով և հրով զամենայն աշխարհն Արաց կործանեցին, ղեկեղեցիսն քակեցին, զգերիան առեալ հասուցին յաշխարհս մեր մերկ և բոկիկ, քաղցած և ծարուած, ամեն հինգ Զաղաթայ 20 գերի ունելով : Եւ բազում այն էր որ ի ճանապարհին մեռանէին . և նոքա քար առեալ ջախջախէին ըզ գլուխս նոցա զի մի կենդանի մնասցեն . և ինքեանք թողեալ գնացին ի ճանապարհն իւրեանց : Զոր տեսաք աչօք մերովք և լուաք . և վայ և եղուկն բարձրացաւ ի վերայ քրիստոնէից ազգիս . տեսանէաք ըզ գերիան եւ օգնել ոչ կարէաք . այլ հեղձամղձուկ լեալ՝ ողբով եւ լալով խոյս տուեալ փախչէաք ի նոցանէ :

Եւ առեալ գնացին ի Խորասան . և պիղծ բռնաւորն զրդին իւր զՄիրան-Շահ անում եգ ի վերայ կողմանցն Ատրպատականի ի Թաւրէզ շահաստանի . և նա եդ որդւոյ իւրում Օմար անուն ատեցող ազգիս քրիստոնէից : Որ և յառաջին ամի իշխանութեան իւրոյ երեք իշխան յազդէս մերմէ, որք իբրեւզձիո մի ողկուզաց էին մնացեալ ի մէջ ազգիս, դարձոյց բռնութեամբ ի յանհաւատութիւմ՝ զորդի իվանէին զթոռն Բուռթէլին զբութէլ անում յազդէն Օրբէլեանց ղջէրն Որոտնայ, և ղեղբայր նորին Աւմ-

բատ անուն տարան ի Ամրղանդ ընտանեզք իւրովք, որ յետոյ աստուածային ողորմութեամբն և աղօթիւք նոցա դարձան ի հայրենիս իւրեանց. և զՃէրն Եղեգեաց Տարսային անուն՝ զորդի Գորգոնին ու բացուցին. և զՃէրն Մակուայ հանին ի սուստ և յերկարնակ աղթարմայութենէն, և աղատորդի մի Ազիտան անուն ի յԱրարատեան գաւառէն ի գեղջէն Աղցուաց. որք և յետոյ զղջացան և եղեն ճշմարիտ հաւատացեալք Քրիստոսի եւ ժառանգք արքայութեան :

Դարձեալ չար վիշապն եւ նեռին կարապետն, պիղծն Թամուր առեալ զզօրս և մտեալ ի յաշխարհն Հոնաց՝ յաղթեաց թագաւորին նոցա Թողթամիշ անուն. և զամենայն աշխարհն արար հնազանդ ինքեան : Եւ եղիր նոցա թագաւոր իդիկայ անուն. և նստաւ նա ի Արայ. և տիրեաց վեց ամսոյ ճանապարհ մինչ ի յելան արեւու : Եւ դարձեալ գնաց ի յարեւելս ի Հնդկաստան, և էառ զԴիկի քազար(30), զոր և ասէին թէ 40 օր նստաւ անդ զօրաք իւրովք. և եզր քաղաքին ոչ դիտէր. այլ և հնազանդեցոյց զամենայն աշխարհն Ամազոնից որ է կանանց երկիրն : Այլ և էառ զԲէշուրահրայ եւ զԲալաշխան (Բաղաշխան)՝ զերկիրն Հնդկաց իւր ինքեան, եւ զծովն զայն, ուր զմարգարիտն հանեն իջանելով ի յատակս ծովուն :

Իսկ որդի Թամուրին Միրան-Շահ անուն, յոյժ  
ողորմած և բարեբարոյ. որ և ընկալաւ զմեծ վար-  
դապետն զԳրիգոր սիրով իրրեւ զՀրեշտակ Աս-  
տուծոյ : Եւ չարախոսէին նմա զԲաղէշ քաղաքի  
ամիրայէն Իրրահիմ անուն, որ նստաւ ամիրայ յետ  
եղբօր իւրոյ Ամիր-Շարաֆին, եթէ ոչ կամի հաւ-  
զանդիլքեզ : Եւ Իրրահիմն այն էր յոյժ ատեցող  
Քրիստոփի և քրիստոնէից ազգի, և ոչ իրրեւ զեղ-  
բայրն իւր սիրով ամենայն քրիստոնէից. այլ կամէր  
բառնալ զհառատա մեր. և կանչել ետ ի քաղաքին  
եթէ մի է Աստուած և ոչ Որդի և ոչ Հոգի. և այն-  
պիսի Աստուած որ ոչ ունի խմաստութիւն և ոչ հո-  
գի : Եւ ոչ կամէր դիսաղաղութիւն, և կասլուտ արկ  
ի քաղաքին. և յոյժ դառնացան քրիստոնեայրն : Իսկ  
ողորմածն Աստուած զարթոյց զնա ի բարկութիւն :  
ի յ845 թուականին եկեալ զօրգք իւրովք եկն ի  
յԱրձէշ քաղաք, երկիր պազեաց սուրբ եկեղեցւոյն  
և ոչ մոտաւ ի մզկիթ Տաճկացն. այլ արհամարհեաց,  
անարգեաց զնոսա : Եւ եկն ի վերայ Բաղիշու յան-  
կարծակի. և ամիրայն Իրրահիմ եկն առ նա. եւ  
ըմբռնեալ զնա՝ սպան, և բազում աւերս արար ամե-  
նայն քաղաքին և դաւառին : Եւ Տէրն Ոստանին  
Եզդին ամիրայն անկեալ ի մէջ նոցա՝ հաշտութիւն  
արար նոցա : Եւ զորդի ամիր Շարաֆին փոքր տղայն  
Շամշատին անուն եղ ամիրայ, և զնաց ի Թաւրէզ :

Այս բան ի մէջ անկաւըստ կարգի շարադրութեան :  
Այսբան առ այս :

Եւ պիղծն Թամուր երթեալ յաշխարհն իւր՝ առ-  
տակեցաւ շան սլէս(31). և ոռնայր մեռելն իրրեւ ըզ  
շուն ի պիղծ խատիրայ Մ'տշարին : Եւ անտի հանեալ  
ի հուր եղին և ի ջուր անցուցին. և պիղծ ձայն նորա  
ոչ դադարէր բազում ժամանակս : Իսկ Թուրքմանն  
Յուսուփի յետ սատակման Թամուրին ի յ857 առեալ  
զակաւ զօրս իւր տառապեալ և անզէն, ելեալ ի  
բանտէն Դամասկոսի եկն վերատին յաշխարհս մեր,  
նախ ի քաղաքն Բաղէշ : Եւ որդի ամիր Շարաֆին  
Շամշատին ամիրայն գնացեալ ընդ առաջ նորա  
յոյժ մեծարեաց զնա հացով և ջորեօք, ձիովք, զինուք  
և ամենայն զինուորական և ալատերազմական սրա-  
րաստութեամբր : Եւ առեալ եկն ի վերայ աշխար-  
հն Ուշտոմեաց և վանակերտին Վարագոյ : Եւ  
նոքա պատրաստեալ զզօրս իւրեանց՝ ելին ընդ ա-  
ռաջ նորա աւելի քան երկոտասան հազար. և խա-  
րեալ զՄէլիքն բարեբարոյ և սիրողն և ողորմածն  
քրիստոնէից նենգաւոր ազգն Մ'արաց՝ խոյս ետուն  
և փախեան : Եւ նորա աւերեալ զաշխարհն հրով,  
կողուալտելով, սպանութեամբ և ապականութեամբ :  
Եւ ապա եկեալ ի հնազանդութիւն Եզդին ամիրայն  
և Մէլիք որդին :

| Եւ ի նոյն ամի եղեւ վախճան երկուց վարդապե-

տացն մերոց մեծին Վարդանայ՝ սուրբ վարդապետին  
և բարունուոյ սուրբ ուխտին Աստուածածնի Խա-  
ռաբաստայ, աշակերտի մեծին Արքսի, և Յովհան-  
նու՝ ճգնաւոր վարդապետին Ռշտունեաց, որ աւելի  
քան զ50 ամ իրքեւ անմարմին հրեշտակ կայր կան-  
գուն ի վերայ ոտից իւրոց յաղօթս և ի պաղատանս,  
զոր և տեսաք աչօք մերովք և վայելեցաք յաղօթից  
նորա : Եւ էր սա ի Քաջբերունեաց ի սուրբ ուխտէն  
Յարութեան որ Ասպիանկայ վանք վերակոչի . ի  
գեղջէն Վախանից. որոց յիշատակն օրհնութեամբ  
եղիցի. և աղօթք սոցա ի վերայ ամենայն աշխարհի.  
ամէն :

Այս ամիր Եղդինս, որ հակառակ եղեւ Յուսու-  
փին, տէրն Ոստանայ ի յ842 թուականին սպան  
զկաթողիկոսն Աղթամարայ զԶարարիա անուն :  
Զարին պատմութիւնն տեսցես ի գիրն Յայսմաւուրց  
սուրբ վարդապետին Գրիգորի : Եւ յանցեալ ամին  
զՏէր Թէոդորոսն՝ զԱսոյ կաթողիկոսն տասն և վեց  
տանուտերօք սպան ի նենգութենէ քրիստոնէիցն  
Սասց պիղծ մէլիք Օմարն : Եւ սուրբանն Մարայ  
սպան զմէլիք Օմարն չարաչար մահուամբ և դառն  
տանջանօք : Փառք Աստուծոյ :

Եւ անտի զօրացեալ Յուսուփին այն եկն ի Թաւ-  
րէզ և մարտեաւ ընդ Ամիր Միրան-Շահ Զաղա-  
թային՝ որոի Թամուրին . և էառ դԹաւրէզ և սպան

զնա, և կողոպտեաց զնա և զամենայն գօրս նորա : Եւ արար խաղաղութիւն վերին կողմանց աշխարհի Հայոց : Խակյերկրորդ ամին դարձեալ գօրս գումարեաց որդի Միրան-Շահին, անթիւ և անհամար, Ապու-Բարիր անուն՝ յոյժ գօրեղ զօրական ի պատերազմի : Եւ եկն ի վերայ Յուսուփին. եւ նատեալ ընդդէմ միմեանց աւուրս ինչ. և ի միում գիշերի գազուգողի Ապու-Բարիրն առեալ զգօրս իւր՝ գոախեսւ. և եթող զառ և զաւար, զվան և զարտ փարտայն և զամենայն գանձս տան թագաւորութեան և զօրաց իւրոց Թուրքմանին : Եւ նա յոյժ զօրացեալ եկն ի միւս ամին՝ էառ զԵրզնկայ քաղաք խաղաղութեամբ. զի իշխան քաղաքին Դարիստան անուն սատակեալ էր : Եւ էառ զամուրն Մերտին, և զամենայն գաւառու նոցին. և եկն ի վերայ Ամբայ և Արղնու, և խաշինաց զնոսա և աւերեաց զաշխարհ զայն : Եւ ի մէջ անկեալ տէր Երզնկային Փիր Օմարն՝ հաշտեցոյց զտէրն Ամբայ Օթման անուն Աղջօյինլու, սիրող յոյժ ազգիս Հայոց, քաջ զօրականն, որ և ասեն եթէ 72 պարոն սպանեալ էր եւ զՏիարպէկն յինքն գրաւեալ :

Եւ ի սոյն աւուրս եկն սուկդան Ահմատ ի Պատաստայ՝ մտեալ ի Թաւրէզ էառ զնա. և Սմբատ՝ որդի Խվանէին՝ թոռն Բուռթէլին, գնաց առ նա խարեալ ի խրատուց իւրոց : Եւ նա մեծարեալ

զնա՝ ետ զգեղն Անգեղակութ նմա սլարդեւս : Եւ լուեալ Յուսուվին՝ փութանակի եկն ի վերայ դա- նին Թաւրիզու : Պատերազմեալ ընդ սուզանին զանին՝ ըմբռնեալ սպանանէին զնա խեղդամահ արարեալ զի տեարք էին տեղեացն, և դան ասէին և որդիս դանի : Եւ եղեւ ի նոյն ժամանակս խա- զաղութիւն խնամօքն Աստուծոյ ամենայն աշխար- հիս Վրաց և Ազգանից, և շինութիւն ամենայն աշխարհիս, մինչ զի յԱրձկու մինչ ի գաւառն Արարտեան մարդիկ ի յաւեր ոչ բնակէին. այլ ի չէնս բնակէին . և թէալէտ հարկապահանջութիւնն բազում էր. սակայն խաղաղութիւնն տռանց խոռ- վութեան էր : Եւ ծաղկեալ էին եկեղեցիք քահա- նայիւր և սարկաւագօք. և մարդիկ որք յաւուրս Զաղաթակին ի հաւատոց ուրացեալք էին, եկին ի հաւատո՛ Բուռթէլն Որոտնայ, Տարսայիմ Եղեգեաց, Սուրդաթմիշ՝ Մակուայն, Ազխուան՝ Աղցից : Եւ յԱրձէշ զվանքն զոր առեալ էին Տաճիկք, ետուն զեկեղեցին. եւ յոյժ ուրախանային հաւատացեալք ։  
Իսկ պիղծն Բելիար ոչ կարաց տանել հոգեւոր ուրախութեան եկեղեցւոյ. այլ յարոց պատերազմ ընդդէմ Պարսկաց. զի տղայ մի ի Թաւրէզքաղաքէն Յուսութ անուն՝ յոյժ հայհոյիշ և ատեցող անուան Քրիստոսի, առնու զպիղծ ոսկերս շանց, և երթեալ զիւտ տղայոցն քրիստոնէից, և ձգէ զպիղծ ոսկերս

ի կարաս քրիստոնէից : Եւ էր վարդապետ մի Ասե-  
փաննոս անուն յաշակերտաց մեծին Գրիգորի . և նա  
և ամենայն քրիստոնեայբն անտի ջուր ըմակէին : Եւ  
ի սոյն գիշերի բացեալ լինի կամարն երկնից , եւ  
իջանէ Քրիստոս յերկնից՝ նստեալ ի վերայ հրեղէն  
աթոռոյ , և երկոտասան Առաքեալքն ընդ նմա : Եւ  
էջ ի տեղին յորում Յուառուֆն ննջեալ էր . և ամէ  
Տէրն «ըմոնեցէք զտղայդ զայդ և տարեալ ցուցէք  
զտեղի չարչարանաց պիղծ առաջնորդի դոցա եւ  
ամենայն հետեւողաց նորա , եւ ապա սպանէք զգա  
զի գնայցէ ի նոյն տեղի տանջսնաց նոցա : Եւ ա-  
ռեալ զնա հրեշտակացն տարան ի դժոխքն եւ ի բո-  
ցածաւալ հուր գեհենին , որ այրէր զառալնորդ  
ազգին եւ զամենայն հետեւողս նորին : Եւ նա ունէր  
զկերպարան շան , եւ ձայն կաղկանծելոյ գայր ի  
միջոյ հրոյ հնոցին . եւ շղթայ արկեալ էր ի պարանո-  
ցին : Եւ ասէր հրեշտակն « ահա առաջնորդն քոց  
եւ ահա ժողովուրդք նորա » : Եւ անտի հանեալ ըզ  
նա՝ տարեալ ցուցին զարքայութիւնն երկնից եւ ըզ  
վայելչութիւն գեղեցցկութեան նորա , եւ զամենայն  
անդրանկաց հոգւոց դասուն զուրախութիւնն եւ  
զամենայն առաջնորդս քրիստոնեայ ազգին : Եւ  
ասէ հրեշտակն «տեսանե՞ս ո՛վ մոլորեալ՝ զհաւատա-  
ցեալն Քրիստոսի Աստուծոյն մերոյ եւ զկոյսն  
Մարիամ Աստուածածին , եւ տեսանե՞ս զլուսա-

ւորիչն Հայոց աստուածային փառօք փառաւորեալ.  
դու զի՞արդ զազգս Հայոց հայոյեալ անարգես :  
Հաւատա՛ ի խաչ ելեալն Փրիստոս, եւ Երթ, մկր-  
տեա՛ յանուն Ամենասուրբ Երրորդութեան զի մի  
գնայցես ի յայն տեղի տանջանաց, յորում տեսար.  
այլ յայս տեղիս փառաւորութեան յորում այժմ ի  
ներս կաս զի ինքն Փրիստոս առաքելովքն իւրովք  
իջեալէ յերկնից եւ եկեալ առ բեզ» :

Եւ անտի դարձեալ բերին առ սոսկալի եւ հրեղէն  
աթոռն Փրիստոսի. եւ տեսեալ զՓրիստոս՝ ահագին  
գոչէր որպէս Թուվմա «Տի՛ր իմ եւ Աստուած իմ՝  
մեղայ քեզ, խոստովանիմ եւ հաւատամ զբեզ ըս-  
տեղծող եւ արարիչ, եւ զՀայրն քոյ ամենակարող,  
եւ փառակից զճշմարիտ քոյ Հոգին Աստուած, միայն  
ազատ արա զիս ի մեղայ իմոց զի մի գնայցեմ ի  
տեղի տանջանաց չար առաջնորդին մերոյ :

Եւ յանկարծակի տեսիլ երազոյն խափանեցաւ,  
եւ յահագին զոշման ձայնէն ընտանիք նորա՝ մայրն  
եւ եղբարք նորա, զբան դաւանութեան որ ելանէր  
ի բերսանոյ նորա, լսէին. եւ զարհուրեալ ապուշ  
մնային. եւ զերեք տիւ եւ զերեք գիշեր զնա զար-  
թուցանել ոչ կարէին : Եւ յանկարծակի վերացաւ  
աթոռն ի յերկինա. եւ նա զարթուցեալ ի քնոյ տես-  
լեան գիշերոյն լցեալ շնորհօք Հոգւցն սրբոյ սկսաւ  
պարսիկ լեզուաւ դաւանել զՓրիստոս Աստուած եւ

Տէր ամենայնի : Եւ երթեալ յետ սակաւ աւուրց  
առ վարդապետն Ատեփանոս մականուն լսորուկ՝  
ասէ նմա զտեսիլն ահագին . Եւ մկրտեալ ի նամանէ՝  
եղեւ քրիստոնեայ : Եւ գիտացեալ անօրինացն զի  
թմբուկի ձեռին առեալ դաւանէր գիքրիստոս Աստ-  
ուած ի մէջ քաղաքին : Եւ ժողովեալ բազմու-  
թիւնը անօրինացն՝ ազգի ազգի հասրիւր հնարիէն  
ողորանօք եւ սպառնալեօք . Եւ ապա հանեալ ի յուղու  
ի բոլոր քաղաքին ի շուրջ ածէին . Եւ նա ասէր « Տէր  
Յիսուս Քրիստոս՝ վաղվարակի բարձրացուցեր զիս  
յայսմ աշխարհի զի ես ուզուու ընթանամ . առքա՞  
հետիոտա : Եւ իջուցեալ զնա չարչարեցին ացնքտն  
գառն տանջանօք մինչ զի 40 օր ի մորթ ծրարեցին ,  
Եւ առողջացեալ հանին զնա ընտանիքն : Եւ զնա-  
ցեալ ի Սուլթանիա անդ եւս չարչարեցաւ . և զնա-  
ցեալ ի Միրղանդ . Եւ անտի գնացեալ ի կուսպաշտից  
յաշխարհն հնգետասան աւուր ճանապարհ եկն ի  
Պաղտատ : Եւ չարչարեալ ի նեստորական ժո-  
ղովրդենէն գիքրիստոս Աստուած դաւանեաց մը-  
տեալ ի Մաշադ Ալին . Եւ գաղտարար մնաց ի ներա  
ի գիշերին եւ ետես դիսարէութիւն նոսին զի ասէին  
հուր վառի ի սմին : Եկն առ մեզ ի գաւառն Քաջ-  
բերունեաց ի սուրբ ուխտն Մեծորայ ամիսս վեց .  
Եւ ապա գնացեալ ի յԱլմէշ քաղաք՝ դաւանեաց  
զամենասուրբ զԵրրորդութիւնն : Եւ տեսեալ ան-

օրինացն՝ փոս փորեցին եւ թաղեցին մինչև ի մէջըն  
եւ քարկոծ արարին որպէս զնախավկայն Ատեգիան.  
Նոս : Եւ յետոյ մոլիքն ազատ արարին դի զբազուկն  
խորտակեցին : Եւ յետ վեց առուր խորտակող բաղ-  
կին չարաշար ստատակեցաւ Արամիշ անուն :

Եւ ապա ազատ արարեալ եկն դարձեալ առ մեղ.  
Եւ գնացեալ ի քաղաքն Ախալցիսէ. եւ ժողովեալ  
զմանկունս Վրաց եւ Հայոց. եւ կերեալ միս խոզու.  
զոսկերս նորա տարեալ լցին ի մզկիթ նոցին : Եւ  
տեսեալ անօրինաց որ անդ կային, զոր յիմար իշ-  
խանն որդի Արդրութին Խվանէի բարձրացուցեալ էր  
զնոսա առաւել քան զամենայն ազգս քրիստոնէից  
որ առ նա կային : Եւ նոքա նենգութեամբ առեալ  
գանձս բազումս՝ եկին առ բռնաւորն Յուսուփի ի  
Վազարշակերտ Բագրեւանդ գաւառին. և զչարու-  
թինն իւրեանց նմա յայտ արարեալ՝ առեալ գնացին  
ի տունն Վրաց եւ ետուն զբազարն ի ձեռս նորա :  
Եւ նոքա իրրեւ կատաղի եւ անողորմ գազան սուր  
եղեալ ի վերայ նոցա իրրեւ զգառն անմեղ զենուին  
ի վեր քան զհամար եւ զթիւ մտաց մարդկան. եւ  
զամենայն աշխարհն գերի առեալ զկին եւ զտղայ՝  
գերութեամբ լցին զամենայն աշխարհն Հայկաղեան  
սեռի. եւ զամենայն քրիստոնեայքն ազգիս ողորմելի  
արարին զկարգաւոր եւ զաշխարհական, եւ զհոգւոյ  
եւ զմարմնոյ ստացուածս ի զին գերւոյն ետուն :

Եւ էր որ գողութեամբ, եւ էր որ փախստեամբ  
ազատ առնեին զբրիստոնեայսն, եւ էր որ գաղանա-  
կուր լինէին : Եւ ո՞վ կարէ պատմել եւ կամ ընդ  
գրով արկանել զաղէտո տարակուսանացն և զիսմին  
լսալոյ եւ ողբոյ հարցն եւ մարցն, որդոցն եւ դառ-  
բացն : Եխ ևս առաւել տեսանողքն ոչ կարէին ժուժ-  
կալել. կանայք զզարդարանս իւրեանց կողոպաէին,  
արք՝ զանասունս, քահանայք եւ կրօնաւորք զաղքա-  
տութիւնս իւրեանց ցուցին. ում ոչխարիկ եւ ում  
տաւարիկ կայր՝ տային եւ գնէին :

Եւ տեսեալ անօրինացն գյօժարութիւն նոցին՝  
զամեն գերին հանեցին ի 10,000 եւ ի 20,000 մինչ  
զի քահանայի միոջ յԱրձէշ եւ յԱրծէկէ երկերիս  
երեսուն հազար դահեկան գնէին : Եւ այս եղեւ կո-  
րուստ չար եւ անօրէն բռնաւորին Յուառութին. զի  
երարձ Աստուած զօգնութիւն իւր ի նմանէ, եւ այլ  
ոչ յաջողեցաւ նմա. եւ այս էր յ865 թուականին :  
Դարձեալ գնաց յետ այսորիկ ի Տիարպէկն, եւ էջ ի  
վերայ կողմանն Շամայ իրրեւ աղուէս. եւ ( իրրեւ )  
ջղջկան տկար յետս դարձաւ. զի որդին նորա սա-  
տակեցաւ որ դան եղեալ էր ի վերայ ամենայն աշ-  
խարհին :

Եւ ի միւս ամին Օթմանն՝ տէրն Ամթայ, էառ  
զԵրզնկայ եւ զՓիր Օմարն չարաշար սատակեաց ։  
Ի միւս սամին Շահ-Ռուչն՝ տէրն Խորասանու՝ որդին

Թամուրին, առեալ զղօրս իւր անթիւ եւ անհամար գնդին՝ եկն ի Այութանիա եւ ի Թաւրէզ ի վերայ նորին. եւ նա եղեալ գնաց ընդդէմ նորին. եւ յորժամ մերձ եղեն միմեւանց զի այսօր եւ վաղիւ մարտընչէին, զվրէժ գերութեանն անողորմ էառ Աստուած ի Թուրքմանէն զի հիւանդացեալ սատակեցաւ բանաւորն այն . եւ զօրաց նորա զինքն անթաղ թողեալ՝ ի բաց գնացին. եւ եկին, հասին ի լալի եւ ողորմելի սմբակագնաց աշխարհս Քաջրերունեաց : Եւ նստեալի վերայ քրիստոնէից վանորէից եւ գիւղորէից մինչ յեղանուկ գարնանային ժամանակին : Եւ ի գնալն իւրեանց զամենեսեան կողոպտեցին. եւ որդի նորա Ասպահան անուն բազում ջանաեղեալ ի վերայ հաւատացելոցն եւ ողորմութիւնս արարեալ՝ ազատեաց զամենեսեան գնալ ի գաւառն Թշտունեաց . եւ մազապուրծ եղեալ ազատեցաք ի զօրաց Զաղաթային : Զի իրբեւ արծիւ սրնթաց հասին ի վերայ զօրաց Թուրքմանին ի յերկիրն Տարոնոյ. եւ թողեալ նոցա զառ. եւ զաւար, և գաղտագոդի գնացեալ հասին յերկիրն Շամայ ի դաշտին Ամիթ քաղաքին :

Իսկ որդի Յուառուփին Սրանդարն ոչ հանդիպեցաւ առ հայրն իւր զի նստէր ի տեղի նորին. այլ եկն ի կողմանէն Պաղտատայ, եւ առեալ զզօրս հօր իւրոյ եւ զբաջս Հիղանին՝ եկն ի Բագրեւանդ գաւառ մերձ

տուրբ ուխտին շինեալ ձեռամբ Տրդատայ եւ Լուսա-  
տորչին Գրիգորի՝ կամէր գնալի վերայ Շահ-Ռուկին.  
Եւ Շահ-Ռուկն այն հասեալ ի Հեր եւ ի Զարեւանդ  
գաւառ, եւ ի վերջն՝ ի Բերկրի : Եւ համբաւ գալոյ  
Աքանդարին եհաս առ նա . եւ դարձեալ անհուն  
բազմութեամբ եկն եհաս ի յԱլըմէշ. փոս ետ հատա-  
նել յերկուս տեղին՝ մինն ի յԱլըմէշ եւ մինն՝ ի  
Զուապասակ (32) մինչ ի լեառն Աղու. եւ ի միւս օրն  
ելեալ գնայ ի դաշտն Ապահունեաց ի Խանագահն,  
եւ փոս եհատ յահէ զօրացն արի եւ զօրեղ զօրակա-  
նին Աքանդարին : Եւ հասեալ ի Վաղարշակերտ, ի  
դաշտն Բագրեւանդայ՝ ճակատ առ ճակատ բանա-  
կեցան : Եւ մտեալ ի պատերազմ՝ հարկանէին ըզ  
միմեանա. եւ արի եւ քաջ պատերազմողն մտեալ  
ի մէջ անթիւ զօրացն Շահ-Ռուկին, եւ զբազումն  
աստակեալ ի զօրաց Զաղաթային, եհատ զոնդումն  
փղին, եւ մի կին ի ծառայից նորա յառիշտակեալ ի  
տանէ Շահ-Ռուկին. եւ արկ ահ եւ երկիւղ ի վերայ  
արեւելեան գնդին : Իսկ Շահ-Ռուկն այն կայր առանց  
երկիւղի յահէ նորին : Ապա երթեալ ի ծառայիցն  
ասեն ցնա զի՞ կաս խաղաղութեամբ, ահա կորեար  
յահէ քաջ և մենամարտիկ որդւոյ Յուսուփին : Իսկ  
նորա ելեալ ի խորանէն՝ հրաման ետ զուղտ եւ զա-  
նասումս տանել զառաջեաւ զօրուն. եւ գոչեցին առ  
հասարակ միաբնան, եւ կախարդքն ձգեալ զթուղթ

ի վեր յերմինս, եւ հանեալ զսուրս իւրեանց՝ ի վերայ նոցա դիմեցին : Եւ վաղմաղակի և առժամայն ի սուր սուսերի հարեալ կոտորեցին զզօրս անհնազանդ թուրքմանին :

Աստ էր տեսանել զաղէտ տարակուսանաց նոցին. զի գոչումն աղաղակի նոցա սպրեալ գողացուցանէր գերկոսին կողմանսն, որպէս քաջքն Վարդան եւ Մուշեղ արարին Պարսից : Այլեւ հայր ուրացաւ զորդի, և որդի՝ զհայրն, մայր՝ զդուստրն եւ դուստր՝ զմայրն :

Եւ երկու եղբաղք Սբանդարն եւ Ասպահանն մազալուրծ եղեալ գնացին փախստական սակաւ զօրօք ի ներքին կողմն աշխարհին ի Մերտին, ի Մաւալ : Եւ ամենայն զօրքն եւ խիզան (33) անկան ի ձեռս Զաղաթային : Եւ ի նոյն տեղի ուր գգերիքն բաժանեցին զՀայոց եւ զՎրաց. ի նոյն տեղիքն եւ նոքա գերեալք, եւ ի նոյն տեղիքն անթիւր եւ անհամարք սատակեալք կործանեցան : Եւ ո՞վ կարէ ընդ գրով արկանել զճիչ եւ զաղաղակ տղայոց անօրինաց, որ ի նոյն տեղիք մնացին, եւ ամեներեան սովորուկ և գաղանակուրք աղեն : Եւ այս էր ի թուականս մեր 870 ամին : Եւ Զաղաթային առեալ զառ և զաւար՝ գնաց ի Խորասան ուստի եկեալ էր : Եւ փախուցեալ որդիքն Յուսուփին՝ գնացեսլ ի ներքին կողմն աշխարհին : Գիտացեալ զերթակ

նոցին եկն վաղվաղակի Ասպահան ճանապարհան  
Բաղիշու, գնացեալ ի Թագրէզ նստաւ անդ տակաւ  
զօրօք աւուրս ինչ : Եւ միւս եղբայր Սրանգտարն եկն  
Պաղտատու ճանապարհան. մտեալ ի Թագրէզ  
փախոյց ղեղբայրն եւ էառ զաշխարհն ամենայն եւ  
նստաւ թագտոր ի վերայ ամենայն կողմանց մերաց  
աշխարհաց : Եւ եղբայր նորս եկն ի Բառէն եւ էառ  
զամուրն Ամկայ : Եւ ի միւս տմին գնաց առ միւս  
եղբայրն ի Պաղտատ Շահ Մահմուտ կոչեցեալ,  
եւ համբերեալ զերկու ամ . եւ ապս միաբանեցոյց  
զօրս իւր ի վերայ եղբօրն իւրոյ, էառ զամենայն  
աշխարհն Բարելացւոց : Եւ նա փախուցեալ յեղբա-  
րէն՝ անկաւ ի ձեռս Զաղաթային, որ և տպանին զնու-  
զի էր այր խաղաղաբար և քրիստոնեատէր : Եւ բա-  
զումբ ասէին թէ Քրիստոսի ծառոց էր :

Եւ Ասպահանն այն ելից արեամբ զաշխարհն Բա-  
րելացւոց զի առնոյր զգանձս աշխարհին եւ ծածկէր  
գաղտնի եւ զպահող գանձին սպանանէր . «չ ի  
Տաճիկ խնայէր և ոչ յԱսորի : Աւերեաց եւ զե-  
րեաց զՄօսլ եւ զՄնջար եւ զԹկլադ եւ զամենայն  
աշխարհն եւ ապս եկն ի վերայ Զիզիրու՝ անթիւ  
արիւնս արար : Եկն ի վերայ Մերտոնայ եւ սպան  
երեսուն քրիստոնեայս : Եւ տէրն Մերտոնոյ, որդին  
Օթմանին սուլդան Համզէն եկեալ ընդ առաջ նորա,  
էառ զամենայն զօրս նորա եւ գլուղոպտ տն, եւ ինքն

մազապուրծ փախեալ ի ձեռաց նորա . զի արիւն անմեղացն գոչեալ առ Աստուած՝ կորուսին զնա եւ զօրա նորա : Իսկ Սրանդար որ նստաւ թագաւոր ի Թաւրէղ Շահաստանին յ871 թուականին՝ եկեալ զօրօք խրովք ի վերայ Խլաթայ, եւ առեալ զերկիրն զամենայն՝ նստաւ ի վերայ բերդին Աղվանից : Եւ Շարաֆ անուն քուրդ մի անմիտ քրիստոնէիւր ապատամբեալ՝ ի բերդէն հայհոյէին զնա : Իսկ նորա բարկացեալ հրաման ետ զօրացն նետածիդ լինել ի վերայ նոցա, եւ առ ժամայն առին զնա. եւ սուր եղեալ ի վերայ քրիստոնէիցն՝ 150 ոգի սպանին ի ժողովրդենէն որ անդ կային եւ 60 հոգի մին գարշադէմ քրիստոնէի զենուլ ետուն ի Ծղակայ եւ յԱղվանից, եւ զայլ բազմութիւն կանանց եւ տըղայոց առեալ տարան գերի, եւ կորուսին դրազումն :

Եւ էր զի սակաւ գնեալ արծաթով ի յետս դարձուցին. եւ յայնմ օրէ ի հետ ի լաց եւ ի սուգ նստաւ ամենայն աղջս Հայոց մինչ ի վերջին օր սատակման նորա : Եւ յերկրորդ ամին եկն ի վերայ Բաղիշու եւ Խլաթայ, կոչեաց զամիրայն Շամշատին փեսայ իւր եւ ասէ « տո՛ւր ինձ զբերդն Խլաթայ » : Եւ նորա գնացեալ ընդդէմ բերդին՝ արծակեաց զգօտին որ ի միջին եւ պինդ կապեալ դարձեալ : Եւ իմիրն այն զվարշամակ գլխոյն ի վայր ձգեաց նշան տալով թէ

ղգլուխս հատանեն՝ զդղեակն մի տայբ. այլ պի՞նգ  
անդեցէք զգօտիս ձեր : Իսկ նորա բարկացեալ՝  
հրտաման ետ զօրաց իւրոց հատանել զգլուխ նորա :  
Եւ ըմբռնեալ զտէրն Ռշտունեաց սուլդան ԱՀմատ  
անուն՝ զորդի Եզզին ամիրային, և փութանակի եէն  
ի վերայ դղեկին Ա անսայ, եւ աւերեաց ղաշխարհ  
ամենայն. եւ նստաւ չորս ամիս ի վերայ նորա. եւ ի  
խսարին բերդին անթիւ եւ անհամար քրիստոնեայր  
մեռան ի սովոյ եւ ի ջրոյ. եւ փորուցաւ եղեալ բա-  
զումք մեռանէին :

Եւ ի նոյն ամի ոչ կարաց առնուլ զնա. այլ եր-  
թեալի Թաւրէզ՝ ի նոյն ամին լրեաց. և զորդի Եզզին  
ամիրային զսուլդան ԱՀմատն սպան ի բերդն Երրն-  
ջակայ : Դարձեալ ի միւս ամին 874 թուականին  
եկն դարձեալ ի վերայ Ա անսայ, եւ նստաւ ի վերայ  
նորա. եւ նեղեալ որդի Քրդոյն Մէլիք Ասդ անուն՝  
ետ ի նա զրերդն. եւ աղատեալ՝ ելեալ գնաց կահիւք  
եւ ընչիւք ի Զուլամերկ : Եւ ի նոյն ամին սպանին  
գհօրեղբայրն նորին Պահաթին անուն առեւալ զեր-  
կիրն Ռշտունեաց եւ զկզզին Աղթամարայ. եւ բա-  
զումք ի քրիստոնէիցն աստ եւ անդ շրջեալ ի լերինա  
եւ ի բլուրս սովալլուկ եւ սովատանջ եղեալ  
մեռանէին : Եւ ոչ կարեմ ընդ թիւ արկանել  
զմեռեալսն եւ զողբումն, զլացն եւ զազաղակն եւ  
զիորուստ աղզիս մեր, որ եղեւ ի չար բռնա-

ւորէն եւ ի նեռին պիղծ եւ անօրէն կարսավետէն :  
Եւ ի սոյն աւուրս եկն նենգաժոտ եւ անողորմ  
Քուրդն Բաղիշոյ ի վերայ աստուածալահ քաղաքին  
Արծկոյ, եւ հարեալ, սպանեալ, սրախողխող արա-  
րեալ զբաղումն յազգաց մերոց մանաւանդ զաստ-  
ուածապատիւ եւ զաստուածալարփակ, զողորմած  
եւ զերջանիկ վարդապետն Գրիգոր՝ զորդի ծե-  
րին Խլաթեցւոյ ի սուրբ ուխտն Դաստակ որ Ցիպ-  
նավանք վերակոչի : Եւ սուգ եղեւ ամենայն ազգիս  
Հայկազնոյ. վասն զի զարդարէր զեկեղեցիս Հայոց  
յայսմաւուրօք, կորուսեալ ճառիւք, գանձիւք, ասա-  
զիւք. եւ 55 ամ գիրս զրեաց եւ զամենայնն աղքա-  
տաց բաժանեալ : Եւ հեղահոգի եւ յոյժ ուսումնասէր  
գոլով և մարտիրոսաց պատուող՝ մարտիրոսաց պսա-  
կացն ե՛աս : Եւ էր սա աշակերտ մեծին Արգսի վար-  
դապետին Հայոց, եւ ութն ամ աշակերտեալ Յով-  
հաննու Որոտնեցւոյ՝ աշակերտակից մեծին Տա-  
թեւացւոյ :

Դարձեալ ի սոյն ամի անողորմ վիշապն և արեան-  
արրու գաղանն գնաց ի յՈրմի քաղաք Հայոց, եւ  
աւերեաց զամենայն տշխարհն, եւ սպան 700 Տաճիկ  
հատանելով զգլուխս նոյցա անողորմ եւ չարագործ .  
եւ բաղում գերիս էառ եւ ջնջեաց զազգս Հայոց  
ըստ տեսութեան մեծին Ներսիսի թէ ջնջեսցի  
աղգն, Արտամայ յազգէն Նետողաց : Դարձեալ յ878

թուականիս զօր ժողովեաց, գունդ կազմեաց եւ  
ելեալ գնաց ի վերայ քաղաքին Առշանիոյ. և շորս  
առիս խսարեալ էառ գնա. եւ զամենայն զօրան որ  
անդ կային՝ սուր ի վերայ եղեալ զենեաց զամենե-  
սեան աւելի քան զ300 հոգի : Եւ նորա աղյուղորմ  
կակծէին, գոչէին լալով եւ արտասուօք եւ ատէին  
« դու Տէ՛ր՝ վրէժխանդի՛ր լեր արեան մերո ». և զտէրն  
տեղւոյն ըմբռնեալ զԵցիսա՝ Խօջու որդին, եղ յա-  
մուրս իւր : Եւ էր տէր տեղւոյն որդի քենուցն  
Շահ-Բյուհին՝ թագաւորին Մարաց և Պարսից կող-  
մանցն Արեւելից եւ Խորասանու : Եւ նորա շար-  
ժեալ ի բարկութիւն՝ եկն անթիւ եւ անհամար  
զօրօք իրրեւ զաստեղս երկնից բազմութեամբ, մեծա-  
հանդէս սրատերազմական պատրաստութեամբ ի  
վերաց յիմար եւ անզգայ եւ անհնազանդ եւ հազարո  
եւ գոռող բռնաւորին Արանդարին : Եւ նա փախու-  
ցեալ ի նմանէ եկն նատաւ ի վերայ նորա ի Աարմատ  
ճակատ առ ճակատ եւ րիպ առ րիպ ( գունդ առ  
դունդ ) . եւ ոչ ետ թոյլ զօրաց իւրոց փախչիլ ի  
բարկութենէ զօրաց Զաղաթային վասնդի կախար-  
դութեամբ կապեցին զնա մինչ զի ոչ նետ մի կարաց  
հանել ի կապարձից բարքաշի իւրոյ. այլ խոյս ետ եւ  
փախեաւ ի պատերազմի ժամուն ի քաջութեան տե-  
ղեացն այն որ ասէր մին հազարով խմով ընդ բիրա-  
ւորս նոցա ոլստերազմեմ : Ոչ գիտէր եւ ոչ

խմացաւ եւ ոչ ոք խմացուցանել կամէր վասն գոռու-  
դութեան բարուց իւրոց . եւ ոչ խմացաւ եղկեցին թէ  
Թիրոտ թագաւորի ի ձեռին Աստուծոյ է, եւ նա տայ  
զյաղթութիւն հաւատացելոց եւ անհաւատից : Իսկ  
նա ի բազուկս իւրյուսացեալ կամէր գործ յաղթու-  
թեան ցուցանել . եւ ոչ ետ նմա Աստուած զօրու-  
թիւն յաղթութեան . այլ մատնեցաւ ամենայն  
զօրօք իւրովք ի ձեռս Զաղաթային . եւ գերեաց  
զամենայն Թուրքմանս եւ զբազումն ի քրիստոնէից,  
և առեալ տարաւ ի ձմերայնոցն Ղարաբաղ . եւ անդ  
անցոյց զբառնաշումն աւուրա ձմերայնոցն :

Իսկ զօրքն Արանդարին որք զերծան ի պատե-  
րազմէն՝ գազտագողի աստ եւ անդ փախչելով՝  
եկեալ ի յերկիրն Վաջրերունեաց՝ առին զբաղաք  
եւ զգեղ, զվանք եւ զաւան, կողովտեցին և աւերե-  
ցին, ոչ հացի եւ ոչ խոտ տակի ետուն մնալոյ. այլ  
գաղանաբար պատառեցին . եւ բարկութիւնն Աս-  
տուծոյ ի վերուստ եւ ի ներքուստ պատեալ ունէր  
զծովեզերս այս. ի վերուստ ձիւն էր եւ տեղատա-  
րափ, եւ ի ներքուստ՝ դառնութիւն անօրինաց : Եւ  
մեք մազապուրծ եղեալ կամեցաք մոտանել ի կողին  
Լմայ. եւ իրրեւ մտաք՝ տեղի ոչ դտաք նատելոյ եւ  
շառնելոյ եւ ոչ զոգեափակ կերակուր պատրաստելոյ  
վասն ահազին բարկութեանն Աստուծոյ եւ սաստիկ  
անձրեւին եւ ձիւնին : Եւ սիրով ընկալաւ. զմեզ

Հոգեւոր եղայրն մեր վարդապետն Յովհաննէս : Եւ մինչ յայս նեղութիւնս կայաք յանկարծակի դօրք բերդին Ամկայ չար եւ անօրէն պիղծ իշխանն նոցա Հաջիպէկ անուն նստեալ ի նաւ եկն ի կղզին . եւ ըսմբոնեալ զամենայն քրիստոնեայն մեր արական ձէր ի նոցանէ ոսկի եւ արծաթ : Եւ յերեկոյի ժամէն մինչեւ ի լոյս առաւօտուն 40,000 դաշեկան էառ. բայց ի համարս աւելի (քան) զ100,000 : Եւ յահէ նոցա կամէաք զի ծովն ընկղմէր զմեղ տեասնեւ լոյլ եւ լսելով զաղաղակ եւ զճիչ կանանց եւ որդւոց նոցա. վասնզի հարկանէին զամենեսեան եւ ըրածեծ առնէին :

Եւ մինչդեռ յայս իորհրդի էաք թերեւս ելցուք ի ծովու միջէն՝ եկն եհաս համբաւ բօթալից եթէ Օթման Թուրքմանն եկաւ ի յԱրճէշ քաղաք, եւ կողոպտեաց զամենայն մնացեալ հաւատացեալսն, որ անդ կային զի էր նա թշնամի Սրանդարին եւ զօրաց նորին : Եւ նորա խրատովն յաղթեւաց Շահ-Ռուզն պիղծ Թուրքմանին : Եւ առակ սրբոյն կատարեցաւ ի վերայ մեր : Փախուցեալ ի միեղջերու էն անկաւ ի ձեռս օձին : Այլ յայսմ վայրի եհաս ողորմութիւն բարերարին Աստուծոյ ի յօդնութիւն տառապեալ ազգիս. զի փախուցեալ Սրանդարն, որ զերծաւ ի Զաղաթայէն եւ եկեալ ի վանայ քաղաքն, բարկութեամբ զարթեաւ ի վերայ զօրաց իւրոց գալ

Եւ հանել գիտեակն զայն որ տիրեալ էին գաւառիս  
մեր եւ պատառէին զամենեսեան իբրեւ ղչար զա-  
զանս : Եւ հանին զպիղծ գագանսն ի քաղաքէ, ի  
գեղէ եւ ի վանորէիցն : Եւ մեք զերծեալը ի նոցա-  
նէ՝ սակաւ մի հանգիստ առաք զաւուրս ձմերայնոյն  
ամիսս երեք. զի այս դառնանային ժամանակին  
խաչին պահոյն : Իսկ ի գարնանային ժամանակին  
փախուցեալ Աբանդարն այն ի Զաղաթայէն որ աստ  
եւ անդ գաղուագողի շրջէր, երթեմն ի Թաւրէզ, եր-  
թեմն յմմուրն Երնջակայ եւ յայլ տեղիս. ապա եկն  
նստաւ ի վերայ Արծկէ քաղաքին, զոր առեալ էին  
բնական տեարքն քաղաքին Այաւալան անուն : Եւ  
սակաւ աւուրա նստաւ ի վերայ նորա, եւ պատե-  
րազմ մեծ եղաւ ի վերայ. եւ քրիստոնեայքն եւ այլ  
ազգիքն գուն քաջութեան գործեցին, եւ ազգթք  
ամենեցուն անպակաս լինէր զի սպառնայր չաք  
վիշապն զամենեսեան արոյ ճարակ առնել. եւ ամե-  
նայն գաւառն յամրոցին կային : Եւ յանկարծակի  
չար զօրքն Զաղաթային 20,000 ոգի առաջնորդու-  
թեամբ որդւոյ Շահ Ռուկին Զօնկայ անուն՝ իբրեւ  
զարծիւ որընթաց ի վերայ քաղաքին հասին. և տեսե-  
ալ զօրաց Աբանդարին՝ ահարեկ եղեալ մեռանէին զի  
յանպատրաստի կային. եւ գոչէին զի՞ կաս Ամիր-  
զայ՝ թշնամիքն եկեալ հասին : Եւ նա իբրեւ (թէ)  
ոչ երկնշիմ ի նոցանէ, կամսկար եւ առանց փութոյ

գդեցաւ զգրահ իւր եւ զտոմենայն գործիս պատերազմին, եւ ելեալ գնայր առաջի նոյսա սահմատ զօրոք 1,000 ոգւով առելի կամ պակաս ճանապարհան կորոյ ձորոյ յետ լերին սուրբ ուխտին Արանջերագործին : Եւ նորա սրտապնդեալը 20,000աւ ելեալ գհետ նոյսա՝ ոչ կարացին մուանելի ի մէջ նոցա եւ ըմբռնել զնա : Այլ մի զօրեղ զօրական եւ քաջ մենամարտիկ եկեալ ի Զաղաթայէն արշաւեալ եղիվարաւն գոչեաց առ նա «ԱՌալրայ Արանդար» յեւ դարձիր զի տեսանեմք զիրեարս զի ի Խորասանայ ի հետ առ քեզ եկեալ եմ ի պատերազմել » : Եւ նորայետա դարձեալ, զսուրն ի ձեռին առեալ եհաս առ նա եւ ասէ «ի Խորասանու եկեալ ես, կատարեցից զիսնդիրս քոյ » . եւ եհար զնա սրով ի պարանոցէն մինչեւ ի մէջսն յերկուս բաժանեաց : Եւ տեսեալ զնա ամենայն զօրացն արեւելեան ահարեկ եղեալ եւ յապուշ դարձեալ ասէին « ով կարէ գնալ գհետ սորա զի այնպիսի ահագին եւ անպատմելի քաջութիւնս գործեաց սա » : Եւ այնուհետեւ այլ ոչ պատերազմ ի գործ արկին . այլ ահիւ գկնի նորա երթային : Եւ աներկիւղ երթեալ հասանէր ի գաւառն Բասենու : Իսկ բազմութիւն քաղաքին Արծկոյ ելեալ ի քաղաքէն՝ զառ եւ զաւար Թուրքմանին որ մնացեալ էր ի Զաղաթայէն՝ ի ներս ի քաղաքին ժողովէին . եւ չար զաւակն եւ որդին

կորստեան ոչ գնաց զինի նոցա. այլ ի յետս դարձեալ  
եկն յերկիրն Արմիշու :

Եւ բազմութիւն քրիստոնէիցն կարգաւորաց եւ  
աշխարհականաց ի լերինս եւ ի բլուրա, ի ծերափ եւ  
ի ծակս վիմաց փախուցեալը կային : Եւ նոցա շրջաւ  
պատեալ զերասմն, իբրև արծիւ որ որսայ զթռչունս  
երկնից, գոչէին, ճայնէին, երիվարաւն արշամէին,  
զայրտսա տրանց եւ կանանց ճմիին, իբրեւ զօր գա-  
տաստանին սոսկալի եւ սարսափելի պատուհասի  
հասին, զմեծամեծսն սպանանէին, զոմանն թշրի-  
տէին եւ ի հաւատոց բեկանէին, եւ զկին եւ զորդի ի  
հարանցն յափշտակեալ գերի առեալ տանէին :  
Գոչէր մայրն առ որդին եւ որդին՝ առ մայրն ամայր  
իմ՝ ո՞ տայր ինձ տեսանել զբեզ » : Եւ մայրն՝ առ  
որդին « ո՞վ որդեակ իմ՝ վայ է ինձ եւ եղուկ, եւ  
վայ ատուր քոյ ծննդեան. վայ ինձ եւ վայ հօր քոյ  
աւետեաց, վայ բեկեալ բազկիս որ զբեզ բարձի  
արդեակ՝ երթեալ գնաս ի ծով դառնութեան. մի-  
թէ Քրիստոս քեզ ճար աղատութեան արսաց՝ » :  
Եւ այս կոկիծ դառնութեանս անձառելի է ընդ գրով  
արկանել զայս աղէտ տարակուսանաց նեղութեանս  
Բայց սակաւ մի ծանօթութիւն տամ յետ մեղ եկե-  
լոցդ զի լազով լսոք զկորուստ ազգիս Հայոց, զի ան-  
ձամբ ի ներս կայաք : Եւ նոցա առեալ զառ եւ  
զաւար եւ զողորմելի մանկունսն մեր անթիւ եւ

անհամար ի քաղաքէ եւ ի գեղջէ, և երթեալ ի Տառ  
գաւառ յերկիրն Ա անայ ի յոտն սուրբ ուխտին Վ ա-  
րագայ՝ յանկարծակի հասեալ ի վերայ առաջնորդու-  
թեամբ պիղծ եւ անհաւատ քրողվ մի Աւդին անոն  
ի տանէ եւ յազգէ բարերարոյ եւ աշխարհաշէն  
Ամիրայի Եղդին եւ Մէլիքին, որ ունէր զերկիրն  
Բերկրոյ. եւ գերեալ զամենայն գաւառն անթիւ եւ  
անհամար զկանայս և զորդիս ամենայն հաւաստացե-  
լոցն առեալ տանէին ի Խորասան :

Եւ ճիչն եւ վայ եւ եղուկն տիրեաց մեզ : Եւ մեր  
բազում անգամ հարցաբննութեամբ ի խնդիր ելեալ  
թերեւս գտանէաք զթիւ համարոյ գերեացն զԱր-  
ճիշոյ եւ զՎ անայ. եւ ոչ կարաց ստուգել բայց  
միայն այսչափ զի երեք սարկաւագ ի սուրբ ուխտէն  
Մեծորայ, եւ 27 (34) գերի ի գեղջէն Աղոյ որ մերձ  
էին առ մեզ յազգէ եւ սիրելեաց ծանօթք զի գերե-  
ալք էին, եւ 10 գերի ի միոջէ տանէ ի գեղջէն Մա-  
ջառուաց : Եւ վայ մեզ եւ եղս Ակյայնմ օրէ մինչեւ  
ցայսօր եւ առ յապա :

Եւ այս եղեւ ի յ879 թուականին ի Պէնտեկոս-  
տէին աւուրս : Դարձեալ ի Խաչի տօնի աւուրն եկն  
Աբանդարն այն, նատաւ ի վերայ Արծկոյ քաղաքին,  
եւ հնարէր զհնար առմանն : Իսկ բրիստոնէիցն  
խորհուրդ ի մէջ առեալ գաղտնի յանօրինաց, մանա-  
ւանդ խորհրդական եւ իմաստուն, իշխանակերպ եւ

քրիստոսասէր տանուտէրն Այուրատոյ անուն դհետ  
Արձիշյ տանուտեարցն Յովհաննէս Փոքր ձեռնա-  
ւորն եւ Գորգի մէլիքն Աղոյ տանուտէրն գնալ առ  
բանաւորն Աքանդար եւ շիջուցանել զբարկութիւն  
դառնութեան նորա. վասն զի եկեալ էր առ ի կո-  
րուսանել սրոյ մահուամբ զաղբատ քրիստոնեայսն :  
Եւ նոցա իջեալ առ նա աղաչանօք եւ ազերսիւք  
երդումն ետուն նմա զի մի յիշեացէ զառաջին  
սպատամբութիւնն եւ զանհնազանդութիւնն զոր  
արարին նմա, եւ մի մնաս ինչ գործեսցէ նոցա : Եւ  
ողորմութեամբ Քրիստոսի շիջուցին զդառնութիւն  
նորա : Եւ նա երդուաւ ոչ ինչ մնաս գործել նոցա :  
Եւ ի մէջ գիշերին իջեալ ի պարսպէն գնացին առ  
նա. և նա անճառեցի ուրախութեամբ լցեալ սիրեաց  
դամենայն քաղաքացիսն. եւ այգուցն մտեալ ի քա-  
ղաքն խաղաղութեամբ առանց կողոպտելոյ :

Բայց զտէր քաղաքին Սալթին անուն սպանին եւ  
Դանիշման մի խորհրդակից նմա . եւ մազ մի ոչ  
կորեաւ ողորմութեամբն Աստուծոյ ի քաղաքէն զի  
քրիստոնեասէր էր եւ ողորմած ազգին մեր : Այլ  
վասն հաղարտութեան բարուց իւրոց ոչ ինքեան  
յաջողեցաւ եւ ոչ հաւատացելոցն. կորեաւ ինքն եւ  
կորոյս զաղգս մեր : Իսկ ի գալ միւս ամին, որ մտաք  
յ880 թուականն, սով սաստիկ եղեւ յաշխարհս մեր  
հաւատացելոց եւ անհաւատից զի կերան զշուն եւ

գիատու եւ զմեռելոտի, զձի և զջորի, զէշ և զուզու  
Եւ պարապեալ պակասեցաւ անտառունն. և դիմեցին  
ի յուստերս եւ ի դատերս իւրեանց մինչ զի ի թու-  
րէզ քաղաքն կերեալ էին 1,000 ոգի գաղտնի եւ  
յայտնի, եւ աւերեալ վերին եւ ներքին կողմանքն :  
Այլ եւ ի թաւրէզ քաղաքէն եկեալ էին (35) անդ  
Հեր եւ Զարեւանդ, Օշնի եւ Աղբակը եւ դիմեալ  
գնացին ի կողմանա Քաջթերունեաց. եւ բազումք  
որք անդ մեացին՝ մեռանէին. եւ որք եկին յԱռեատ  
աւանի՝ ձկամբք և բանջարօք շատանային :

Իսկ զազանքն որ սովորեալ էին ուտել զմեռելո-  
տիս, դիմեցին ի վերայ կենդանեացն, որք յերկիրտ  
մեր կային : Մտանէր գայն յԱրձէշ եւ յամենայն  
գաւառս մեր, զորդին ի մօր գրկացն առեալ պատա-  
ռէր եւ ուտէր. թէ ի զաշտի դիպեալ յառնէր ի վե-  
րայ մեծաց եւ փորունց եւ առ ժամայն պատառէր :  
Եւ աւելի քան զ100 ոգիս ի յԱրձէշ զաւառի գայն  
եկեր թուղ զաղքատս որ ի վերայ գետոցն Առեատու  
եւ Մարմետու կային : Եւ ի գաւառէն Արարա-  
տեան ի ձմերային եղանակին ելեալ գնացին ի կողմն  
Վրաց այնքան հաւաստացեալը ի խստութենէ օդոյն  
մեռեալ եղեն . մինչ զի ոչ կարացին ի թիւ արկա-  
նել վասն բազմութեանն, որպէս պատմեաց մեզ  
հոգեւոր եղբայրն մեր Զարարիս արեղայն Տեղեր-  
ցի : Եւ մոլթ ցորեանն աւելի հանէր քան զ60 թան-

կայ ի պազարին Ալրճիշոյ : Եւ մեռանէին ամենայն մարդիկը բնիկը եւ օտարականը : Եւ առեալ ոմանք զձիս խրեանց՝ դիմեալ գնացին ի հեռաւոր աշխարհս ի յիշրզնկայն եւ ի Խարբերդ եւ ի յԱմիբ եւ ի յԱրդնի եւ ի Զմշկածակ : Եւ որք անտերունչ մնացին՝ մեռանէին ի սաստկութենէ սովոյն . եւ ոմանք գնացեալ խառնեցան ի Քուրդն Բաղիշոյ, Աշոյ եւ Սասնոյ վասն աղքատութեան եւ սովոյն դառնութեան ելեալ ի հաւասոց դարձան յանհաւաս սոտթիւն առելի քան դ500 ոգի . եւ տրտոմութիւն մեծ եղեւ Աստուծոյ եւ հրեշտակաց եւ մարդկան : Եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց եւ չար գործոց , մանաւանդ ի ծուլութենէ երիցանց և ի խարեբայութենէ կրօնաւորաց և ի չար գործոց անհաւատ և ի սուտանուն հաւաստացելոց , ի զրկող և յանիրաւ տանտւտերաց , ի պիղծ և ի զաղրալի առաջնորդաց զոր ոչ կարեմք ընդ գրով արկանել զաղտեղութիւնս մեր և նոցա . զի ծածկագիւտին յայտնի է ամենայն : Եւ այս եօթն ամբ են որ ի ներբոյ դառն պատուհասի կամք . զի սուրն կորոյս , սովուն սպան , գերին պակասեաց , գաղանք կերան ըզ մարդիկ , թռչունք կերան զվաստակս , գորտն և մկունք ապականեցին զանդաստանս առելի պատուհաս քան դԲարելաց ոցն յաւուրս Արրահամու և դառնագոյն քան զբաւոիմ Երրայեցւոցն և Եգիպ.

տացւոց, զի որդիկը Եղիպտացւոց իծով ընկղմեցան։ Իսկ որդիկն Հայոց՝ ի ծովն անհաւատութեան Հքէ քաղաքին. նոքա ի ծովն մեռան, և ոչ ծննդեամբ բազմացան, որդիկն մեր և եղբարք, որք անհաւատութեամբ մեռան և կորեան, ամեն որդիկ նոցա անհաւատութեամբ և լնուն զաշխարհս ամենայն. և մինչ ի վերջին օր դատաստանին լինի թէ յաղգէս Հայոց այնրան մարդիկ ամեն որ այժմ կենդանի եօթանասուն երկու ազգիս նման (36). զի թէ յութիցն մարդկան արդար և սլարկեցտ առն Աստուծոյ Նոյի ամենայն երկիր լցաւ, իսկ հազարաց և բիւրաւոր արանց քանի՞ առաւել պարտ է ամել եւ բազմանալ :

Եւ այս պատուհաս որ եղեւ, մի կարգաւոր և աշխարհական, մեծ ատուն և աղքատ զլեզու իւր ոչ սանձեաց ի հայհոյութենէ յիշոցացն, եւ ոչ ասացին մեղաց Աստուծոյ և ի ժանտալից դառնապտուղ և դառնարերան անիծից և նզովից գարշարերան աղտեղութեանց զորս ժայթքեն հանապազօր մոխրաթաւալ նորընծայ ուխտի մանկունք եկեղեցւոյ Հայաստանեայց՝ հանապազ զաղտեղիս խօսելով ըզ բերանս ուսումնականաց լնուն : Այլ վայ և եղուկ է մեզ, և եղուկ է նոցա զի անձամբ դանձն իմ դատապարտեմ զի և ես ի նոյնս կամ բայց հարեալ ի խղճէ մտացս. զի գիտութեամբ Աստուծածաշունչ

գրոց ծանօթացայ, կամիմ բառնալ, և ոչ կամին լսել. և ես հանապազ ի դառնութեան կամ զի սու վորութիւնն հնացեալ բնութիւն մակստացական է : Դարձեալ և ոչ կարեմ բառնալ ի մանկանց եկեղեցւոյ զի վիշապ ապստամբ եղեալ են, և ի խրատուէ հոգեւոր արանց և. եկեղեցւոյ վարդապետաց խոյս տուեալ դնան զհետ կամաց իւրեանց :

Բայց գիտելի է ձեզ ո՞վ եկեղեցիք Հայաստանեաց և կուսակրօն վանորայը կուսաստանաց՝ զի ասէ Տէրն « կերակուր ոչ պղծէ զմարդ. այլ որ ինչ ի բերանոյ ելանէ՝ նա պղծէ զմարդ » : Դու բերանով զարիւն Աստուծոյ ճաշակես և ասես « գնա՛, կե՛ր զշան և զմարդոյ, պղծես զբերանդ, որով ճաշակեալ ես զգառն Աստուծոյ և պղծես զբերան անմեղին այնորիկ, որ ճաշակեալ է զանմեղ գառն զբիստոս. և առանց խղճի մտաց կաս զամենայն ժամանակս կենաց քոց և ոչ բերես ի թիւ խոստովանութեան : Եւ ո՞վ քաւէ զժանտապից, ժահահոտ ժայթքեալ բերանոյ մեղս բո. այդ անբաւելի և անթողի մնաց քեզ և չար յիշատակ մինչ ի կատարած աշխարհի. և ո՞վ որ ուսեալ է ի քէն՝ յաւելու օր ըստ օրէ քեզ մեղս ի վերայ մեղաց քոց ըստ Դաւթայ « զի՞ր ըզ մեղս ի վերայ մեղաց » : Դարձեալ՝ անէծք և նզով ասելով զպատկերն Աստուծոյ անիծանես և ոչ դիտես եթէ զսկզբնատիան Աստուծած անիծանես. եւ

զգեցաւ զգրահ իւր եւ գտնենայն գործիս պատերազմին, եւ ելեալ գնայր առաջի նոյս սահմատ զգոր 1,000 ոգուզ առելի. կամ պակաս ճանապարհան կօրոյ ձորոյ յետ լերին սուրբ ուխտին Արանչելը գործին : Եւ նորա սրտապնդեալք 20,000 աւ ելեալ գհետ նոյս՝ ոչ կարացին մուսնել ի մէջ նոցա եւ ըմբռնել զնա : Այլ մի զօրեզ զօրական եւ քաջ մենամարտիկ եկեալ ի Զաղաթայէն արշաւեալ երփվարտն գոչեաց առ նա «ԱՌալրայ Արանդար» յեւ դարձիր զի տեսանեմք զիրեարս զի ի Խորասանայ ի հետ առ քեզ եկեալ եմ ի պատերազմել : Եւ նորայետա դարձեալ, զսուրն ի ձեռին առեալ եկաս առ նա եւ ասէ «ի Խորասանու եկեալ ես, կառարեցից զիսնդիրս քոյ» . եւ եհար զնա սրով ի պարանոյէն մինչեւ ի մէջսն յերկուս բաժանեաց : Եւ տեսեալ զնա առնենայն զօրացն արեւելեան ահաբեկ եղեալ եւ յապուշ դարձեալ ասէին «ով կարէ զնալ զհետ սորա զի այնպիսի ահագին եւ անպատմելի քաջութիւնս գործեաց սա» : Եւ այնուհետեւ այլ ոչ պատերազմ ի գործ արկին . այլ ահիւ զկնի նորա երթային : Եւ աներկիւղ երթեալ հասանէր ի գաւառն Բասենու : Իսկ բազմութիւն քաղաքին Արծկոյ ելեալ ի քաղաքէն՝ զառ եւ զաւար Թուրքմանին որ մնացեալ էր ի Զաղաթայէն՝ ի ներա ի քաղաքին ժողովէին. եւ չար ղաւակն եւ որդին

կողաստեան ոչ գնաց զինի նոցա. այլ ի յետս դարձեալ  
եկն յերկիրն Արծիշու :

Եւ բազմութիւն քրիստոնէիցն կարգաւորաց եւ  
աշխարհականաց ի լերինս եւ ի բլուրս, ի ծերապ եւ  
ի ծակս վիմաց փախուցեալք կային : Եւ նոցա շրջաւ  
պատեալ զեւրամբն, իբրև արծիւ որ որսայ զթուչունա  
երկնից, գոչէին, ճայնէին, երիվարաւն արշամէին,  
զսիրտս արանց եւ կանանց ճմիկին, իբրեւ զօր գա-  
տաստանին սոսկալի եւ սարսափելի պատուհասի  
հասին, զմեծամեծսն սպանանէին, զոմսնն թըզա-  
տէին եւ ի հաւատոց բեկանէին, եւ զկին եւ զորդի ի  
հարանցն յստիշտակեալ գերի առեալ տանէին :  
Գոչէր մայրն առ որդին եւ որդին՝ առ մայրն ամայր  
իմ՝ ո՞ տայր ինձ տեսանել զքեզ » : Եւ մայրն՝ առ  
որդին « ո՞վ որդեակ իմ՝ վայ է ինձ եւ եղուկ, եւ  
վայ առուր քոյ ծննդեան. վայ ինձ եւ վայ հօր քոյ  
աւետեաց, վայ բեկեալ բազկիս որ զքեզ բարձի  
արգեակ՝ երթեալ գնաս ի ծով դառնութեան. մի-  
թէ Քրիստոս քեզ ճար աղատութեան արաաց՝ » ։  
Եւ ացս կոկիծ դառնութեանս անձառելի է ընդ գրով  
արկանել զայս աղէտ տարակուսանաց նեղութեանս:  
Բայց սակաւ մի ծանօթութիւն տամ յետ մեղ եկե-  
լըցդ զի լալով լացք զկորուոտ ազգիս Հայոց, զի ան-  
ձամբ ի ներս կայաք : Եւ նոցա սոռեալ զսու եւ  
զաւար եւ զողորմելի մանկունսն մեր անթիւ եւ

անհամար ի քաղաքէ եւ ի գեղջէ, և երթեալ ի Տոռպ  
զաւառ յերկիրն Ա անայ ի յոտն առըր ուխտին Վ ա-  
րագայ՝ յանկարծակի հասեալ ի վերայ առաջնորդու-  
թեամբ պիզծ եւ անհաւատ քրդով մի Անդին անուն  
ի տանէ եւ յազգէ բարեբարոյ եւ աշխարհաշէն  
Ամիրայի Եղդին եւ Մէջփին, որ ունէր զերկիրն  
Բերկրոյ. եւ գերեալ զամենայն զաւառն անթիւ եւ  
անհամար զկանայս և զորդիս ամենայն հաւատացե-  
լոցն առեալ տանէին ի Խորասան :

Եւ ճիչն եւ վայ եւ եզուկն տիրեաց մեզ : Եւ մեք  
բազում անգամ հարցաբննութեամբ ի խնդիր ելեալ  
թերեւս գտանէաք զթիւ համարոյ գերեացն զԱր-  
ճիչոյ եւ զՎ անայ. եւ ոչ կարաց ստուգել, բայց  
միայն այսչափ զի երեք սարկաւագ ի սուրբ ուխտէն  
Մեծորայ, եւ 27 (34) գերի ի գեղջէն Աղոյ որ մերձ  
էին առ մեզ յազգէ եւ աիրելեաց ծանօթք զի գերե-  
ալք էին, եւ 10 գերի ի միոջէ տանէ ի գեղջէն Մա-  
ջառուաց : Եւ վայ մեզ եւ եղու կյայնմ օրէ մինչեւ  
ցայսօր եւ առ յապա :

Եւ այս եղեւ ի յ879 թուականին ի Պէնտեկոս-  
տէին աւուրս : Դարձեալ ի Խաչի տօնի աւուրն եկն  
Արանդարն այն, նստաւ ի վերայ Արծկոյ քաղաքին,  
եւ հնարէր զհնար առմանն : Իսկ բրիստոնէիցն  
խորհուրդ ի մէջ առեալ գաղտնի յանօրինաց, մանա-  
ւանդ խորհրդական եւ իմաստուն, իշխանակերպ եւ

քրիստոսասէր տանուտէրն Այուրատայ անուն դհետ  
Արձիշոյ տանուտեարցն Յովհաննէս Փոքո ձեռնա-  
ւորն եւ Գորգի մէլիքն Աղոյ տանուտէրն գնալ առ  
բռնաւորն Աբանդար եւ շիջուցանել զբարկութիւն  
դասոնութեան նորա. վասն զի եկեալ էր առ ի կո-  
րուսանել սրոյ մահուամբ զաղքատ քրիստոնեայսն :  
Եւ նոցա իջեալ առ նա աղաչանօք եւ աղերսիւք  
երդումն ետուն նմա զի մի յիշեացէ զառաջին  
ապստամբութիւնն եւ զանհնազանդութիւնն զոր  
արարին նմա, եւ մի մնաս ինչ գործեսցէ նոցա : Եւ  
ոզորմութեամբ Քրիստոփի շիջուցին զդառնութիւն  
նորա : Եւ նա երդուաւ ոչ ինչ մնաս գործել նոցա :  
Եւ ի մէջ գիշերին իջեալ ի պարսպէն գնացին առ  
նա. և նա անճառեցի ուրախութեամբ լցեալ սիրեաց  
զամենայն քաղաքացիսն. եւ այգուցն մտեալ ի քա-  
զաքն խաղաղութեամբ առանց կողոպտելոյ :

Բայց զտէր քաղաքին Սալթին անուն սպանին եւ  
Դանիշման մի խորհրդակից նմա . եւ մազ մի ոչ  
կորեաւ ոզորմութեամբն Աստուծոյ ի քաղաքէն զի  
քրիստոնեասէր էր եւ ոզորմած ազգին մեր : Այլ  
վասն հապարտութեան բարուց իւրոց ոչ ինքեան  
յաջողեցաւ եւ ոչ հաւատացելոցն. կորեաւ ինքն եւ  
կորոյս զազգս մեր : Խակ ի գալ միւս ամին, որ մտար  
յ880 թուականն, սով սաստոիկ եղեւ յաշխարհս մեր  
հաւատացելոց եւ անհաւատից զի կերան զշոմ եւ

գիտառու եւ զմեռելոտի, զձի և զջորի, զէշ և զողուց  
Եւ պարապեալ պակասեցաւ անսառունն. և դիմեցին  
ի յուստերս եւ ի դստերս իւրեանց մինչ զի ի Թաւ-  
րէզ քաղաքն կերեալ էին 1,000 ոգի գաղտնի եւ  
յայտնի, եւ աւերեալ վերին եւ ներքին կողմանքն :  
Այլ եւ ի Թաւրէզ քաղաքէն եկեալ էին (35) անդ  
Հեր եւ Զարեւանդ, Օշնի եւ Աղբակ, եւ դիմեալ  
գնացին ի կողմանս Քաջթերունեաց. եւ բազումը  
որք անդ մնացին՝ մեռանէին. եւ որք եկին յԱռեստ  
աւանի՝ ձկամրք և բանջարօք շատանային :

Իսկ գաղանքն որ սովորեալ էին ուստել զմեռելո-  
տիս, դիմեցին ի վերայ կենդանեացն, որք յերկիրս  
մեր կային : Մտանէր գայն յԱրմէշ եւ յամենայն  
գաւառս մեր, զորդին ի մօր գրկացն առեալ պատա-  
ռէր եւ ուստէր. թէ ի գաշտի դիպեալ յառնէր ի վե-  
րայ մեծաց եւ փորունց եւ առ ժամայն պատառէր :  
Եւ աւելի քան զ100 ոգիս ի յԱրմէշ գաւառի գայն  
եկեր թո՛ղ զաղքատս որ ի վերայ գետոցն Առեստու-  
եւ Մարմետու կային : Եւ ի գաւառէն Արարա-  
տեան ի ձմերային եղանակին ելեալ գնացին ի կողմն  
Վրաց այնքան հաւատացեալք ի խստութենէ օդոյն  
մեռեալ եղեն . մինչ զի ոչ կարացին ի թիւ արկա-  
նել վասն բազմութեանն, որպէս պատմեաց մեզ  
հոգեւոր եղբայրն մեր Զարարիս արեղոյն Տեղեր-  
ցի : Եւ մոթ ցորեանն աւելի հանէր քոն զ60 թան-

կայ ի պաղարին Ալճիշոյ : Եւ մեռանէին ամենայն  
մարդիկը բնիկը եւ օտարականը : Եւ առեալ ոմանք  
զձիս իւրեանց՝ դիմեալ գնացին ի հեռաւոր աշ։  
խարհս ի յԵրզնկայն եւ ի Խարբերդ եւ ի յԱմիթ  
եւ ի յԱրդնի եւ ի Գմշկածակ : Եւ որք անտերունչ  
մնացին՝ մեռանէին ի սաստկութենէ սովոյն . եւ  
ոմանք գնացեալ խառնեցան ի Քուրդն Բաղիշոյ,  
Մշոյ եւ Սասնոյ վասն աղբատութեան եւ սովոյն  
դառնութեան ելեալ ի հաւատոց դարձան յանհաւատ  
առոթիւն տեղի քան ղՅՈ ոգի . եւ տրտմութիւն  
մեծ եղեւ Աստուծոյ եւ հրեշտակաց եւ մարդկան :  
Եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մե-  
րոց եւ չար գործոց , մանաւանդ ի ծուլութենէ  
երիցանց և ի խարերայութենէ կրօնաւորաց և ի չար  
գործոց անհաւատ և ի առ տանում հաւատացելոց,  
ի զրկող և յանիրաւ տանուտերաց, ի պիղծ և ի զազ-  
րալի առաջնորդաց զոր ոչ կարեմք ընդ գրով ար-  
կանել զաղտեղութիւնս մեր և նոցա . զի ծածկագի-  
տին յայտնի է ամենայն : Եւ այս եօթն ամք են որ ի  
ներքոց դառն պատուհասի կամք . զի սուրն կորոյս,  
տղին սպան, գերին պակասեաց, գաղանք կերան ըզ  
մարդիկ, թռչունք կերան զվաստակս , գորտն և  
մկունք ապականեցին զանդաստանս աւելի պատու-  
հաս քան զԲարելաց ոցն յաւուրս Արրահամու և  
գառնագոյն քան զպատիմ Երրայեցւոցն և Եգիսկ.

տացւոց, զի որդիկի Եղիպտացւոց իծով ընկղմեցան։ Իսկ որդիկին Հայոց՝ ի ծովն անհաւատութեան Հրէ քաղաքին. նոքա ի ծովն մեռան, և ոչ ծննդեամբ բազմացան, որդիկին մեր և եղրարք, որք անհաւատութեամբ մեռան և կորեան, ամեն որդիկ նոցա անհաւատութեամբ և լնուն զաշխարհս սմենայն. և մինչ ի վերջին որ գատաստանին լինի թէ յազգէս Հայոց այնքան մարդիկ ամեն որ այժմ կենդանի եօթանասուն երկու ազգիս նման (36). զի թէ յութիցն մարդկան արդար և սրարկեցտ առն Աստուծոյ Նոյի ամենայն երկիր լցաւ, իսկ հազարաց և բիրաւոր արանց քանի՞ առաւել պարտ է ամել եւ բազմանալ :

Եւ այս պատուհաս որ եղեւ, մի կարգաւոր և աշխարհական, մեծատուն և աղքատ զլեզու իւր ոչ սանձեաց ի հայհոյութենէ յիշոցացն, եւ ոչ ասացին մեղայ Աստուծոյ և ի ժանտալից դառնապտուղ և դառնարերան անիծից և նզովից գարշաբերան աղտեղութեանց զորս ժայթքեն, հանապազօր մոխրաթաւալ նորընծայ ուխտի մանկունք եկեղեցւոյ Հայատանեաց՝ հանապազ զաղտեղիս խօսելով ըզ բերանս ուսումնականաց լնուն : Այլ վայ և եղուկ է մեզ, և եղուկ է նոցա զի անձամբ զանձն իմ գատարարտեմ զի և ես ի նոյնս կամ բայց հարեալ ի խղճէ մտացս. զի գիտութեամբ Աստուածաշառնչ

գրոց ծանօթացայ, կամիմ բառնալ, և ոչ կամին լսել. և ես հանապազ ի դառնութեան կամ զի սու վորութիւնն հնացեալ բնութիւն մակստացական է : Դարձեալ և ոչ կարեմ բառնալ ի մանկանց եկեղեցւոյ զի վիշապ ապստամբ եղեալ են, և ի խրատուէ հոգեւոր արանց և եկեղեցւոյ վարդապետաց խոյս տուեալ գնան դէետ կամաց իւրեանց :

Բայց գիտելի է ձեզ ո՞վ եկեղեցիք Հայաստանեայց և կուսակրօն վանորայր կուսաստանաց՝ զի ասէ Տէրն « կերակուր ոչ պղծէ զմարդ . այլ որ ինչ ի բերանոյ ելանէ՝ նա պղծէ զմարդ » : Դու բերանով զարիւն Աստուծոյ ճաշակես և ասես « գնա՛, կե՛ր զշան և զմարդոյ, պղծես զրերանդ, որով ճաշակեալ ես զդառն Աստուծոյ և պղծես զրերան անմեղին սցնորիկ, որ ճաշակեալ է զանմեղ դառն զբիստոս . և առանց խղճի մոտաց կաս զամենայն ժամանակս կենաց քոյ և ոչ բերես ի թիւ խոստովանութեան : Եւ ո՞վ քաւէ զժանտալից, ժահահոտ ժայթքեալ բերանոյ մեղս քո. այդ՝ անքսւելի և անթողիլ մնաց քեզ և չար յիշատակ մինչ ի կատարած աշխարհի. և ո՞վ որ ուսեալ է ի քէն՝ յաւելու օր լստ օրէ քեզ մեղս ի վերաց մեղաց քոյ ըստ Դաւթայ « զի՞ր ըզ մեղս ի վերաց մեղաց » : Դարձեալ՝ անէծք և նզով ասելով զալատակերն Աստուծոյ անիծանես և ոչ դիտես եթէ զսկզնատիալն Աստուծած անիծանես. եւ

ավ զԱստուած անիծանէ՝ մեղքն այն մահուչափէ եւ  
աններելի : Ո՞վ թողու զայդ մեղք քեզ . զի Աստ-  
ուած միայն է այդ կապին կապողն և արձակողն-  
եւ դու զԱստուած հայհոցես, մնաց այդ անբաւելի :  
Եւ դարձեալ Աստուած վասն այն եկնյաշխարհս զի  
զանէնս Աղամայ բառնայ, եւ դու լրբութեամբ նոր  
նորոգես. կարե՞ս տպատափանի տալ Աստուծոյ թէ  
ոչ գիտէի : Ահա Աւետարանն ուսուցանէ քեզ թէ  
ոչ գիտէիր : Եւ վարդապետ և եպիսկոպոս անիծա-  
նես . ահա Քրիստոս և Հուսաւորիչն Գրիգորիս  
ուսուցանէ ի գիրս կանոնաց իւրոց «քահանոց որ  
զպատկերն Աստուծոյ անիծանէ , ինքն զինքն ի  
Քրիստոսէ որոշէ» : Եւ քաջ հովիմն եկեղեցւոյ մեծն  
Աթանազիոս ասէ թէ՝ քահանայ որ վայրապար ըլ  
մարդ անիծանէ՝ ի քահանայական կարգէն լուծցէ :  
Վասն որոյ զերեսս ի գետին դնելով աղաչեմ զեզ-  
քարթ զհող ոտից ձեր լիզելով մի որոշէք զձեզ ի  
Քրիստոսէ և մի լուծանիք ի քահանայական կարգէ .  
զի ի բերանոյ անտի ասէ Տէրն ելանեն պղծութիւնք.  
և Աւետարանիչն ուսուցանէ « ամենայն պիղծ եւ  
չարակամոշ մտանէ յարքայութիւնն Աստուծոյ » և  
զրկէ զբեզյերանութենէ . որասէ նոյն Աւետարանիչն  
երանելիեն որք լուանան զհանդերձ իւրեանց յանա-  
րատ արիւն գատին . և դուք քահանայըդ՝ լուացէր ըլ  
հոգի ձեր և զմարմին ձեր յարիւն գառին Քրիստոփ :

Աւաղէ մեղ եթէ յայնպիսի աստուածային շնորհացն զրկէ զիարդաւորն. զի թէ ամենայն արարածք ողբա ի բերան առեւալ ողբան զայնպիսին՝ ոչ ինչ կարեն վնասել. իսկ եթէ դառնաս յայնպիսի լեզուագարութեանց՝ ողորմեացի քեզ Աստուած աստ և ի հանդերձեալն աղօթիւք և բարեխօսութեամբ ամենայն սրբոց, և ի ձեռն ձերոյդ զղջման և աղօթից նորոգումն առնէ Աստուած կորուսեալ և ջնջեալ ազգիս : Զի վասն այսպիսի հայհութեանց հեռացաւ սուրբ Հոգին Աստուած, կարծեմ, յազգէս և յեկեղեցւոյս Հայաստանեայց :

Դարձեալ՝ դարձցուք ինոյն կարգ առաջի եղեալ շարադրեալ սլատմութեանս վերջին ժամանակիս թշուառական և տառապեալ ազգիս : Բոնաւորին Սբանդարին որդի մի կայր եղեալ իշխան իյամուրն Տոսպ գաւառի իյոտն Արագայ ի Վան քաղաքի՝ անուն Արալի. և առնէր զանիրաւութիւն հարկապահանջութեամբ ազգիս մեր և Տաճկայ : Եւ նորա երթեալ առ հայր նորա Սբանդար գանգատեն ի վերայ նորա եթէ ոչ կարեմբ տանել վշտաց և դառնութեան նորա զի կարի յոյժ աղքատացոյց զաշխարհս մեր : Եւ նորա կարի յոյժ դառնացեալ՝ կոչեաց զնառ առ ինքն առ ի խրատել զնորա տգիտութիւն. և նորա երկուցեալ գնալ առ հայրն, այլ խոյս ետ և գնաց առ տէրն Շահնշահու Խալիլ-Ռուլահանուն՝ որդի շեխ

Խրբահիմին : Խակ նորա ըմբռնեալ զնա ետ տաճել  
առ տէրն Խորասանայ Շահ-Ռուհ անուն՝ որդի Թա-  
մուրին, ծածուկ ոխ ունելով Խալիլն ընդ Սքանդա-  
րին : Եւ նորա իմացեալ գաստելութիւնն առ նո՞  
զօրս ժողովեալ գունդ կաղմեաց և գնաց ի վերայ  
կողմանն Շամսիսու, աւերեաց զաշխարհն ամենայն,  
զքաղաք և զգիւղ և սրոյ ճարպակ ետ 15 աւուր ճանա-  
պարհու զաշխարհն, և ի դառն նեղութիւն արկ ըզ  
տէրն Շամախու և զքաղաքն Շամախի : Եւ զծառ  
և զայգի հատանէր առանց խնայելոյ և անալստոմեցի  
աւերս գործեալ : Եւ իշխան մի ի նոցանէ Սքանդար  
անուն գտեալ իւր ինքեան անուանակից և չարու-  
թեամբ հաւասար, առեալ զնա և տարեալ անցոյց  
յոյն կոյս զրանն Դարրանդու. և աւերեաց բազում  
աշխատհս անողորմ սրախողխող առնելով զլեանա-  
կոնս և գլաշտականս՝ զամ մի լման անդ յամեալ  
զանմեղ արիւնս հեղլով զոր ոչ ոք կարէ ընդ գրով  
արկանել : Եւ անտի դարձեալ յետս և 360 դանիշ-  
մանի զլուխ հատեալ, և ի բեռինս եղեալ արիւնա-  
շաղախ և գարշահոտ՝ բերին յերկիրն Այսնեաց :  
Եւ քրիստոնէիցն կարի յոյժ ողորմած գտեալ զի  
երեսուն գերի բերեալ էին գաղտնաբար. Յակոբ  
անուն քահանայ մի եկեալ զինի նոցա, և ծանու-  
ցեալ նմա. և նա կարի յոյժ դառնացեալ՝ ազատեաց  
զնոսա ի խաղաղութիւն :

Իսկ տէրն Շամախու Խալիլն այն առեալ զդուտի  
և գմիտադիս և ընթացեալ առ Շահ-Ռուշն՝ տէրն  
Հրէ քաղաքին, հող զզվառվ արկեալ և զօձիսն պա-  
տառեալ պատմեցին զդառն և զողբալի անցս աղե-  
տիցն որ անցոյց ընդ նորա Աբանդարն : Իսկ նորա  
ցամամբ զայրացոյց զինքն և զամենայն ընտանիս  
իւր. և դառնութեամբ մաղծին լցեալ զախորժակ  
իմացականին՝ կոչեաց զամենայն առաջնորդս չարին  
Հրէ քաղաքին՝ դմեծամեծս և զփորունս և ասէ ցնո-  
սս « ուղիղ և արդար դատաստան արարէք թէ զինչ  
պարտ է առնել որդուց Յուսուփին » : Եւ նորա ամե-  
նեքեան ի մի բերան աղաղակեցին « մահապարտ է,  
սատակեսցի սյրն այն. և եթէ ոչ սատակես զայն-  
պիսի անողորմ արեանարբուն՝ ի քէն պահանջէ  
արարիչն Աստուած զդատաստան նոցին ո : Եւ նա  
հրամանետ զէն զինուորութեան բերելև կապելզան-  
ձամբ իւրով, զոր ի վաղուց հետէ արդելեալ էր աօֆի  
գոլով և խաղաղակար : Եւ ի սրտութենէ ցամանն  
երեք աւուր ճանապարհ քսան ոգւով բարկութեամբ  
եկեալ : Եւ ապա զօրաց նորա աստի և անտի ժողո-  
վեալ անթիւ և անհամար բազմութեամբ եկեալ  
հասին ի Առկթանիս քաղաք . և 40 օր արգելս տու-  
եալ թերեւս ընդ առաջ նորա եկեսցէ հնագանդու-  
թեամբ յիմար գոռոզն այն սաղբեալն և խարեալն ի  
սատանայէ :

Եւ նորա անփոյթ արարեալ զնմանէ : Իսկ Շահ-  
Ռուչն խաղաղասէր գոլով՝ ծանր զօրօք շարժեալ  
եկն եհաս ի տունն Սիւնեաց ի յամուրն Երնջակայ ,  
և շուրջ պատեալ պաշարեաց զայն աւուրս բազումաւ  
Եւ որդի նորա և մայր նորա իմաստութիւն ի գործ  
արկեալ ուխտ եղին նմա ոչ թողուլ զհայր նորա  
կենդանի եթէ հնար լինիցի սպանանել զնա , և ըզ  
գանձս բազումս ուկի և արծաթ տանել նմա : Եւ  
առեալ զաղերս ի պատգամաւրացն շնորհակալ  
եղեւ նոցա : Եւ գովեաց զիմաստութիւն նորա թէ  
իմաստութիւն որդոյ նորա Խանումայ (մեծ է)քան  
զիմաստութիւն գոփայ Սբանդարին : Եւ դարձեալ  
դեսպանացն մեծաւ պարգեւօք եկին ի կայն . և  
Սբանդարն արտաքոյ կայր կլային . փախեաւ 150  
մարդով՝ եկեալ գողապէս յերկիրն Գրգովիտ իգիւղն  
Արծափ աւուրս սակաւս անդ դաղարեալ երեք կամ  
չորս : Եւ անտի յարուցեալ գնաց ընդ զօրա իւր և  
եհաս ի քաղաքն Կարնոյ այժմ Արզում կոչե-  
ցեալ , ուր էին փախուցեալք յահէ և յերկիւղէ  
Զաղաթային եկեալ :

Իսկ տէրն Երդնկային Օթման անուն առեալ ըզ  
զօրս իւր և եկեալ ընդ առաջ նորա աւելի քան քսան  
հազարաւ պատերազմել ընդ նմա : Եւ նա սրտա-  
սինդեալ ունելով ընդ ինքեան 3,000 ոգիս՝ սպառա-  
զինեալ ամեներեան յանկարծակի մոին ի մէջ բազ-

մութեան զօրաց նոցին, հարեալ սպանին զՈթմանն՝  
զգլուխն զօրաց և զորդին անուն Պայազիտ և աւեւ-  
մի քան զ700 ոգիս. և ըմբռնեալ զբաջ զօրեղ զօրա-  
կանսն 100 ոգի, իրրեւ զոչխար զենեաց անողրոմ  
և անագորոյն գաղանն՝ որդին սատանայի : Եւ զըս  
պանեալքն ի ճանապարհին իրրեւ զբերդկոց եղին.  
և յերկրորդ աւուրն եկեալ հասին զօրք Զաղաթային՝  
որդին Շահ՛-Ռումին Զօնգայ անուն ունելով ընդ  
ինքեան 30,000 ոգի : Եւ տեսեալ զսպանեալքն ի  
ճանապարհին՝ զահի հարեալ ափշէին և ոչ կամէին  
գնալ զչետ նոցին : Եւ որդի նորա այսն համարեալ  
զոշ գնալն զչետ նոցա՝ բարկութեամբ լցեալ ասէ  
դէմ յանդիման առաջի մեծամեծաց իւրոց « մի՛ ոք  
իշխեաց ի զօրաց մերոց մնալ ի քաղաքի կամ ի  
լերինս. այլ ամենայն միաբանութեամբ սպառազի-  
նեսցո՞ւք զկնի նոցա » : Եւ նոքա ընթացեալ զկնի նո-  
ցա հասին և առին զառ և զաւար և զամենայն կողո-  
պուտ նոցա : Բայց ոչ կարացին մոտանել ի մէջ  
նոցա. այլ մերձ ընդ մերձ երթային մինչ ի Աղար  
քաղաք. և ոչ կարացին ըմբռնել զնսա : Եւ նա եր-  
թեալ բնակեցաւ ի Թօխաթ և յերկիրն իւր. և պա-  
տիւս մեծամեծս ընկալաւ յիշխանաց քաղաքացւոց  
և շրջակայից կողմանցն այնոցիկ :

Իսկ ի գարնանային եղանակին աւերեաց գաշ-  
խարհս նոցին, և առեալ գնաց նստաւ յեզր գետի

միոջ, և ժողովեաց զօրս բազումն աւելի քան ըզ 40,000. և եկեալ նստաւ մերձ առ նոսա, և ոչ ինչ կարաց առնել նոցա. և նոցա տեսեալ զանարի գոյն նորա՝ եկեալ քամկեցին և աւերեցին զայշարհս նորա : Եւ եկեալ ի Սեբաստիա նստաւ ի վերայ այրի միոջ ուր փախուցեալ էին յահէ նորին. և սուս երդմամբ խարեաց զնոսա և եհան յայրէն զբազմութիւն հաւատացելոցն, և գերեաց գլին և զորդի անմեղիցն և տառապեալ ազգիս Հայոց, և չարքն չարչարեալ հրով և սրով և անսաելի չարչարանօք : Իսկ քրիստոնեային որք կային ի Տիւրիկէ՝ տեսին ըզ չարչարեալըն և զգերեալըն և լալով և ողբաղով գնացին ընդ առաջ չար բռնաւորին և նեռին կարապետին, անթիւ և անհամար գինս ետուն և գնեցին. և զբազումն ի նոցանէ բերեալ հասուցին ի կողմանա վերին : Եւ ապա եկեալ ի վերայ Խարբերդու՝ այրեաց հրով և սրով զամենայն երկիրն. և ի սուգ գերութեան նստոյց զամենայն բազմութիւն ողորմած և գթած գաւառին :

Եւ եկեալ ի վերայ զաւառին Դերջանու՝ եհան զամենայն կայիւք և կարսասեօր, որդւովք և դատերօք, և կամեցան տանել յերկիրն Արարատեան և Աիւնեաց : Եւ էին աւուրք դառնաշունչ և դժնդակ օդոյն ձմերայնի. և յետ երկուց աւուրց յանկարծակի ձիւն սաստիկ եկն ի վերայ նոցա . և ի զիշերին

յայնմիկ պաղեցաւ երկիրն. և բազում քրիստոնեայք պաղեալ մեռանէին. որդի առ հայրն գոչէր և հայր՝ յորդի. և սիրելի որդիք նոցա ի գիրկս մարց մեռանէին : Եւ առեալ զորդիս ի դիրկս խրեանց ձայն բարձեալ աղաղակէին ի վեր առ Աստուած « Տէ՛ր Յիսուս՝ վրէժխնդիր լեր արեան ծառայից քոց, զի դու ես յոյս և ապաւէն մեր, և աղատեա՛ զմեզ և զորդիս մեր ի ձեռաց գաղանիս » : Եւ մեռան ի սոյն առուրս տւելի քան 700 ոգիք անմեղ քրիստոնեայք ի դառնաշումչ օդոյն. և ոչ գոյր ժամանակ թաղելոյ զնոսա զի կերաւուր եղեն գաղանաց . և ոչ գոյր շինութիւն գեղօրէից մերձ առ նոսա : Եւ վերակացուաց նոցա հատեալ զականջս նոցա տարեալ ցուցանէին նեռին կարապետին : Եւ նա ծիծաղելով ասէր « Աստուած արար. զինչ փոյթ է ինձ. թո՛ղ չէր տուեալ զդոսա ի ձեռս իմ՝ և ոչ ձիւն յերկնից առաքեալ » :

Զայս չարիս գործեաց անօրէն գաղանն. և տգէտք ոմանք վասն սակաւ սիրելոյն զհաւատացեալս թէ ազգ բարի է՝ երկարութիւն կենաց խնդրէին. որ և կարծիք է մարդկան թէ՝ քան զաստեղս աւելի մարդիկ մեռեալ եղեն վասն սորին անհնագանդութեան և հպարտ բարուց որ ոչ հնագանդեցաւ թագաւորին արեւելից : Վասն զի նա խաղաղասէր էր, ոչ կամեցաւ խոռվարար լինել զի ետես զհայր իւր,

որ շան պէս ոռնայր իգերեզմանի. և յոչ կամաց կորոյս  
զազգս մեր : Իսկ որ զկամս երկիւղածաց իւրոց  
առնէ և աղօթից նոյս լսէ՝ աղօթիւք եւ մահուամբ  
անմեղացն դարձոց զօգնութիւն ի սրոյ նորա և տկա-  
րացոյց յաչս զօրաց իւրոց և սիրելի եղբարց և ազ-  
գականնաց. եկեալ հմասաւ առ եղբարս իւր ջհանշահ  
անուն, որ կացուցեալ Շահ-Ռուհին ի վերայ աղգաց  
իւրոց և ի վերայ աշխարհիս մեր : Եւ պատերազմ  
յարուցեալ եկն ի վերայ. ջհանշահ՝ եղբօր իւրոյ,  
զիտելով թէ զօրք իւր զանձինս իւրեանց ի վերաց  
դնիցեն, որպէս միանգամ եղին, և սպանին զեղբայր  
իւր սուլդան Բուսայիդն, զոր և նոյն Շահ-Ռուհն եղ  
ի վերայ աշխարհիս մեր. այլ ամենեքեան թողին ըզ  
նա և փախեան, և գնացին առ եղբայրն ջհանշահ :  
Եւ ինքն մնացեալ սակաւ արամբ՝ մազապուրծ ե-  
ղեալ յեղբօրէն իւրմէ զաղտագողի երթեալ յա-  
մուրն Երնջակայ՝ զձմեռն մի լման անդ անցոյց ըզ  
կեանս իւր ի բերդին արբեցութեամբ :

Իսկ եղբայրն շրջալատեալ պաշարեաց զնա զօ-  
րօք իւրովք մինչ ի յեղանակ գարնանային ժամանա-  
կին ամրոցս և բնակութիւնս շինելով չուրջ զամբո-  
ցաւն : Եւ նորա զաղտարար դեսպան առարեալ  
առ սուլդանն Մսրայ տալ նմա օգնական գօրս  
բազումն : Եւ նորա յղեալ բազում զօրս աւելի և  
յոլով քան զ60,000. և նոյս եկեալ ի զաւառն

Եկեղեաց՝ լուան թէ սպանին զնա ի բերդին Երնջաւ կայ : Եւ էր Աքանդարին այն որդի մի Շահուբաթ անուն. միաբանեալ ինքն և մայրն իւր և 10 զօրեղ զօրականս և քաջ մենամարտիկս, և ի գիշերի երաթեալ գտին զնա ի քուն արբեալ ի դինւոյ. և հանեալ զսուրս իւրեանց՝ սրախողխող արարեալ սպանին զնա ոչ գիտելով բարեկամաց նորա : Եւ այգուցն եկեալ տեսին զՇահուբաթն և ասեն. ուր է հայր քոյ, և նա ասէ. թշնամին ձեր այնպէս լիսի որպէս հայրն իմ : Եւ տուեալ նոցա երդումն զի մի ինքեան վնաս գործեսցեն : Եւ կայր նորա մի բարեկամ Հօլավլու անուն, բերեալ սպանին զնա. և ըզ գլուխ նորա հատեալ ետուն տանել զնա առ եղբայրն Շահանշահ, որ չուրջ նստեալ պաշարէին զնա : Եւ նորա տեսեսղ՝ ուրախութիւն մեծ արարեալ և նաւակատիս մեծ կատարեալ՝ փառս տային Աստուծոյ զի զթշնամին իւրեանց ծնեալ որդին ի նմանէ սիրեցեալ սպան զնա և ոչ ինքեանք սպանին զնա. և բարձաւ չարն ի միջոյ և ոչ ետես զիառս Աստուծոյ ըստ մարգարէին : Եւ թէ՝ տեսի զամբարիշտն վերացեալ և բարձրացեալ. և ահա ոչ էր զի այր արիւնահեղ էր, ոչ հասարակեաց զաւուրս կենաց իւրոց. և խաղաղացաւ երկիր ի սակաւ աւուրս : Զի ի Խորասանու մինչ ի Մար խոռովութիւն վրդովմանց կայր յաշխարհ ամենայն որբան նա կենդանի էր ի

վերայ երկրի : Եւ և թուականն 886. որ այս գործեցաւ : Ի յ870 թուականէն ի հետ մինչ ի մահ սորտ ամենայն երկիր ի վրդովման կայր և ի խռովութեան անհաւատ և հաւատացեալ զի երեք անգամէ այս որ Շահ-Ռուհ Զաղաթայն նորտ անհնաղանդութեան աղագաւ զամենայն թուրքմանն և զՄիջերկրեայս ի գերութիւն ետ միանգամ ի Վաղարշակերտ, երկրորդ՝ ի Սալմաստ, երրորդ անգամ այս է յորմէ մեռաւ ինքն և բազումք վասն նորա մեռան : Եւ զայս յայտնի եմ տեսեալ ի գաւառ մեր զի յ885 թուականիս յերկրորդ գալին Զազաթային փախեար ի Զաղաթայէն և հասաք ի Խլաթքաղաք, Հեր և Բերկրի, Արձէշ և Արծէկ : Յանկարծակի հասին ի վերայ ամենայն Քուրդ և Քրդատան ի լերանց և ի բլրոց, և սուր հանեալ ահարեկ արարեալ զամենայն տառապեալ աղգս մեր սրա խողխող արարեալ կամէին կորուսանել առհասարակ զամենեսեան : Եւ այնքան ահազին լիներ օրն այն ի յահէ և յերկիւդէ և ի գոչմանէ պիտի և արեանարբու աղգին Մարտաց մինչ զի իրրեւ օր դատաստանին լիներ եթէ ոչ էր հասեալ յօգնութիւն յոյսն ամենեցուն Քրիստոս Աստուած փրկիչն մեր . զի ի գիշերի ելեալ կամէաք գնալ ի քաղաքն Բաղէշ առաստուածասէր և քրիստոսատէր և աստուածապահ հաւատացեալլին որ ի նմա վարդապետը և եպիսկոպո-

պղաք, քահանայք և կրօնաւողք. յանկարծակի հասին ի վերայ մեր, և սուր ի ձեռին ունելով կամէին առ Հասարակ զամենեսեան սրոյ ճարակ առնել : Իսկ մեր ապաւինեալ Աստուած՝ զամենայն մարմնաւոր գոյս ի բաց թողեալ՝ ի լերինա փախուստ առեալ օգնութեամբն Աստուծոյ և շնորհօք՝ աղատեցաք ի ձեռաց նոցա :

Եւ համբաւ նեղոթեանս մերոյ հանեալ ի քաղաքն Բաղէշ, և եպիսկոպոս նոցա Տէր Ատեփաննոս՝ այր ողորմած և աստուածանէր, առեալ զբազմութիւն հաւատացելոցն և զվարդասկետն մեր հոգեւոր հարազատ եղբայր Ատեփաննոս անուն ողբա ի բերան առեալ ըսյին զմեղ. և տարին, հանգուցին զմեղ, և զերիս ամս իրրեւ զհրեշտակս Աստուծոյ ընկալան զմեղ և զայրատսն մեր : Զոր և Տէր Աստուած մեր Յիսուս Քրիստոս անփորձ և սնսասան կենօք պահէ զգաւառն զայն մինչ ի միւսանգամ գալուստն իւր որդութիւր և դուտերօք և ամենայն գոյիւք : Եւ էր թուականս մեր 884 :

Դարձեալ և աստ պատմեցից զաղէտ և զկսկիծ դառնութեան մերում ազգի : Եղ ի քաղաքն Արծէկ այր մի բարեպաշտ և երկիւղած, աստուածանէր և սիրող սրբութեան, յոյժ խոնարհ և կարգաւորասէր և ամենայն չարեաց ատեցող. և տիւ և գիշեր յազօթս կայր եղբարբեք և որդուվ և ամենայն ընտա-

նեօք : Եւ էր անուն նորա Մուրատշահ՝ պատկերով  
քաղցր և ողորմած : Եւ կոխեալ էր զամենայն ան-  
օրէնս քաղաքին մինչ զի նոր հիմն եղ ի մէջ անօրի-  
նաց խաչիւ և աւետարանաւ ջուր օրհնել ի Յայտ-  
նութեան Տեառն : Եւ էր իբրեւ թագաւոր Քրիս-  
տոնէից ի մէջ ծովու բոլորիս : Եւ նախանձեալ  
սատանայի և կամարարաց նորա չար աղջին՝ մատ-  
նեցին զնա քաղաքապետին . և նոցա ոխ ունելով  
ընդ նմա մատնեցին զնա քաղաքացիքն անօրէնք  
թոյլտութեամբ մերոյ ազգիս պղծոյն և չարա-  
գործի Զենոն անուն : Եւ նորա եղեալ ի բանտի  
նետալից (37) արարեալ և ի դղեկէն ի վայր արկեալ  
եհաս մարտիրոսութեան և անանց պսակացն : Եւ  
յառաջ քան զայս տանուառէր մի Զաքարիէ անուն  
ըմբռնեալ և ի պարանոց նորա պարան արկեալ  
հեղձուցին զնա . որոյ յիշատակն օրհնութեամբ  
եղիցի, եւ աղօթիւք սորա Տէր Յիսուս Քրիստոս  
մեզ ողորմեսցի եւ ամենայն քրիստոնէից. ամէն :

Բայց եւ զայս գիտելի է զի ի սոյն աւուրս պիզծ  
իշխանն Փիրալի անուն, որ նատէր ի քարն (38) Ամ-  
կու, երեք անգամ ի սոյն ամի զերկիրն Արձիշու եւ  
Արծկու գերեաց եւ կողոպտեաց. եւ ի գիւղն Զե-  
րիատ (39) զձեռնաւորն Մկրտիչ անուն ութե  
մարդով ընտանեօր տան իւրոյ ի հուրն այրեաց :  
Եւ բորեսլաշտ ձեռնաւոր մի Յովհաննէս սպան ի

գիւղն՝ Ասպիսնակ : Եւ եղրայր մի ծառայիս Արիա-  
տակէս անուն ի հուրն խորովեցին իբրեւ զգառն  
անմեզ : Եւ վասն Քրիստոսի տոքա այսպէս նահա-  
տակեալ ընկալան ի Քրիստոսէ զպսակն անապա-  
կան. որ եւ գործեցեալ մեղաց նոցա թողութիւն  
առնէ Տէր Աստուած Յիսուս Քրիստոս. ամէն : Եւ  
զամենայն գաւառս այնքան կողովտեցին եւ ի  
յընչից մերկացուցին մինչ զի ամենայն քրիստոնեայր  
որ այժմ կան մեծամեծք եւ փոքրունք խոտեն զին-  
քեանս և ոչ ինչ համարին, առանց ամօթոյ խոտով  
ծածկեն զինքեանս, եւ մերկ եւ բոկիկ շրջին իբրեւ  
զանասունս :

Եւ զկանայս հաւատացելոցն որք մտեալ էին ի  
կղզին Լիմն կոչեցեալ, աւելի քան զերկու եւ զերեք  
հարիւր թանկայ վաճառեաց ի վերայ աղքատացն  
մերոց որ մին դրամի տէր ոչ գոյր : Եւ այն իշխանն  
որ կործանեաց զաշխարհս մեր՝ այժմ տէր եւ իշ-  
խան է կարգեալ ի վերայ աշխարհիս մեր վասն մե-  
ղաց մերոց պատուհասի եւ ի բարկութենէն Աս-  
տուծոյ. եւ այժմ ձգեալ է զամենայն հաւատացեալս  
ի ներբոյ հարկապահանջութեան՝ մինչ զի ամենայն  
մարդագլուխ 40 թանկայ առնուն թո՛ղ զրահրայ եւ  
զշարէք (40) ի ծերոց և ի տղայոց, յորբոց և յայրեաց,  
ի կուրաց, յաղբատաց եւ ի տնանկաց : Եւ ամենե-  
քեան կենդանի մեռեալք և սովեալ կան : Եւ մեր

զայս ամենայն տեսանելով զողբումն եւ գհառաչանա մերկացելոց եւ աղքատաց եւ գանգատ ի սուտ անուն տանուտերաց որ թուլութեամբ եւ անփոյթ առնելով կորուսին զտառապեալ ազգս մեր ոչ մի այն ի դառն աղքատութեան այլ և ի գործս անլաելիս եւ անպատմելիս եւ յանառասկ արրեցո։ Թիւնս ծերոց եւ տղայոց, որպէս յայտ է տեսանել ի քաղաքն Արմէց, զոր եւ կամիմ սակաւ մի ծանուցանել։

Քահանայ մի Սուեփաննոս անուն, ի յերկրէն Ամկու, սակաւ աւուրբք եկեալ բնակեցաւ ի կղցին Լիմն կոչեցեալ, եւ անտի եկեալ ի քաղաքն Արմէշ տեսեալ անտեսուչս(41)և անառաջնորդ ոչ հոգեւոր առաջնորդ ունելով եւ ոչ մարմնաւոր, ոչ եպիսկոպոս եւ ոչ վարդապետ, ոչ ձեռնաւոր եւ ոչ տանուտէր, յափշտակեալ կին մի ի քաղաքացւոյն հրամանաւ եւ կաշառօք անհաւատից, և բազում ժամանակս եղեւ առաջնորդ քաղաքին։ Եւ նենգեալ անօրինաց եւ ստախօս քրիստոնէից մատնեն զնա քաղաքապետին Արծկոյ Սահանդ անուն։ Եւ զտանուտէր մի աստուածաէր Մուսեֆիր անուն։ Եւ Հեղին զարիւն նոցա, եւ զգլուխս ի պարսպէն ի վայր կախեցին։ Եւ այն թէպէտ եւ պատիժ էր ի Տեառնէ զի ամենայն կարգաւոր յիւրում կարգի կացցէ։ այլ անմեղ արեամբն իւրեանց լուացին(42) զաղտեզութիւն մեղաց յիւրեանց։ զի աստի կենաց պատիժ»

ազատէ ի պատժոց տանջանաց դժոխոց : Եւ դարձեալ եթէ ձեռօք անհաւատից մեռանէին քրիստոնեայքն այնպէս, որպէս Աքէլ մեռաւ ի կայենէ, եւ կայէն պատժեցաւ ի Տեառնէ . զի ասէ գլուխն հաւատոյ մի որ ի ձէնջ չարչարիցի իրբեւ զգող կամ իրբեւ զշարագործ կամ իրբեւ զտարատեսուչ այս ինքնէ կախարդ, ապա եթէ իրբեւ զքրիստոնեայ՝ մի ամաչեսցէ : Նոյնպէս եւ սոքա մի ամաչեսցն առաջի Քրիստոսի. այլ ընկալցին զանապական պատկն ըստ նմանութեան մարտիրոսական դասուցն . եւ թողութիւն մեղաց արացէ՝ սոցա Տէր Աստուած Յիսուս Քրիստոս. ամէն : Եւ այս էր յ844 թուականիս մերոց :

Այլ ի քահանայէս յայսմանէ ծնաւ մանուկ մի Յովհաննէս անուն, եւ սիրեցեալ եղև յաչս ամենեցուն՝ հաւատացելցն և անհաւատից. և եղին զնաձեռնաւոր քաղաքին և երկրին հրամանատու : Բոյց չար սերմանցն չար լինի երկրագործութիւն, և չար ուսուցացն չար լինի ուսումն նոցա : Զի հայր սորատուեալ էր զդուատոր իւր առն միում Մուրատ անուն. և սա առեալ էր զբոյր փեսային ի կնութիւն ինքեան : Այս առաջին վնասն էր. և երկրորդ՝ զի ծնեալն ի կնոջէն յայնմանէ Բաղչաշիշ անուն՝ կայրի գործս անպարկեցու . և խրատեալ ի սիրելեաց իւրաց Վեգենայ անուն, և նա հանեալ դսուրն իւր

խոցեալ սպան զնա. և դառն սգով եղբարցն իւրաց  
եղին ի գերեզմանի : Եւ մեք աղօթս և պատարագն  
մատուցաք թերեւս թողութիւն մեղաց գտցէ. և նա  
ոչ զղացաւ ի գործս իւր : Դարձեալ մայր սորա  
մեռեալ. և հայրն երթեալ առնու զհօրեղբօր իւրոյ  
կնոջ քուեր դուստրն. և կեցեալ սակաւ աւուրբք՝  
մեռանի ես կինն այն. և նա ոչ ապաշխարեաց ըզ  
մեղս իւր : Եւ դարձեալ էառ յետոյ այլ կին և ոչ էառ  
յանձն ապաշխարութիւն վասն քաւութեան մեղաց  
իւրոց այլ կայր ցոփութեամբ բազում ժամանակս :

Դարձեալ էր սորա հօրեղբօր որդի մի Յովհաննէս  
անուն. և ետ գդուստր մանկան միոջ Ղրիմպէկ ա-  
նուն. և զբոյր նորա առեալ քուեր որդոյ իւրոյ :  
Եւ մանուկն այն տկարացաւ ցաւօք դառնագունիւք.  
և գնաց ի սուրբ ուխտն Գաղտօն և այլ ոչ դարձառ.  
Եւ մայր սորա ի ճշնութիւնս և յազօթս կայր հանա-  
պազօր. և եղբայր իւր ոչ գթացաւ ի նա : Դար-  
ձեալ վիշապն սատանայ շարժեաց զոտուտն իւր  
այսինքն կամեցաւ հարսանիս առնել որդոյ իւր.  
երթեալ առնու զբուեր դուստր վեսային հօրեղբօր  
որդոյ իւրոյ, յորմէ զմիւա քոյրն առեալ էր քուեր որ-  
դին իւր : Եւ մեք դէմ յանդիման քարոզելով խրա-  
սեցաք, և նա ոչ հնազանդեցաւ. այլ և երիցս և  
չորիցս նամակ օրհնութեան գրեցաք, և նա անտես  
արար . այլ իբրև իմաստուն գաղանն որ մտաւ ի

մայրն Եւայ և խարեաց զնա. և երթեալ մտանէ ի  
հոգեոր առաջնորդս և ի վարդապետս եկեղեցւոյ :  
Եւ հրամանաւ նոցս առնու հարսն որդոյ խրոյ ըզ  
դուստր տանումորոջ միոյ Ապան անուն վասն ազա-  
հութեան ախտից խաչիւ և պատարագօք զհաշտա-  
րարն Քրիստոս բարեխոս ունելով առ հայրն կամե-  
ցան յանցանօք պատուիրանացն բարիս առնել  
թողլով զհրամանս (Հայրապետաց) և Լուսաւորչին.  
և ընդդէմ կանոնաց նոցա կալ անհաղանդութեամբ  
խրեանց՝ բարեամս չար կամեցան առնել ընդդէմ  
Քրիստոսի կամացն. և ներողութիւնն Աստուծոյ  
ներեաց ամ մի :

Բայց յերկրորդ ամին կինն այն ծնանէր որդի, և  
եղեւ պատուհաս բարկութեանն Աստուծոյ ի վերայ  
նորա. գոչէր և աղաղակէր անմեղն և ասէր « ծնո-  
զաց իմոց յանցանքն մատնեցին զիս ի ձեռս դիւաց.  
օգնեա ինձ արարիչ Աստուած՝ և մի թողուր զիս ի  
ձեռաց » : Եւ եկեալ բազմութիւն քահանայիցն և  
ժողովրդեանն՝ առեալ խաչ և աւետարան. և աղօթս  
արարեալ ի վերայ նորա, ոչ եղեւնմա բժշկութիւն և  
ոչ հանդիսատ խոռովութեան դառն ցաւոց ապահնեալ  
ի դիւթս և ի կախարդս : Եւ նորա երթեալ փորեցին  
զգլուխ փողոցին աղտեղին և թաղեցին մինչ ի սա-  
րանոցն, և սուր առեալ ի ձեռս խրեանց աղաղա-  
կէին և հարկանէին զերկիր և ասէին « Եւ չար դե՛ ի

կնոջիս յայսմանէ » : Եւ բացեալ այլազգեացն ըգ  
բերանողրմելի և լաշի կնոջն՝ սրով ա՛արեկ առնէին.  
և ամենայն բազմութիւն քաղաքին հաւատացելոց  
և անհաւատից եկեալ տեսանէին հերարձակ և ողոր-  
մելի դիմօք կին մարդ ի մէջ հրապարակին : Եւ որ-  
պէս ուրախ եղեն ի յանցառոր ուրախութեանն,  
այնպէս անուրախ եղեն ի տառապանս աղքատին  
ողորմելոյ : Եւ ո՞վ կարէ պատմել զաղիողորմ կակիծ  
եղկելի աղքատին ի մէջ հանդիսական ատենին, զոր  
տեսողը և լողք լալով և ողբալով պատմեցին մեզ.  
և կացեալ սակաւ աւուրբք՝ աւանդեաց զհոգին. զոր  
խնդրեմք ի բարերար Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ  
ի բոլոր սրտէ թողցէ զյանցանս նորա բարեխօսու-  
թեամբ ամենայն սրբոց զի ոչ կամաւ էր մեղանչա-  
կան, այլ ակամայ :

Բայց ծնողաց իւր մեղադրութիւն ևս և ձեռնա-  
ւորին և թոյլ տուող առաջնորդին և խարտղիկ  
արեղայից, որ Տէր Աստուած Յիսուս Քրիստոս  
թողութիւն արասցէ նոցա յայսմ աշխարհա, և ի  
հանդերձեալ ատենին Քրիստոսի ազաշանօք սուրբ  
Աստուածածնին : Բայց աղաչեմ զվերջին եղբարսդ  
որ դայբ զհետ՝ եպիսկոպոսը և վարդապետը, երես  
ի գետին դնելով և հողացեալ մարմնով՝ այս սուտ և  
անցառոր կենացս համար մի նենգէք ի սէրն եղբայ-  
րական. զի ամենոցն որ ատէ զեղբայր իւր՝ մարդաս-

պան է. և սիրովն եղբայրական ծնանի սէրն աստուածական. և որ ոչ ունի սէր աստուածական ոչ կարէ միաւորիլ յԱստուածն պետական. զոր եւ հառաջմամբ սրախւ և ճշմարիտ հաւատով մաղթեմք ի Քրիստոսէ զի եղբարցն մերոց թողցէ զյանցանս որ ինչ ինձ գտեալ կան մեղանչական, զի և ինձ թողցէ զյանցանս որ ինչ առ Աստուած և առ եղբարս մեղանչական եղեալ եմ յամենայն կեանս իմ։  
**Վայ զիս :**

Իսկ յետ երից ամաց անցելոց եկեալ ձեռնաւորն ասացեալ ժողովեաց զսինդիքոր (43), զտառապեալ, զբաղցեալ և զմերկացեալ զմեր ժողովուրդս Փաջբերունեաց բերին ի յԱրձէց և ետուն ի ձեռս անօրինաց. եւ յամենայն զլիոյ պահանջէին 540 թանկայ ի կաղէ եւ ի կուրէ, ի ծերոց եւ ի տղայոց. եւ այնպիսիք են որ դրամի միոջ տէր ոչ էին :

Ի յ887 թուականին թագաւորն Ալբաց Ալէքսան անուն՝ դեղ մահու ետ իշխանին Պեղդինի (44). որդւոյն Սմբատայ Օրբէլեանց (45), թոռինն Բուրթելի, որ էր աներ իւր. վասն զի առեալ զամենայն կողմն Ախւնեաց եւ զամենայն գաւառս շրջակայ մերձ ի Ախւնիս աւելի քան զ60,000 քրիստոնեայ տունս, եւ ազատեալ ի Շահ-Ռուհէն (Արաց Ելւ թագաւորն առ երեսս ալատուեալ զնա տայ նմա զդղեակն Լոռու : Իսկ նա բարեալաշտ եւ երկիւղած գոլով, սի-

ըող կարգաւորաց, ողորմած եւ աղքատասէր առ  
ամենեսեան՝ ձայն տուեալ առ նա ժողովէին : Եւ  
նա զամենեսեան պատուէր եւ մեծարէր հացով եւ  
սեղանով եւ հանդերձով զամենայն դիմեալս առ նա  
յազգէս Հայոց : Իսկ արեանարբու գազանն եւ  
անգութն երկուցեալ ի նմանէ սին եւ մնոտի կար-  
ծեօք զի մի Հայք առ նա ժողովեսցին եւ սուերում  
լինի կողման Վրաց՝ մանաւանդ ի նենգութենէ շար  
իշխանացն, որպէս ի սկզբանէ նախանձու եւ առե-  
լութեամբ կորու սին զամենայն աղքա Հայոց, գաղտ-  
նի դեղ մահու տան ի յայր մի Ամսադին անուն  
յազգէս Հայոց խոստանալով նմա մեծամեծ պար-  
գեւա :

Եւ անօրէն, արեանարբու Կայէնն առաւել սիրեաց  
զնենգութիւն և զազգն քաղկեդոնսոկան քան զաստ-  
ուածապաշտ եւ զբարերարն աղգիս ուղղադաւան  
և ճշմարիտ հաւատացեալն. տայ նմա յանպատրաս-  
տից դեղ մահու ի ժամ կերակրոյն : Եւ նորա իմա-  
ցեալ՝ զղեղթափ խնդրեալ եւ ոչ ինչ օգտեալ  
աւանդեաց զհոգին ի ձեռու հրեշտակաց. և տարեալ  
եղին առ հայրն իւր Սմբատ եւ եղբայր իւր Ստե-  
փաննոս՝ եպիսկոպոս սուրբ ուխտին Տաթեւու, որ  
հանգուցեալ էին ի կողմն Վրաց փախառեամբ ի  
յայլազգեաց : Եւ սուգ մեծ եղւ ամենայն աղգիս  
Հայոց եւ յուսահաստութիւն սամենայն մերոյին ա-

զանց վասն զի ճիռ մի կայր ի մէջ ողլուղաց և աստղ  
մի՝ ի խաւար գիշերի և տեղիք ապաւինի ամենայն  
քրիստոնէից ազգիս : Եւ մնայ նմա եղբայր մի Շահ  
անուն՝ վարժեալ և սնեալ առ որովայնամոլ ազգին  
Վրաց : Եւ անարի գտեալ եւ ոչ ի խնդիր ելեալ  
հայրենի գաւառին : Եւ որդի մի փոքրիկ 10 ամաց  
աւելի եւ կամպակաս. որոյ յիշատակն օրհնութեամբ  
եղիցի, եւ թողութիւն մեղաց արասցէ՛ նմա Քրիս-  
տոս Աստուած զի ըստ նմանութեան Արելի մեռաւ  
ի դաւող եղբարց եւ նահատակեալ ի սուս եղբարց :

Եւ իշխանք նորու վրէծխնդիր եղեն անօրէն Ամ-  
նադնին ծայրակտուր արարեալ յոտից և ի մատանց.  
Եւ ոչ կարացին ի խոստ ածել զտուողն մահաբեր  
դեղոյն որ եհան զիշխանն մեր ի կենաց : Եւ ողոր-  
մածն Աստուած ներեաց նմա ամ մի. եւ յերկրորդ  
ամին 888 թուականին զարդար դատաստան իւր ի  
գործ է ած, այսինքն է եհար զավողծ և զարեանարրու  
թագաւորն ի գոգս սաստիկ եւ դառն հարուածով,  
որ յամենայն աւուր մեռանէր և նոր կենդանանայր.  
վայ եւ եղուկ գոչէր անձին իւրոյ, հաքիմնա (46) եւ  
բժիշկ ժողովէր, եւ ցաւն սաստիկ զօրանայր ի վերայ  
նորին : Եւ դարձեալ ի մէւս ամին 889 թուականին  
բարկացաւ Արարիչն Աստուած ի վերայ մերոյին  
ազգիս եւ ի վերայ չար թագաւորին եւ աշխարհի  
նոցին : Զի թագաւորն թաւրիզու եւ բռնաւոր իշ-

իանն Զահան-Շահ անուն զօր ժողովեաց, գումզո  
կազմեաց, եւ զշար առաջնորդն Արտասիլու եւ  
զամենայն դատի եւ զմուտառիս առեալ եկն ի վերայ  
տանն Վլրաց. եւ բազում անդամ դեսպան առա-  
քեաց գալ նմա ի հնազանդութիւն եւ զսովորական  
հարկն տալ նմա : Եւ նա ոչ կամեցաւ. այլ խստու-  
թեամբ պատասխանեալ ընդդէմ նորա :

Եւ զայրացեալ եկն ի վերայ բազմութեամբ ան-  
թիւ գորօք յաւուր մեծի Զատկին յանկարծակի եւ  
յանպատրաստ ժամու. և զանկեալս ի ձեռս իւրեանց  
գերեցին և զմեծամեծս սպանին. և խտար արարեալ  
նստան ի վերայ ամենայն Շամշուլտէ քաղաքին : Եւ  
մինչ ի Պէնտէկոստէի օր գալստեան Հոդույն սրբոց  
առին զՇամշուլտէ խարէութեամբ և երկիւղիւ.  
1,664 մարդոյ գլուխ ի դուռն քաղաքին միմարտոց  
չինեցին, և 9,400 գերի առին թո՞ղ զայնս որ ի յան-  
տառաց և ի մացառացն յափշտակեցին : Եւ 60 այր  
և սրբազն ողի ի կարգաւորաց քահանայից երկց  
և արեղայ և իշխան իրբեւ զոչխար ի դուռն քաղա-  
քին գենեցին, և զոմանց գլուխն ի չորս բաժանեցին,  
և զոմանց գլուխն ջախջախեցին, զոմանս ի հաւա-  
տոցն հանեալ սպանանէին, զոր քամ լիսի Աս-  
տուծոյ նոցա զայն ի մեզս համարել և զշնորհս աւա-  
զանին և զանապական արիւնն կորուսանել :

Աստ էր տեսանել զաղէտ տարտկուսանաց բրիս-

տոսական գնդին. զի քաջըն և արիքն սրտապնդեալ դաւանէին գՔրիստոս ճշմարիտ Աստուած ահագին գոչմամբ ի մէջ բազմութեան սատանայական գըն. զին. եւ երեսք նոցա փայլէին, իրեւ զերեսս հրեշտակաց երեւէին ըստ նմանութեան սրբոյն Ատեփաննոսի նախավկային : Եւ ո՞վ կարէ պատմել ըզ բօթ տարակուսանաց եւ զկսկիծ մորմոքման տառապեալ հայկազեան սեռիս : Ատեղծողն եւ Արարիչն Աստուած միսյն կարէ գիտել որ ստեղծ զնոսա . զի հայրն աղաղակէր առ որդին. վայ ո՛րդի՝ և որդին առ հայրն գոչէր լալագին պաղատանօք. վայ զիս հայր՝ մայրն առ դուստրն հայէր, եւ զարտասուան գետօրէն իջուցանէր : Եւ երկիր եւ աշխարհ ամենայն լցաւ դերեօք, լալով, սգով եւ կոծով, մանաւանդ միջասահման գաւառս մեր հայրենի. զի ամենեքեան փախուցեալք էին և անդ երթեալք. սյնալիսի փորձանաց եւ որոգայթից դիպեցան :

Այլ ի Մ'սր եւ ի Խորասան, ի Պաղտատ եւ ի Տամկաստան եւ յամենայն երկիր ցրուեալ ցնդեցան աղերս յղելով եւ զղերին ծանր գնոջ վաճառելով. եւ զայսալիսի կորուստ մեր պարծանս անձանց համարէին եւ ասէին բարձր ձայնիւ. ո՞ւրէ Քրիստոս Աստուածն նոցին. թո՛ղ գայ եւ փրկեսցէ զհաւատացեալս իւր : Այլ վայ եւ եղմակ է ինձ հաղարանգամի մի բերան. զի զօր անդթութեան մեղացն

ի դատաստանի աւուրն այսօր ի քաղաքիս մեր տեսաք. զի ամենայն գերին ի 1,000 թանկայ վաճառէին. Եւ ս'յնքան յազբատութիւն անկեալ կամք ամենայն ազգս, քաղաք եւ գիւղք, վանք եւ ագարակ զի մին քաղաք եւ մին գիւղ գերի մի գնել ոչ կարէ վասն դառն աղբատութեան տառապանաց. այլ սուգ եւ ողը ի բերան տոեալ՝ աղիողորմ դառնութեամբ եւ լալագին հեծեծանօք լամբ եւ ողբամբ զկորուայր մեր. զի անմեղ մանկումք գնեալ արեամբ Քրիստոախ, ժողովուրդ, սուրբ գառինք եւ անարատ հարսումք մատնեալ անօրինաց՝ իսպառ կորեան. Եւ ոչ ոք էր որ օգնէր, եւ ոչ որ ի թիկունս հասանէր :

Այլ անտի չուեալ գնացին ի վերայ Տփոյլա փայտակարան քաղաքին, եւ զամենայն եկեղեցին զին եւ նոր, շինեալ ի յառաջին թագաւորացն, ի հիմանց տապալեցին, զնշան Տեառն ի վայր արկանէին, եւ հանեալ զսուրս իւրեանց ի վերայ եկեղեցեացն տարածանէին ահագին գոչմամբ և սաստիկ որոտմամբ : Մինչ զի յահէ եւ յերկիւղէ նոցա սարաէր և գողայր ամենայն լեռնականք եւ դաշտականք. Եւ սուր ի ձեռին արլիք եւ անարիք եւ ջոկապանք մտանէին ի մայրիսն եւ ի ծերապս եւ ի ծակս վիմաց : Եւ զկին եւ զորդիս նոցա հանեալ անտի՝ գերի վարէին ի բազում աւուրս : Եւ անսրի եւ որովայնամոլ, արլեցող եւ լապաստակեր ազգն Վրաց, որ հանապազ ի

գիներրուս նստեալ պարծէին յազթող մինել ի վերայ ամենայն ազգաց, նետիւ միով մարդ մի խոցելոչ կարացին. այլ տեսեալ զոմանս ի մէջ ալրակի՝ գաղտագողի առ միմեանս ահիւ եւ դողութեամբ ասէին « ահա Թուրքման, ահա Թուրքման » : Եւ ահա ինքեանք մազապուրծ եղեալ՝ զորդիս իւրեանց ի ձեռս անօրինացն մտանէին : Եւ ուստի մեր հանապազ յոյս ի Վրացիան ունելով պարծէաք ի մէջ անօրինաց, յայնմանէ յուսահասոեալ՝ առաջի անօրինաց ափիրերան եղաք : Կատարեցաք զբան մարդարէին որ ասէ « անիծե՛ալ մարդ, որ դիցէ զյոյս իւրի մարդ » . եւ մի յուսայբ յիշխանս զի ոչ գոյ փրկութիւն » : Եւ այլ օգնական ոչ գոյ մեր բայց միայն Տէր Յիառա Քրիստոս, որ եղ զանձն ի վերայ սուրբ եկեղեցւոյ իւրոյ խաչիւ եւ չարչարանօք :

Եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց, մանաւանդ վասն հայհոյոթեան յիշոցատուաց եւ վասն ծուլութեան, անաղօթ կալցն եւ ատելութեան եւ անսէր գոլոյն առ ամենեսեան եւ անուղղայ քահանայութեան :

Եւ պիղծ բոնաւորն դարձեալ կոչեաց առ ինքն զշար առաջնորդս հաւատոյն իւրոյ եւ ասէր « եթէ այլ որ յաւաշին թագաւորացն մերոց զայսպիսի բարի գործս եւ արիութիւն գործեած էին » : Եւ նորա ասեն « ոչ՝ դուք առաւել բան զիեղամբէրն

պատուոյ եւ փառաց էք արժանի» : Եւ ասէ պիղծ  
շէլսն Արտավիլու «դինչ չարկը որ գործեալ էիք,  
եթող Աստուած, եւ եօթն տարւոյ, զոր ինչ գոր-  
ծէք, թողեալ լիցի. բայց խրատ մի տամ քեզ եթէ  
զառաջնորդն մեր հայկոյեցին նորա՝ կունտ եւ քաշու  
անուն տային, հարկ եւ խարաճ դիր ի վերայ ամե-  
նայն քրիստոնէից զի ուրանան զՅիսուս Քրիստոս  
եւ դարձյին դորա յօրէնս մեր» : Եւ նորա եղին  
խարաճ եւ հարկս մեծամեծս ի վերայ ամենայն աղ-  
գիս թերեւս վասն բազում նեղութեանց դարձցին ի  
կրօնս մեր, զոր Տէր Յիսուս վաղվաղակի բառնայ ըզ  
սոսա ի միջոյ, եւ դատաստան ուզիղ արասցէ ընդ  
մեզ եւ ընդ սորա, (որք) ամենեւին կորուսին զսգ-  
գըս իւր : Ութ հարիւր ամին (47) Հայոց լիցի օգնական  
և կորուսցէ զնոսա որալէս զԳուգ եւ զՄագոդ եւ ըզ  
Հռափասակ եւ զՅեներերիմ եւ զամենայն չար թա-  
գաւորա աշխարհաց : Զի որ ընդհարցի ընդ վիմին  
Քրիստոսի փշրեսցի աստ եւ փշրեսցի ի հանդեր-  
ձեալն ազգօք եւ ամենայն ժողովրդօք : Եւ բարձրա-  
ցուցէ զեղջիւր թագաւորաց Քրիստոնէից բարե-  
խօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին և ամենայն  
սրբոց երկնաւորաց և երկրաւորաց, մանաւանդ նոր  
եւ ընտրեալ մարտիրոսաց, քաջ եւ արի նահատա-  
կացն հեղմամբն արեանց Շամշուլտէ ուլորմելի քա-  
ղաքակցաց : Եւ ի ձեռն սոցին բարեխօսութեան եւ

մաղթանաց Տէր Յիսուս թողութիւն արա մեզ եւ  
ծնողաց մերոց եւ հարազատաց եւ ամենայն հայկա-  
զեան սեռիս կարգաւորաց եւ աշխարհականաց եւ  
ամենայն քրիստոնէից. ամէն :

## ՎԵՐՋ



# ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ

## ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

### ԹՈՎՄԱՅԻ ՄԵԾՈԲԵՑԻՈՅ :

1. Լանկէ բառ Պարսիկ առ որս գրի լէնկ եւ նշանակէ կաղ : Պարսք եւ այլ արեւելեայք կարդան զնա Թիմուր-Լէնկ, Թիմուր-Բէկ կամ Էմիր-Թիմուր (Թեմուր՝ երկաթ), Եւրոպացիք՝ Թամերլան, և Հայք՝ Լանկ-Թամուր :

2. Անհիմն է ըստ ամենայնի բան Թովմայի որ համարի զԼանկ-Թամուր ծնեալի Հայս, ի Սարթափ առ սահմանօք Մասեաց : Բռնաւորա այս ծնաւ ի Կէշ Մավլարաննահրի ոչ հեռի ի Սմրդանդայ, յամի Տեառն 1335, եւ Հիջրեթի 736. եւ մեռաւ ի 1405 ամին : Եր ի սերնդոց Զինկիզ-Խանի ի կանանց կողմանէ : Իրրեւ մեռաւ Աէրֆ-Խոդին՝ հօրեղբայր իւր, յամին 1360, ինքն անց ի գլուխ Բերլան՝ ցեղին Թաթարաց. եւ երեք ամօք զկնի միաբանեալ ընդ Հուաէյնի ընկէց զորդին Թօվլուկ-Թիմուր Զաղաթայի եւ խոցեալ յոտս կոչեցաւ լանկ : Վեց ամօք զկնի զՀուաէյին եւս ընկեցեալ յիշխանութենէ ինքն միայնակ եկաց Տէր Բահի եւ փոխադրեաց զաթու իւր ի Սմրդանդ յամին 1370 : Աստի սակաւ առ սակաւ ընդարձակեալ ձգեաց զտէրութիւն իւր եւ

կալաւ զիսարիկմ, զկաշդար, զիսորասան, զՊապա-  
կաստան եւ այլն :

3. Է բառ Թաթարաց, նշանակէ իշխան, արքայ:
4. Երրորդն օրինակաց Արբոյն Ղազարու ուխ-  
տին ունէր 510. մերն՝ լոկ հոգետասան. մեր եղաք  
ըստ օրինակի կայսերական գրատանն 545 :
5. Շահ-Մանառուր էր ի Մօղաֆֆերեան ցեղէ  
(Մօղաֆֆեր), որ տիրեցին ամս իրրեւ 50 Ֆարսիա-  
տանի եւ Վուշաստանի. յոյժ քաջութեանի մար-  
տեաւ ընդդէմ բռնաւորին Թամուրայ երկիցս  
խորտակեալ գրանակ Թաթարացն, եւ ի վերջոյ  
յազթեալ ի բազմութենէն՝ անկաւ. եւ բալոր  
Պարսկաստան նուաճեցաւ ընդ լծով բանաւորին  
յամի Տեառն. 1393 :
6. Այլ ամենայն օրինակը « ի ձի երիւա-  
րին » :
7. Համար զօրու Շահ-Մանառուրին, ըստ աւան-  
դելոյ պատմագրաց Պարախ էր 3-4,000 այրու ձի  
ընտիր :
8. Աւելորդ կրկնութիւն է վարելն զլսանկ և կաող  
բառան. քանզի, որպէս ասացաւն ի վերսյ, լինկն  
պարսկերէն է եւ թարդմանի ի մեր լեզու կաղ :
9. Երրորդ եւ չորրորդ օրինակը Արբոյն Ղազա-  
րու ունէին « որ Տօղոողան անուն կոչէին » :
10. Չորերին օրինակը Արբոյն Ղազարու ունէին  
14.

« յորում » զոր վրիպակ համարեալ եղաք ըստ մերոյն որ :

11. Ոմանք յանուանց ութն կարծեցեալ ցեղից Վրաց ստոյգ են եւ կան ցարդ եւս. այլը խանգարեալ են եւ անստոյգ : Վրացիք, Մինգրէլը (զոր Մեծոբեցին գրէ Մէգրել) և Խմերելը են տիրապէս համազգի. այլ ոչ Օսք զորս համարեցան ոմանք մնացորդս կին Սարմատաց, այլք՝ հատուածս Մեդաց և Հայոց, կէաք՝ Ալանս կամ Ասս միջին դարու։ Դրալանուամբ, որչափեւ խոյզ արարի, չիքցեղ կամ ժողովուրդ ի լերինս Կովկասու, եթէ չիցէ աղաւազութիւն Դվալի յանուն որոց կոչէր ի ճումն կապանն Դարիէլի : Ավիկազք կամ Արազը չեն յազգէ Վրաց, այլ որիշ եւ հինօրեաց բնակիչք Կովկասու ունելով բարբառ եւ բարս սեպհական, իւ ծանօթ Արրիենի եւ այլ մատենազրաց Հումհոյեցւոց եւ Յունաց յ2,000 ամաց հետէ : Սասլէս եւ Սօնք, զորս նախնի մատենագիրք կոչէին Սաննի, եւ արդիք՝ Սուանս : Մնայ Մեսիսն որ համարի այլ այլութիւն արդեան Մեծջեղի (Մէջէղ) , որ է նոյնական առանձին ժողովուրդ Կովկասու կոչեցեալ ի մերոց մատենազրաց Քուստ, ի Վրաց՝ Քվատ, եւ ի Ռուսաց՝ Ջեշեն :

12. Մերն « խիլայեց » նշանակէ գգեցուցանել ումեր պատուոց հանդերձ :

13. Օրինակն կայսերական գրատան «ի ժողովասար» :

14. Զարութիւն հայ դիցաղնուհւոյն ոչ երկաթագրով. այլ ոսկի տաւիւք դրոշմելի էր և ամեն հայ կանանց բաշխելի իրրե օրինակ նմանութեան. որոյ նմանն ոչ առ Յոյնս, ոչ առ Հռոմայեցիս եւ ոչ յայլ ամենայն աղքա գործեցաւ երրեք : Հայ դիցաղնուհին մեռաւ, այո՛, այլ մահ իւր փառք է ազգի մերում. գահավիժ արար դինքն, այո՛, այլ ամբիջ պահեաց զալատիւ իւր, գկրօն եւ զազգայնութիւն : Արչափ երջանիկ լինէր աալարէն Հայաստան, եթէ մին ի հարիւր որդւոյ իւրոց և երկուք ի հազար դատերց իւրոց զնոյն բերէին յանձինս իւրեանց զառաքինութիւն, որով փայլեցաւ Աշեցի քաջուհին :

15. Շահ-Ռուֆն է այլայլութիւն Շահ-Ռիօրին՝ որդւոյ Լանկ-Թամուրի, որ առ կենդանութեամբ հօրն եկաց կուսակալ Խորասանի. և յետ մահունորա կայսերացեալ ի Սմրդանդ յամի Տեառն 1408<sup>1</sup> հանդիսացաց աշխարհաշինութեամբ, ուսումնասիրութեամբ եւ բարեխնամ սնտեսութեամբ իւրոյ տէրութեան : Անուաւյամին 1446. որում յաջորդեաց Ուլուկ-Բէդ՝ որդի իւր :

16. Մեծորեցին անխտիր վարէ «վայ լնձ եւ վայ զիս » :

17. Զորբորդ օրինակն Արբոյն Ղազարու « գար-  
շութեամբ հոտոց » :

18. Զանիծից մեծին Ներսիսի Պարթեփ գրեալ  
եմք ընդարձակագոյնս ի վարս Խաչատուր վարդա-  
պետի՝ միաբանի սուրբ Կարապետի վանիցն Խւչ-  
քիլիսէի, որ ի սկզբան դարուս երեւելի հանդիսացաւ  
սրբակրօն վարուք, մանաւասնդ՝ գովանի քաջու-  
թեամբ ի պատերազմունս ընդդէմ Քվղաց եւ  
Պարսից. եւ ի վերջոյ դաւանօք կալեալ ի խանէն  
Երեւանայ՝ տարաւ ամս 7 սոսկալի տանջանսց եւ  
հանգեաւի Փրիստոս խոստովանողական մահուամբ:

19. Զորերին օրինտկք Արբոյն Ղազարու վի սուրբ  
ուխտն եւ ի շնորհալից ուխտ եւ յաթոռ Ստաթէի  
Առաքելոց » :

20. Ա, Բ և Գ. օրինակք Արբոյն Ղազարու « առաջի հայրա-  
պետուցանէր » :

21. Ա. օրին. Արբոյն Ղազարու « առաջի հայրա-  
պետին » :

22. Զորերին օրին. Արբոյն Ղազարու « վարդա-  
պետս եկեղեցւոյ » :

23. Զորերին օրին. Արբոյն Ղազարու « անմիւ-  
թար » :

24. Մերտին ոչ առաւ յայսմ նուագի ի Լանկ-  
թամուրայ : Խատ-Թահեր՝ իշխան բնողին, որ էր  
ի ցեղէն Օրթոկոյ, քաջութեամբ դիմադրուս եղեալ

վանեաց զյարձակմունս Թաթարաց. և ապա ի հաշ-  
տութիւն եկեալ խոստացաւ տալ հարկս Լանկ-Թա-  
մուրայ եթէ ի բաց երթիցէ խաղաղութեամբ. որով  
եւ ազատեցան սրաշարեալքն ի բերդին Քրիստո-  
նեայք և Մահմետեանք :

25. Զորեքինօրին. Արբոյն Ղաղարու 700 և 500 ։

26. Զորեքին օրինակը Արբոյն Ղաղարու լոկ  
«Խար արար »։

27. Զորեքին օրինակը Արբոյն Ղաղարու « Երա-  
նութեամբ »։

28. Թուականն 850, որով վարի Մեծորեցին ի  
ցուցանել զակիզբն արշաւանաց Լանկ-Թամուրայ  
յԱսորիս տարբերի երկու ամօք ի ցուցելոցն յայլ  
պատմագրաց որք զնեն զայն յեւ Հոգտեմբերի 1400  
ամի Տեառն :

29. Խոնդքեար Խլորում կոչեցեալն ի Մեծո-  
րեցոյն է Սուլդան Բայազիտ Խլորում (կայծակ)  
Օսմանցւոց, որոց հաստատեալ զաթոռ իշխանու-  
թեան իւրեանց ի Բքուսա՛ ունէին զփորր Ասիա :  
Ճակատն ընդ մէջ Լանկ-Թամուրայ եւ Բայազիտ  
Խլորումի եղեւ յամին 1402 ի սահմանս Անկիւրիոյ,  
յորում յաղթող գտեալ առաջնոյն՝ գերի կալաւ  
զերկրորդն, և կացոյց ի Ռումելի զանգրանիկ որդին  
նորա զԱխլէման Սուլդան Օսմանցւոց. կալաւ զԱռ-  
սիա փոքր բովանդակ հանդերձ Զմիւրին քաղաքա-

առեալ զայն յասպետացն Ռողի : Դեռ դարձ արարեալ Լանկ-Թամուր ի Կոնիա՝ լուաւ զմահ Սուլդան Բայազիտի յԱկ-Շէհիր յամին 1403. եւ զՄուսա՝ զորդի նորին, հանեալ ի բանտէ կացոյց ի տեղի հօրն Սուլդան Օսմանցւոց Ամիսկան կողմանցն :

30. Մեծորեցին խանգարէ աստանօր եւ այլուր զիարգ աշխարհակալութեանց Լանկ-Թամուրայ : Վասնդի աշխարհաւեր գազանս այս թագավարսակ ոչ երկիցս ա՛ռ զՀնդկաստան եւ զԴեչի. այլ միանգամ եւ եթ. եւ այն ոչ զկնի կործանելոյ զտէրութիւն Սուլդան Բայազիտի, ըստ Մեծորեցւոյն, այլ 6 ամօք յառաջագոյն. այսինքն նախ Լանկ-Թամուր արշաւեաց ի Ռուսիա կամ յերկիր Թօխթամիշ խանին Ղպչաղաց յամին 1391 ի մասս Յուլիսի. որ յետ տիրելոյ Սարայ մայրաբաղարին դարձաւ ի Պարսս զսպել զապստամբան : Ի 1394 ամին ա՛ռ զԲաղդատ, ուր կանգնել ետ կոթող 90,000 գլխոց մարդկան, զԲարա, զՄօսուլ զԴիարբէրիր, զՀայս, զՎիրա . եւ միւսանգամ արշամալ ընդ կապանն Դարրանդի յերկիր Ղպչաղաց յամին 1395 եհար զԹօխթամիշ եւ թագաւորեցոյց զկորիչոյ՝ որդի Ռոռու-Խանին եւ անցեալ ընդ Դօն ասպատակեաց մինչեւ ի սահմանոց Մոսկվայի. ուստի դարձ արար ի գարնան 1396 ամին ի Սմրդանդ : Եւ ի 1398 խաղաց ի վերայ Հնդկաց, ետ ճակատու